Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

V

25

Ն. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

9353

ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԻՊ

Պատկերներով եւ նորանոր վարժութիւններով

ԹԻՖԼԻՍ
Արարատիպ Մն. Մարտիրոսեանցի
Պուշկինեան փողոց, № 12.
1903

Дозволено цензурою. Тифлисъ, 8 Февраля 1903 г.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Մայրենի Լեզուի» երկրորդ տարին տասնեվիններորդ անգամ տպագրութեան ենք տալիս։ Առանց դաւաճանելու մեր նախագաղափարին, այս անգամ գիրքը ենթարկում ենք նոր խմբագրութեան։ Գրքի ըսկզբում, որպէս նախապատրաստական շրջան, դնում ենք մի շարք դիւրին նիւթեր նախնական ընթերցանութեան համար։ Այստեղ, ինչպէս և յաջորդ շրջաններում, ամեն մի յօդուածից յետոյ բերում ենք նրան համապատասխան մի մանկական ոտանաւոր։

Հետևեալ շրջաններում յօդուածների դասաւորութիւնը որոշ խումբերի, որոշ սիստեմայի ենք ենթարկում. այսպէս, օրինակ, երկրորդ շրջանի յօդուածները վերաբերում են ընտանեկան և դպրոցական կեանքին. երրորդ շրջանի յօդուածները առնուած են կենդանական աշխարհից. չորրորդ շրջանի նիւթերը վերցրած են բուսական աշխարհից և, վերջապէս, հինգերորդ շրջանի նիւթերը պատում են տարուայ չորս եղանակների շուրջը։

Ամեն մի շրջանից յետոյ դնում ենք մի մանկական հէքիաթ։ Այս հէքիաթները թէև առնուած են ռուսերէնից, բայց նոքա, առանց բացառութեան, պատմում են և մեղանում։ Այդ հէքիաթների այս կամ այն ձևափոխութիւնը ես լսել եմ իմ հանգուցեալ մօրից։ Վերջին շրջանից յետոյ դնում ենք «Սասունցի Դաւիթը»։ Այդ նիւթը մշակելիս հէնքը վերցրել ենք պ. Ճաղարբէգեանի հիւսուածքից, բայց ամբողջութիւնը պատմել ենք բոլորովին ինքնուրոյն կերպով։

Գրքի սկզբում (առաջին և երկրորդ շրջաններում) ամեն մի յօդուածից յետոյ դրել ենք նիւթեր գրաւոր վարժութիւնների համար, նաև տուել ենք երկրորդ տարուայ քերականական վարժութիւնների պաշարը։ Հետևեալ շրջաններում ուսուցիչներն այդ վարժութիւնները պիտի կրկնեն և ընդարձակեն, տեղի ու ժամանակի հետ յարմարուելով։

Յօդուածների ընտրութիւնը, միաժամանակ բոլոր շրջաններից օգտուելու հմտութիւնը յանձնուում է վարժապետների իմաստութեանն ու խոհեմութեանը։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՑԼՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

1903 թ. փետրուարի 3-ին
Թիֆլիս։

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ Բ. ՏԱՐԻ

ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ

Թեթև նիւթեր նախնական ընթերցանութեան համար։

1. ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Ես փոքրիկ մանուկ էի. տեսնում էի, որ հայրս, գիր կարդալիս, ակնոց է դնում աչքերին։ Մի օր ես խնդրեցի, որ ինձ համար էլ ակնոց առնի. «Ես էլ քեզ պէս ուզում եմ կարդալ», ասացի։ Միւս օրը հայրս բերեց ինձ համար մի պատկերազարդ գիրք։ Սա հայերէն այբբենարան էր։ «Ահա սա է քո ակնոցը, որդի», ասաց հայրս։ Այնուհետև մայրս ինձ կարդալ-գրել սովորեցրեց։

Գրեցէք հետևեալ բառերի նշանակութիւնը՝ **մանուկ, ակնոց, պատկերազարդ, ահա, այնուհետև...**

Նկատեցէք հետևեալ բառերի ուղղագրութիւնը՝ **հայերէն, ռուսերէն, վրացերէն, թուրքերէն...**

Գրեցէք և զանազանեցէք՝ **բան, պան. բատ, պատ. բաղ, պաղ. բահ, պահ. բանիր, պանիր...**

2. ԿԱՐԳԱԼ-ԳՐԵԼ

Երբ որ լեզուս բացուեցաւ,
Ազատ խօսիլ սովրեցայ,
Բարի մօրս ձեռքի տակ
Գրել-կարդալն ըսկսայ։

Շատ ժամանակ չանցկացած՝
Այլևս գիր կարդալը
Այնպէս դժուար չէր թւում,
Ինչպէս կ'ասեն ծոյլերը։

Այնուհետև ինձ համար
Հոլ-վէգի, գնդակի չափ
Սիրելի են թուղթ, գրիչ,
Գիրք, քանոն, մատիտ, տետրակ։

Գրեցէք հետեւեալ բառերի նշանակութիւնը՝ ազատ, բարի, այլևս, թւում էր։

Ցիշեցէք եւ գրեցէք ձեր գիտեցած դասական առարկաների եւ խաղալիքների անունները։

3. ԱՄԵՆ ԲԱՆ ԻՐԱՆ ՏԵՂԸ

Հայկը ծոյլ տղայ չէր, բայց կարգ ու կանոն չէր սիրում։ Երեկոները, դասերը սովորելուց յետոյ, նա իւր գրքերն ու տետրակները թողում էր թափթրփած ու ցրիւ տուած. առաւօտներն

էլ, երբ որ վեր էր կենում, ժամերով որոնում էր իւր շորերը կամ ոտնամանները։ Ամենայն օր այս ու այն կողմն էր ընկնում Հայկը և միշտ դասից ուշանում էր։

Գրեցէք հետեւեալ բառերի նշանակութիւնը՝ ծոյլ, ջանասէր, ժամերով, որոնում էր։

Նկատեցէք հետեւեալ բառերի ուղղագրութիւնը՝ առաւօտ, երեկոյ, կէսօր, կէսգիշեր. ժամ, ժամացոյց. ժամ, ժամաւոր, ժամասէր։

Գրեցէք եւ զանազանեցէք՝ կար, դար. կող, գող. կուտ, գութ. կիր, գիր. կէտ, գետ. կալ, գալ։

4. ՏԽՈՒՐ ԵՐԵԽԱՑ

Երբ որ ծագեցաւ պայծառ արեգակ,
Աքլոր, աղաւնի, հաւ ու ծիծեռնակ,
Ձի, ոչխար, գառնուկ, այծ, ուլ, հորթ ու կով
Գընացին իրանց գործին ըշտապով.
Միայն ծոյլ տղան չըգնաց դպրոց,
Գիրքը շըպրտեց ու փախաւ փողոց.
Իրիկունն ամենք յետ դարձան ուրախ,
Միայն տըղան էր տրտում, գլխակախ։

Գրեցէք հետեւեալ բառերի նշանակութիւնը՝ ծագեցաւ, աղաւնի, ուլ, դպրոց, տրտում, շտապով, գլխակախ։

Ցիշեցէք եւ գրեցէք ձեր գիտեցած շորքոտանի կենդանիների անունները։

5. ԻՄ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԴՆԱԼԸ

Սեպտեմբեր ամիսն էր։ Հայրս ասաց, որ ինձ պէտք է ուսումնարան տանեն։ Ես շատ ուրախացայ. վաղուց ուզում էի ուսումնարան գնալ։ Հայրս ինձ համար մի պայուսակ գնեց։ Ես նրա մէջ դասաւորեցի հարկաւոր առարկաները։ Մենք ուղևորուեցանք։ Ես ուսումնարան չէի տեսած։ Սիրտս թնդում էր։ Ութը ժամին մենք հասանք մի մեծ շինութեան և բակի դռնից ներս մտանք։ Բակում շատ մանուկներ կային. ոմանք խաղում էին արձակ-համարձակ, ոմանք էլ գլխակոր կանգնած էին իրանց ծնողաց հետ։ Մենք ներս մտանք ուսուցիչների սենեակը։ Ես երկիւղի մէջ էի. բոլորը նոր մարդիկ էին. ոչ մէկին չէի ճանաչում։ Ուսուցիչների գլխաւորը—տեսուչը նկատեց իմ շփոթմունքը, մօտ եկաւ, փայփայեց ինձ։ Ես սրտապընդուեցայ։ Յետոյ ինձ քննեցին և ընդունեցին աւագ նախակրթարանը։

Բառեր՝ պայուսակ—քսակ, սումկայ. դասաւորեցի—դասսեցի, տեղաւորեցի. ուղևորուեցանք—ճանապարհ ընկանք. բակը—գաւիթը, հայաթը. ոմանք—մի քանիսը. գլխակոր—գլուխը կախ գցած. երկիւղ—վախ. աւագ նախակրթարան—մեծ պատրաստական դասատուն։

Մնացած բառերը ինքներդ ջոկեցէք եւ գրեցէք։

Գրեցէք եւ զանազանեցէք՝ կող, քող. կար, քար. կաղ, քաղ. կոյր, քոյր. կամ, Քամ։

6. ՄԱՆՈՒԿԸ ՕՐԵՒԻՆ

Նախշո՛ւն արև,
Հաղա՛ր բարև.
Այս ո՞ւր էիր շա՛տ-շա՛տ օրեր
Ամպերի տակ մրտել, կորել։
Մի՞թէ դու էլ, յամառ մանուկ,
Գիտես պահուիլ այդպէս գաղտուկ.
Հերիք, ա՛րև, մեզ խռովես,
Էլ չըփախչես, հոգիդ սիրես։

Բառեր՝ յամառ—իր ասածի, կամակոր. պահուիլ—թաքկենալ. գաղտուկ—ծածուկ. խռովիլ—նեղանալ, չխօսելու չափ վշտանալ. խռովել—նեղացնել, չփոթեցնել. մեզ խռովես—մեզ չփոթեցնես, անհանգիստ անես։

Զանազանեցէք հետեւեալ բառերի ուղղագրութիւնը՝ համար, յամառ. հետ, յետ. հատիկ, յատակ. հատու, յատուկ։

7. ՄՐՋԻՒՆԸ ԵՒ ԱՂԱՒՆԻՆ

Մրջիւնը մօտ գնաց առուակին, որ ջուր խմէ։ Ջրի ալիքը ներս քաշեցին նրան եզերքից։ Մրջիւնը խեղդւում էր։ Աղաւնին օգնութեան հասաւ. նա մի չոր տերև առաւ, գցեց մրջիւնի առաջ։ Մրջիւնը վեր բարձրացաւ տերևի վրայ և խեղդուելուց ազատուեց։

Երկար ժամանակ չանցաւ։ Որսորդը՝ հրացանը ձեռին, մօտեցաւ առուակին։ Աղաւնին անհոգ նստած էր ծառի վրայ։ Որսորդը հրացանի բերանն ուղղեց դէպի նա։ Մրջիւնը մօտ վազեց և կծեց որսորդի ձեռքը։ Որսորդը ցնցուեց. հրացանը տրաքեց, բայց չդիպաւ աղաւնուն։

Բառեր՝ մրջիւն, առուակ, ալիք, եղերք, որսորդ, հրացան, անհոգ, ցնցուիլ։

Ցիշեցէք եւ գրեցէք ձեր գիտեցած վայրենի թռչունների անունները։

Գրեցէք եւ զանազանեցէք՝ դաս, տաս. դար, տար. դեղ, տեղ. դուր, տուր. դա, տայ։

8. ԱՌՈՒՂՂՆ ՈՒ ՀՈՒԼԸ

«Ծուղրուղռ, սանամէր,
Էն մէկ հաւ կար, ո՞ւր գնաց»։
—Ծարաւ աղբիւր կուլ գնաց։
«Ի՞նչ կար կըտուց»։
—Շիր ու չամիչ։
«Ո՞ւմ էր տանում»։
—Հարս ու փեսին։
«Ո՞ւր էր հարսը»։
—Ոսկէ թախտին։
«Ի՞նչ էր եփում»։
—Համով կորկոտ։
«Ո՞վ էր բերել»։
—Քաչալ Ակոբ։

«Ո՞վ էր հարել»։
—Աղայ Սուլթան։
«Ո՞ւր էր դրել»։
—Բաց պատուհան։
«Ո՞վ է կերել»։
—Սեւիկ փիշիկ։
«Վայ սեւիկ փիշիկ, վայ սեւիկ փիշիկ,
Քո մէրն ուտի քո թշիկ։

Բառեր՝ սանամէր, սանահէր, կտուց, շիր ու չամիչ. կորկոտ—ձաւար և նրանից ու մսից եփած կերակուր (քեաշկայ)։

Գրեցէք ձեր գիտեցած ընտանի թռչունների անունները։

9. ԱԳՌԱՒԸ ԱՂԱՒՆԵՏՈՒՆԸ

Ագռաւը տեսաւ, որ աղաւնիներին լաւ են կերակրում, ուզեց ինքն էլ աղաւնի ձեռնալ. սպիտակ փոշի ցանեց վրան և մտաւ աղաւնետուն։ Աղաւնիները կարծեցին, թէ սա էլ իրանցից է, ներս ընդունեցին։ Բայց ագռաւը մոռացմամբ կռաւեց իւր ձեւով։ Աղաւնիները կտցահարեցին և դուրս խռկեցին։ Ագռաւը վերադարձաւ իւր ընկերների մօտ, բայց սրանք էլ չընդունեցին նրան, որովհետև գունափոխուել էր։

Բառեր՝ ձեռնալ—նմանուիլ, դառնալ. ցանեց—ածեց, շաղ տուեց. փոշի. ընդունեցին. մոռացմամբ. վերադարձաւ. գունափոխուել էր։

Նկատեցէք հետեւեալ բառերի կազմութիւնը՝ աղաւնետուն, կոցահարել, գունափոխուել, վերադառնալ։

Գրեցէք եւ զանազանեցէք՝ մեխ, մեղ. ցխ, օղ, ողկախ, կաղ. սոխ, սող. ուխտ, ուղղ. ախտ, աղտ.

10. ԿՐՈՒՆԿՆԵՐ

Կըռ-կըռ-կռկըռան
Կըռունկները հա՛ թըռան.
Կըռունկների թեւի տակ
Եկաւ ամառ մեր դռան։

Գրեցէք ամիսների եւ ապա տարուայ եղանակների անունները։

Գրեցէք գարնանային, ամարային, աշնանային եւ ձմեռային ամիսների անունները։

Գրեցէք եւ զանազանեցէք՝ ուր, ուռ. սեր, սեռ, սէր. սար, սառ. գառը, կարը, քարը. արու, առու. արատ, առատ. արեգ, առէք։

11. ՕՁԻ ԳԼՈՒԽԸ ԵՒ ՊՈՉԸ

Մի անգամ օձի պոչը վիճեց գլխի հետ, թէ իրանցից որը պէտք է առաջից գնայ։ Գլուխն ասաց. «Դու չես կարող առաջից գնալ, որովհետեւ ո՛չ ականջներ ունիս և ո՛չ աչքեր»։ Պոչն ասաց. «Ականջներ ու աչքեր չունիմ, բայց ոյժ ունիմ և ես եմ քեզ շարժողն ու ման ածողը։ Եթէ կամենամ, կըփաթաթուեմ ծառի շուրջը և

դու մի քայլ անել չես կարող»։ Գլուխն ասաց. «Ուրեմն բաժանուենք»։ Եւ բաժանուեցին։

Պոչը պոկ եկաւ գլխից և սկսեց առաջ սողալ. բայց հէնց մի փոքր հեռացաւ թէ չէ՝ ընկաւ մի ճեղքի մէջ ու սատկեցաւ։

Բառերը՝ վիճեց, ոյժ, շուրջը, քայլ, սողալ, ճեղք։

Գրեցէք ձեր գիտեցած սողունների անունները։

Գրեցէք եւ զանազանեցէք՝ օձ, օծ. ձեր, ծեր. ձագ, ծակ. ձոր, ծոր. ձեծ, ցեց. ծիծ, ցից։

12. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Աչքեր ունի, ոտքեր չունի,
Մարդ կը սպանէ, ձեռքեր չունի,
Ջու է ածում, փետուր չունի,
Շապիկ ունի, որ կար չունի։

Զորս ոտք ունիմ՝ կարճ ու կոկիկ,
Գլուխ ունիմ՝ ինչպէս գորտիկ.
Մարդ տեսնելիս սիրտս է դողում,
Ոտք ու գլուխս չի երեւում։

13. ՎԱՐԴԵՆԻՆ ՈՒ ՓՈՒՇԸ

Վարդենին ու փուշը բուսել էին միատեղ։ Մի օր փուշն ասաց իւր գեղեցիկ հարևանին. «Բարեկամ, քո համբերութիւնդ ինձ զարմացնում է.

չգիտեմ՝ ինչո՞ւ չես պատժում քո փշերով այն մեղուներին, որոնք այնպէս տզտզալով հօտդ ու հիւթդ ծծում են»:

—Ինչո՞ւ պատժեմ, համեստութիւնով պատասխանեց վարդենին. չէ՞ որ իմ հիւթից նրանք անուշ մեղր են պատրաստում:

Բառեր՝ վարդենի, փուշ, բուսել էին, հարևան, համբերութիւն, հոտ, հիւթ, մեղու, համեստութիւն:

Գրեցէք ձեր գիտեցած միջատների անունները:

Գրեցէք եւ զանազանեցէք՝ հոտ, հօտ. հոր, հօր. մոր, մօր. մարտ, մարդ:

14. ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՛չ ցորեն եմ, ո՛չ գարի,
Որ հողագործն ինձ ցանի.
Առանց ջրի հունցած եմ,
Առանց ձեռքի կոլորած,
Ես անկրակ թրխած եմ,
Թոնիր, ջաղաց տեսած չեմ,
Ձեր ամենիդ սիրածն եմ:

15. ԼԱՒ ԸՆԿԵՐ

Մարդիկ վեր առան և կակաչի հասարակ ծաղիկը շահոքրամի հետ մի խեցիի մէջ

տնկեցին: Մի քանի ժամանակից յետոյ կակաչիցն էլ շահոքրամի հոտ էր գալիս:

Լաւ ընկերի հետ որ ապրենք, մենք էլ շատ բան կը վաստակենք:

Բառեր՝ կակաչ—տիւլպան (ծաղիկ), շահոքրամ—մեխակ (ծաղիկ). խեցի—ծաղկաման. վաստակ—աշխատանք. վաստակել—աշխատել, շահիլ. վաստակիլ—յոգնիլ:

Գրեցէք ձեր գիտեցած ծաղիկների անունները:

Գրեցէք եւ զանազանեցէք՝ ճար, չար. ճանկ, չանկ. ճուտ, չուտ. ճօճ, չոչ:

16. ՄԱՆՈՒՇԱԿ

Դեռ ուր է ծիծառ, դեռ ուր է սոխակ,
Գարնան կարապետ եկաւ մանուշակ.
Երկնային խունկը չորս կողմը բուրեց,
Նորածին աշխարհ նախ նա համբուրեց:

Երկինքն է անամպ, շողշողուն արև,
Տա՛նք մանուշակին, երեխայք, բարև,
Որ մեր դաշտերին բերեց նոր գարուն,
Նախշուն հաւերով, ծաղկով զարդարուն:

Բառեր՝ ծիծառ, սոխակ, կարապետ, Կարապետ, երկնային, խունկ, բուրեց, նորածին, նախ, անամպ, հաւեր, զարդարուն:

Գրեցէք եւ զանազանեցէք՝ դուր, տուր, թուր. տաս, դաս, թաս. դեղ, տեղ, թեղ. դատ, տատ, թաթ. դեր, տէր, թեր...

17. ՊԱՌԱՒՆ ՈՒ ՀԱՒԸ

Հաւը օրական մի ձու էր ածում պառաւի համար։ Բայց պառաւն ագահ էր. նա մտածեց՝ «եթէ հաւին շատ կուտ տամ, մի ձուի փոխանակ երկուսը կամ երեքը կ'ածի օրական»։ Մտածեց ու կատարեց։ Հաւը սաստիկ պարարտացաւ և էլ ձու չածեց։

Բառեր՝ պառաւ, ծեր, ալեոր, երիտասարդ, պատանի, մանուկ, ագահ, պարարտ, նիհար։

Գրեցէք եւ զանազանեցէք՝ տող, դող, թող. տէր, դեր, թեր. տակ, տաք, թագ. տնակ, դանակ, թանաք։

18. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂ

ՊԱՌԱՒԸ

Ջու-ջու, ջու-ջու, իմ վառիկներ,
Սիրուն ճուտեր, հաւ-մարիկներ.
Ոսկեփետուր աքլաբիկներ,
Եկէք, կերէք ձեր հատիկներ։

ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Սրամ, Աշխէն, Վարդան, Խորէն,
Սանդուխտ, Զուշան, Հայկակ, Սուրէն,
Գնանք, տեսնենք՝ հաւերն ուր են։

Տեսէք, տեսէք, չալ-չալ հաւեր
Հեռու քաշուել, կ'ուտեն որդեր.
Այնտեղ փոքրիկ, փափլիկ, թմբլիկ,
Պզտիկ ճուտիկ կ'ուտէ կուտիկ։

Շար փիշիկը մօտ է գալիս,
Սև ձագին է մտիկ տալիս.
Թաթը մեկնեց,
Վզից բռնեց։

Աքաղաղներ, հաւ-մարիկներ,
Պահպանեցէք ձեր ճուտիկներ։

ԱՔԱՂԱՂՆԵՐԸ

Հասէք, հասէք, օգնեցէք,
Շար փիշիկին պատժեցէք։

ՀԱՒԵՐԸ

Ժողովուենք, միանանք,
Շար կատուին վրայ տանք։

ԲՈԼՈՐԸ

Տեսա՞ք, տեսա՞ք, ինչ եղաւ.
Գող կատուն որ մեզ տեսաւ,
Խիստ վախեցաւ ու փախաւ.
Ուրեմն ապրենք միասին,
Որ մօտ չգայ թշնամին։

9359

Հայկական Ս. Գրոց Գրադարան

Գրեցէք ձեր անունը, հայրանունը եւ ազգանունը։—Գրեցէք ձեր քոյրերի եւ եղբայրների անունները։—Գրեցէք ձեզ ծանօթ օրիորդների եւ տղաների անունները եւ ազգանունները։

«Եկէք, եղբարք, շուրջ պատենք,
Մեր մօր վիշտը փարատենք»։

ՇՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Տանը եւ ուսումնարանումը

---

19. ՄԵՐ ՏՈՒՆԸ

Մեր տունը մի ընդարձակ բնակարան է։ Նա ութ սենեակ ունի։ Ամենամեծ սենեակը դահլիճն է։ Դահլիճին կից կայ մի ուրիշ սենեակ, նրանից քիչ փոքր, ուր սովորաբար *ընդունում* ենք մեզ մօտ եկողներին. դա կոչւում է ընդունարան։ Հայրս իրան համար առանձին սենեակ ունի—առանձնարան, որտեղ նա զբաղւում է իւր գործերով։ Ճաշին, ընթրիքին և թէյին մենք հաւաքւում ենք սեղանատունը։ Գիշերները մենք քնում ենք մի ընդարձակ սենեակում, որ կոչւում է ննջարան։ Մանուկներիս համար էլ մի ջոկ սենեակ է յատկացրած, որտեղ մենք պատրաստում ենք մեր դասերը։ Մանկանոցը շատ մեծ չէ, բայց ամենից պայծառ սենեակն է։ Այսպէս ահա բոլոր սենեակները իրանց նշանակութիւնն ունին։ Մնում է յիշել նախասենեակը և խոհանոցը, ուր խոհարարը մեզ համար համեղ կերակուրներ է պատրաստում։

Դրեցէք հետեւեալ բառերի նշանակութիւնը՝ ընդարձակ, դահլիճ, կից, ընդունարան, առանձնարան, զբաղւում է, ընթրիք, սեղանատուն, ննջարան, մանկանոց, յատկացրած է, նախասենեակ, խոհանոց, խոհարար։

Դիտեցէք եւ նկարագրեցէք ձեր կացած քնակարանը:

*Արտագրեցէք հետեւեալ բառերը եւ, ուր որ հարկաւորն է, ը տառը աւելացրէք՝ զբաղմունք, զբօսանք, զգեստ, զգալ... Զբոյց, զկեռ, զղջալ, զնդան (բանդ), զննել, զտել (մաքրել**):*

20. ԽՐՃԻԹ

Կէս գիշերին պայծառ լուսինն
Երկնքումը բարձրացաւ,
Սփռեց աղօտ ճաճանչները
Եւ խրճիթը լոյս առաւ:

Փոքրիկ խուղ էր, դատարկ ցեխից
Անշքապէս նա շինած.
Մի դուռն ունէր ցած և նեղլիկ
Եւ մի երդիկ էլ բացած:

Խրճթի մէջը, երդկի տակը
Կլոր հնոց կար շինած,
Նրա շուրջը երեք հոգի
Գործը ձեռքին նստոտած:

Պառաւ կինը ճախարակը
Վարպետութեամբ պտտում էր,
Բրդի փափուկ քուլաները
Ուշի ուշով մանում էր:

**) Բաղաձայն տառերը բառի սկզբում, մի ուրիշ բաղաձայնի հանդիպելիս, իրանցից յետոյ ը են առնում, որ հնչում է, բայց չի գրւում (զբրիչ, զբժուար, թբթու և այլն). միայն ս, զ, շ տառերը, վերև յիշուած բաղաձայններին հանդիպելիս, ը հնչիւնը առնում են սկզբից (զբաղմունք, զգեստ):

Համեստաղէմ կոյս աղջիկը,
Սանդերքն առաջը դրած,
Հանդարտութեամբ բուրդ էր գզում,
Իւր մայրիկի մօտ նստած:

Երիտասարդ տղամարդը
Արագ-արագ տաշում էր,
Եւ մի ժամից ողջ գութանը
Վաղուան համար պատրաստ էր:

Հաւը խօսեց: Պառաւն մեղմով
Ձեռքի քուլան վերջացրեց.
—«Կէս գիշերը վաղուց անցաւ,
Պէտք է քնենք», նա ասեց:

Անցան ժամեր: Եւ խրճիթում
Խոր լռութիւն էր տիրել,
Մինչ աղջիկը արիաջան
Անկողնից վեր էր կացել:

Լուսամուտից նա դուրս նայեց
Եւ շրթունքը մեղմ խաղաց.
Արշալոյսը նոր էր բացւում,
Կուժն ուսեց, ջուրը գնաց:

Բառեր՝ խրճիթ—տնակ, փոքրիկ տուն. խուղ—խուց, գետնայ փոր տնակ. անշքապէս—առանց զարդի. երդիկ—կտուրի մէջ տեղից բացած լուսամուտ. հնոց—կրակ վառելու տեղը, օջաղը. շուրջը—չորս կողմը. ճախարակ—թել մանելու գործիք, անիւ, չարխ. կոյս աղջիկ—չպսակուած աղջիկ. սանդերք—բուրդ գզելու գործիք. արագ—շուտ. վաղուան—էգուցուան. արիաջան—աշխատասէր. անկողին—տեղաշոմ արշալոյս—առաւօտուայ առաջին լոյսը:

Արձակ գրեցէք այս ոտանաւորը ձեր տետրակների վրա:-

21. ՄԵՐ ԴԱՍԱՏՈՒՆԸ

Մեր դասատունը մի մեծ սենեակ է։ Սենեակի մի անկիւնում դրած է սեղան և աթոռ վարժապետի համար։ Սենեակի միւս անկիւնում դրած է մի մեծ գրատախտակ։ Պատերին կախած են կենդանիների նկարներ և աշխարհագրական քարտէզներ։

Սենեակի մէջտեղը աշակերտների համար շարած են նստարաններ։ Նստարանների առաջ նոյն կարգով դրած են գրասեղաններ։ Վարժապետը սովորեցնում է։ Աշակերտները սովորում են։ Վարժապետը դաս է հարցնում։ Աշակերտները պատասխանում են։ Աշակերտները գրում են, կարդում են, նկարում են և հաշւում են թւերով։ Ամեն մի դասից յետոյ աշակերտներին հանգիստ են տալիս. ապա սկսւում է միւս դասը։ Դասամիջոցը տեւում է հինգ կամ տասն րոպէ։

Բառեր՝ անկիւն, նկարներ, աշխարհագրական քարտէզ, նստարան, գրասեղան, հանգիստ են տալիս, դասամիջոց, տեւում է։

Գրեցէք հետեւեալ բառերը եւ, ուր որ հարկաւորն է, ը աւելացրէք՝ սպասել, սպիտակ, ստամոքս, ստանալ, սփոփել, սքանչելի... Սլաք, սխալ, սմբակ, Սմբատ, սնունդ, սրինգ...*)

22. ՀՐԱՒԻՐ ԴԷՊԻ ՈՒՍՈՒՄՆԵՐԸՆ

Հաւը խօսեցաւ, օրը բացուեցաւ,
Արեւն էլ վաղուց ելաւ, բարձրացաւ.
Խելօք մանուկներ, շուտ հագնուեցէք,
Շուտով դասատուն դուք հասաքուեցէք։

*) Տես 20-դ երեսի ծանօթութիւնը։

Մարդ և անասուն, գազան և թռչուն,
Ամենքն էլ իրանց գործին են գնում.
Մրջիւնը բերնով կերակուր տանում,
Մեղուն ծաղկիցը հիւթեր է ծծում։

Դաշտը գոյնզգոյն ծաղկով զարդարուած,
Մարգագետինը կանաչ հագնուած,
Անտառը ձմեռուայ քնից արթնացած,
Իւր տերևները շարժում է կամաց։

Ձկնորսներն իրանց ուռկանն են քաշում,
Հնձողներն իրանց մանգաղը շարժում...
Դուք էլ, մանուկներ, ձեր գրքերն առէք.
Ստուած ծուլութիւն չէ սիրում երբէք։

Բառեր՝ հաւը խօսեցաւ—աքաղաղը կանչեց. օրը բացուեցաւ—լուսացաւ. ելաւ—դուրս եկաւ. մրջիւն. մեղու. անասուն. հիւթեր. գոյնզգոյն, մարգագետին. անտառ. ձկնորս. ուռկան. հնձող. մանգաղ. երբէք։

Հոկեցէք բոլոր առարկաները, որոնք կենդանի են, ապրում են և ազատ կերպով կարող են մի տեղից միւս տեղ շարժուել։—*Շնչաւոր* առարկաներ։

Հոկեցէք նմանապէս այն բոլոր առարկաները, որոնք կենդանի չեն, չեն ապրում, կամ թէև կեանք ունին, բայց չեն կարող ազատ կերպով մի տեղից միւս տեղ անցնել։—*Անշունչ* առարկաներ։

23. ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ

Մեր ընտանիքը մեծ չէ. ես ունիմ հայր ու մայր, երկու եղբայր և երկու քոյր. ես ամենից մեծն եմ։ Մենք մի պառաւ տատ էլ ունինք։ Նա շատ սակաւ է տանից դուրս գալիս. միայն ժամ է գնում։ Նա մեզ շատ է սիրում և փայփայում է։

Իմ հայրը շատ է աշխատում. նրա աշխատանքովն ենք կերակրւում և հագնւում ամենքս։

Մայրս տնտեսութիւն է անում. նա հրամայում է ճաշ և ընթրիք պատրաստել. նա գնում է ներքնատունը և մառանը։ Բայց որ իմանաս, թէ ես ինչպէս սիրում եմ նրա հետ մառան գնալ։ Ամբողջ օրը մայրս մեզ համար հոգս է քաշում։ Նա սովորեցնում է մեզ խաչակնքել և աղօթել։ Մենք երեկոները, քնելուց առաջ, միշտ աղօթում ենք։

Ես մէկ փոքրիկ քոյր էլ ունէի, բայց նրան տարան գերեզմանատուն և դրեցին սև հողակոյտի տակ։ Մայրս մինչև այսօր էլ լաց է լինում փոքրիկ Մանուշակի համար։

Բառեր՝ ընտանիք—տան մէջ միասին ապրողները. սակաւ—քիչ, երբեմն. փայփայում է—գուրգուրում է, սիրում է. տնտեսութիւն—տան հոգացողութիւն (տուն-տես). ընթրիք—իրիգնահաց. ներքնատուն—սառտափ, ամենաստորին տունը. մառան—պաշարեղէն պահելու սենեակ. հողակոյտ—գերեզման (հոյ-կոյտ)։

Նկատեցէք հետեւեալ բառերի ուղղագրութիւնը՝ պաշարեղէն, մսեղէն, խմորեղէն, քարեղէն, փայտեղէն, բրդեղէն, երկաթեղէն...

24. ՁՈՒՐԿՆԵՐԻ ՄԽԻԹԱՐԱՆՔԸ

«Եկէք, եղբարք, շուրջ պատենք,
Մեր մօր վիշտը փարատենք»։

Մատղաշ տղայք ցատկելով
Մօր չորս կողմը կտրեցին,
Կէս վշտացին, կէս ուրախ
Մօր հետ այսպէս խօսեցին.

—Մայրիկ, մայրիկ, քանի լաս,
Մինչ երբ տանջուիս, հառաչես.
Մանուշակը վատ տեղ չէ,
Հերիք սիրտդ մորմոքես։

Երբ մեր քոյրը մեզ թողեց,
Մենք ճիչ բարձինք լալագին,
Մայրիկ, դու այս խօսքերով
Վերջ դրեցիր մեր լացին.

«Երկնքումը մեզնից լաւ
Հրեշտակները ձեր քրոջ
Կը փայփայեն, կը սիրեն,
Սէր, օրհնութիւն մեր տիրոջ։

«Ինչպէս անմեղ թիթեռնիկն
Ծաղկանց մէջ է ոստոստում,
Որպէս աստղիկն երկնքի
Պարզ գիշերին է փայլում,

«Այնպէս հոգին ձեր քրոջ
Աստուածարնակ դրախտի մէջ
Հրեշտակներին հաւասար
Պիտի գտնէ ելէջ»։

Մայրիկ, մայրիկ, նոյն խօսքերն
Լսիր մեզնից սրտաբաց.
Երջանիկ է Մանուշակն,
Սրբիր աչերդ, ուրախ կաց։

Բառեր՝ շուրջ պատենք—չորս կողմը բռնենք. վիշտը—հոգսը, դարդը. մատղաշ—ջահել. վշտացին—տխուր. յառաչես—ախ քաշես.

մորմոքես—այրես, խորովես. ճիչ բարձինք—գոռացինք. ելևէջ—տուն ու դուրս անել, բարձր ու ցածր անել։

Հոկեցէք բոլոր շնչաւոր առարկաների անունները։—Հոկեցէք բոլոր անշունչ առարկաների անունները։—Դիտեցէք եւ զանազանեցէք հետեւեալ առարկաները՝ Քրկիչ, Տէր, հրեշտակ, հոգի, Աստուած (հոգեոր առարկաներ)։

25. ՊԱՊԸ

Պապը սաստիկ ծերացել էր։ Նրա աչքերը լաւ չէին տեսնում, ականջները ծանրացել էին. նրա ձեռներն ու ոտները ծերութիւնից դողդողում էին, այնպէս որ՝ գդալը բերանը տանելիս, կերակուրը կաթկաթեցնում էր։

Այս բանը դուր չէր գալիս նրա որդուն ու հարսին. նրանք ծերին իրանց հետ սուփրի չէին նստացնում, այլ մի անկիւնում առանձին տեղ էին տալիս՝ հաց ուտելու։ Մի անգամ, հաց ուտելիս, ծերի ձեռները դողդողացին, ամանը վայր ընկաւ ու կոտրուեց։ Շատ սաստիկ բարկացան հարսն ու որդին խեղճ ծերի վրայ և այնուհետև փայտէ ամանով էին կերակուր տալիս նրան։

Ծեր մարդը մի թոռն ունէր։ Մի օր մանուկը, յատակի վրայ նստած, տաշեղներից մի բան էր շինում։

Մայրը հարցրեց նրան. «Այդ ինչ ես շինում, որդի»։

—Փայտէ աման եմ շինում, մայրիկ, որ երբ դու և հայրիկս ծերանաք, նրանով կերակուր տամ ձեզ, պատասխանեց մանուկը։

Հայրն ու մայրը նայեցին միմեանց երեսի և ամօթից կարմրեցին. նրանք այնուհետև սկսեցին ծերին շատ պատուով պահել։

1. Ցիշեցէք եւ գրեցէք ազգակցութիւն ցոյց տուող շնչաւոր առարկաների անունները. պապ, տատ, հայր, մայր...

2. Արտագրեցէք այս դասից բոլոր անշունչ առարկաների անունները։

26. ԲԸՐԻ ԴՈՐԾ

Սարի լանջին, ժայռի տակ,
Ջուր էր բղխում սառնորակ
Եւ, ցրուելով խոտերում,
Իզուր ճահիճ էր դառնում։

Նրա առջև մի խոր գուշ
Ջինեց հովիւն ու տարաւ,
Խաղ ասելով նա անուշ,
Ջրեց հօտը իւր ծարաւ։

Պախրէն անցաւ այն սարից,
Ջոգից հանած չոր լեզուն,
Կուշտ-կուշտ խմեց աղբիւրից,
Ապա նայեց Աստծուն։

Անցուորն եկաւ տօթակէզ,
Սառն աղբիւրը որ տեսաւ,
Գլխարկն առաւ ու չոքեց,
Խմեց, սիրտը հովացաւ։

Ապա թէ իւր օրհնանքը
Մաղթեց մարդը այն բարի.
—Քո շինողիդ օր-կեանքը
Այս ջրի պէս երկարի։

Բառեր՝ սարի լանջին—կրծքին, դօշին. ժայռ—լեռ քար. բղխում էր—դուրս էր գալիս. ճահիճ—ջրմջմայ. գուշ—փոս, աղբիւր. հովիւ—ոչխար պահող, արածացնող. հօտ—ոչխարների խումբը. պախրայ—եղնիկ, եղջերու. անցուոր—անցկացող, ճանապարհորդ. տօթակէզ—չոգից այրուած. մաղթեց—խնդրեց, խնդրելով ասաց։

Հոկեցէք շնչաւոր, անշունչ եւ հոգեւոր առարկաների անունները:

Հովուի արած գործը պատմեցէք եւ գրեցէք ձեր բառերով:

27. ԻՆՉՊԷՍ ԵՆ ՇԻՆՈՒՄ ՏՆԵՐԸ

Քայտէ տները շինում են հիւսները գերաններից: Քարէ տները շինում են որմնադիրները աղիւսներից կամ տաշած քարերից: Ամենից առաջ հիմքն են դնում: Հիմքի վրայ բարձրացնում են պատերը: Պատերի մէջ թողնում են բացուածներ՝ դռների և լուսամուտների համար: Երբ որ պատերը բարձրացնում պրծնում են, ապա գցում են նրանց վերայ գերաններ, իսկ գերանների վրայ կոճեր. յետոյ նրանց վրայ շինում են կտուրը: Կտուրը թեքուած է լինում, որ անձրևի ջուրը վրան չկանգնի: Կտուրները ծածկում են հողով, երկաթով կամ եղէգով:

Տունը դրսից պատրաստ է, բայց նրա ներսից դեռ էլի շատ գործ կայ. պէտք է յատակն ու առաստաղը տախտակել, վառարանները պատրաստել, դռները կախել, լուսամուտների փեղկերը հագցնել. պէտք է պատերը կամ ներկել, կամ թուղթ կպցնել: Երբ որ տունը պատրաստում է, նրա մէջ բերում-դարսում են զանազան կարասիներ և ամանեղէններ. յետոյ կանչում են քահանային: Քահանան օրհնում է տունը, և այնուհետև սկսում են նրա մէջ բնակուիլ:

*Բառեր՝ հիւսն—դուրգար. որմնադիր—պատքաշ. հիմքը—*фундаментъ. *կոճեր—ճեղքած գերաններ. յատակ—տակը,* (полъ). *առաստաղ—օճոլք,* (потолокъ). *փեղկերը—դռան կամ լուսամուտի տախտակները, ծածկոցները,* (ставни):

Հոկեցէք եւ գրեցէք նախ շնչաւոր եւ ապա անշունչ առարկաների անունները:

28. ՏԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Նոր տունն արդէն կանգնած է,
Բայց դեռ ծածկած, սարքած չէ.
Արև, անձրև կարող են
Ամեն կողմից ներս մտնեն:

Ուստի խնդրում ենք աշխարհի Արարչից,
Որ կամենայ իւր երկնային խորանից
Աջողութիւն եւ օրհնութիւն վայր ցօղել
Այս տան վերայ, որ մընում է անծածկել:
Եւ թող նա մեզ նախ և առաջ պարգևէ՝
Մեր ցորենի ամբարներին լիութիւն,
Եւ յարկի տակ պարկեշտութիւն, ժըրութիւն,
Եւ մանաւանդ առողջութիւն մեր դոմում,
Եւ մեր գինուն քաղցր ճաշակ մառանում.
Եւ թող նա մեր խաչակնքէ դուռ, երդիկ,
Որ ներս մըտնել չկարենան չար ոգիք:

Եւ որ նորաշէն այս օրհնեալ դրռնէն
Պարկեշտ երեխայք ել ու մուտ անեն:

Դէհ, որմնադիր, ծածկէ-պրրծի քո շէնքը.
Տանրս վերայ իջաւ Տիրոջ օրհնէնքը:

Բառեր՝ Արարիչ—ստեղծող, Աստուած. երկնային խորանից—երկնային բնակարանից. վայր—ցած, ներքև. ցօղել—շաղ տալ. պարգև—ընծայ. պարգևել—տալ, ընծայել. ամբար—ցորնատուն, պտղատուն. ժիր—աշխատող, զրինգ. ժրութիւն—աշխատասիրութիւն. ճաշակ—համ. մառան—պաշարանոց:

Արտագրեցէք նշանակած առակարների անունները. նկատեցէք, որ այդ առարկաները մենք մեր հինգ զգայարաններով ճանաչել չենք կարող. դրանց մենք մտքով ենք ըմբռնում:—Մտաւոր առարկաներ:

29. ՀԱՑՆ ՈՒՏԵԼՈՎ՝ ԲԱՆՆ ԱՆԵԼՈՎ

Աշխատասէր մանուկը, լուսամուտի առաջ նստած, պատրաստում էր դասերը. փայլուն արևն էլ դրսից նրան ասում էր. «Բաւական չէ՞, ինչ կարդացիր, վեր կաց, խաղերդ սկսիր»։ Մանուկը պատասխանում է արեգակին. «Ո՛չ, պայծառ արևիկ, ո՛չ. այժմ խաղի միջոց չունեմ. թող առաջ դասս վերջացրնեմ»։

Մանուկը գրում է ու կարդում, իսկ պատուհանի տակ, ճղան վրայ նստած, սիրուն թռչունն է երգում և միշտ այս բանն է ասում. «Հերիք չէ՞ կարդաս. մի քիչ էլ խաղա՜ս»։

Մանուկը թռչունին պատասխանում է. «Ո՛չ, սիրուն թռչնակս, ո՛չ. այժմ խաղի միջոց չունեմ. թող առաջ գործս վերջացրնեմ»։

Մանուկը դարձեալ նստած է՝ գիրքն առաջին և լուսամուտին էլ չէ նայում. իսկ պարտէզի կարմիր կեռասը ականջի տակ այս է ասում. «Բաւական չէ՞ քեզ՝ ինչքան կարդացիր. դուրս արի դուռը, ծառը բարձրացիր, հասած պտուղներս կեր, ուրախացիր»։ Մանուկը կեռասին պատասխանում է. «Ո՛չ, իմ քաղցրատես կեռաս, ո՛չ. այժմ խաղի միջոց չունեմ. թող առաջ դասս վերջացրնեմ»։

Մանուկը կարդաց ու գրեց, բոլոր գործը վերջացրեց, գրքերն արկղի մէջը դրեց, ապա դէպի այգին վազեց ու համարձակ ձայնով ասեց՝ «դասերս պրծայ, ո՞վ էր ինձ կանչում...» Արեգակն արդէն ժպտում է նորան. փոքրիկ թռչնակը անուշ երգ հիւսում. կեռասի ծառը, ծիծաղը դէմքին, հասած պտուղներ նորան նուիրում։

Բառեր՝ միջոց չունեմ—ժամանակ չունեմ. կեռաս—գիլաս, բալ. քաղցրատես,—սիրուն տեսք ունեցող (քաղցր—տեսք). արկղ—եաշչիկ. ընծայում էր—տալիս էր, նուիրում էր։

Որոնեցէք եւ արտագրեցէք բոլոր շնչաւոր եւ անշունչ առարկաների անունները։—Աւելացրէք ձեզանից միքանի մըտաւոր եւ հոգեւոր առարկաների անուններ։

30. ԳԱՐՈՒՆ

Արուն սիրուն ու նախշուն
Բերեց մեր տուն բիւր ողջոյն.
Սոխակն ունէր իւր զրկին,
Վարդն ունէր իւր սրտին,

Արօտ դալար՝ ուսերին,
Սարեակ, ծիծառ՝ ճղներին,
Յստակ աղբիւր, պարզ առուակ,
Հազար ու բիւր սար, ձորակ,
Հովիտ, անտառ, դաշտ և մարգ
Ջուր ցանէին սառնորակ։

Բառեր՝ բիւր—շատ (տասը հազար). արօտ—արածելու տեղ. դալար—ոչ չոր, թարմ, կանաչ. սարեակ—սալեկ թռչունը, մոշահաւ.

ջիծառ—ծիծեռնակ. յստակ—իստակ, մաքուր. ձորակ—փոքրիկ ձոր. հովիտ—ընդարձակ ձոր. դաշտ—տափարակ տեղ. մարգ—փոքրիկ կանաչ տափ, թալայ. սառնորակ—սառը, շատ զով։

Առարկայի անունը։—Ամենայն առարկայ անուն ունի։ Նկատեցէք այստեղ յիշած առարկաների անունները. բաժանեցէք նրանց երկու խումբի՝ անուններ, որոնք առարկայի մէկն են ցոյց տալիս և անուններ, որոնք ցոյց են տալիս առարկայի շատը (գարուն, ողջոյն, ուսեր, ճղներ)։

31. ՈՅԺՆ ԻՐԱՒՈՒՆՔ ՉԷ

Փոքրիկ Սաթինիկը գնաց այգին, նստեց ծառի տակը և սկսեց տիկինի խաղալ։ Նրա եղբայր Սուրէնը ներս վազեց այգին, Սաթինիկի ձեռքից տիկինը խլեց, հեծաւ իւր փայտէ ձին և սկսեց չափ գցել այգու մէջ։ Սաթինիկը կանգնած լաց էր լինում։

Սուրէնի մեծ եղբայր Վահանը կամեցաւ ինքը խաղալ. նա խլեց Սուրէնի ձեռքից տիկինն էլ, ձին էլ. Սուրէնը գնաց, գանգատուեց հօրը. իսկ հայրը, լուսամուտի առաջ նստած, բոլորը տեսել էր։

Ի՞նչ կ'ասէր հայրը Սուրէնին։

Բոլոր անունները երկու խումբի բաժանեցէք՝ ա) անուններ, որոնց կարելի է փոփոխել—մէկից շատ շինել (այգի—այգիներ, ծառ—ծառեր) եւ բ) անուններ՝ որոնց չի կարելի փոփոխել, մէկից շատ դարձնել (Սաթինիկ բայց ոչ Սաթինիկներ)։

32. ՀՁՕՐ ՃԱՐ

Երբ իմ ծնողքս կամ՝ ես եմ տկար,
Եւ կամ՝ հանդիպի մի այլ պատահար,
Երբ-որ աշխարհի մէջ կայ ցաւ կամ՝ սով,

Երբ-որ մարդիկ են իրար հետ խրոով,—
Այդ ամեն չարին ունիմ ես մի ճար.
Այդ իմ աղօթքն է ամենի համար։

ա. Առարկայի մէկը՝ ցաւ, սով, ճար, տուն, սիրտ, սար, դաշտ, մարգ, ջուր...

Առարկայի շատը՝ ցաւեր, սովեր, ճարեր, տներ, սրտեր, սարեր, դաշտեր, մարգեր, ջրեր...

բ. Առարկայի մէկը՝ գարուն, սոխակ, սարեակ, ծիծեռնակ, աղբիւր, առու, մանուկ...

Առարկայի շատը՝ գարուններ, սոխակներ, սարեակներ...

Եզակի թիւ. յոգնակի թիւ։

33. ԱՌԱՒՕՏԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ

Պայծառ արևը բարձրացաւ երկինքը և տարածեց իւր ոսկէփայլ ճառագայթները, որ արթնացնէ քնած երկիրը։

Առաջին ճառագայթը թռաւ, արտոյտի վրայ ընկաւ։ Արտոյտը թրպրտաց, թափ տուեց թևերը, դուրս թռաւ բնից, շատ ու շատ բարձրացաւ և երգեց իւր ոսկէհնչիւն երգը. «Ա՜խ, ինչքան լաւ է առաւօտեան պարզ և թարմ օդի մէջ թռչիլը, ինչքան լաւ է, ո՜րքան դուրեկան»։

Երկրորդ ճառագայթը նապաստակի վրայ ընկաւ։ Նապաստակը ականջները շարժեց և ուրախ-ուրախ թռչկոտաց դէպի ցօղապատ մարգագետինները. վազեց-գնաց նախաճաշիկ անելու հիւթալի խոտերով։

Երրորդ ճառագայթը հաւաբունը մտաւ։ Աքաղաղը թափահարեց թևերը և երգեց՝ ծո՜ւ-ղրո՜ւ-ղո՜ւ։ Հաւերը ցած եկան թառերից, կըրկռացին, սկսեցին քըջըջել աղբը և ճիճուներ որոնել։

Չորրորդ ճառագայթը փեթակի վրայ ընկաւ։ Մեղուն

դուրս սողաց իր մոմեղէն խցից, կանգնեց փեթակի դռան առաջ, ուղղեց իւր թևերը և բզզալով թռաւ գնաց մեղր հաւաքելու հոտաւէտ ծաղիկներից։

Հինգերորդ ճառագայթը մտաւ մանկանոցը և ընկաւ փոքրիկ ծոյլ մանուկի անկողնու վրայ ու սկսեց ուղղակի նրա աչքերը ծակծկել. բայց նա շուռ եկաւ միւս կողքի վրայ և նորից քնեց։

Բառեր՝ տարածեց—փռեց. ճառագայթները—շողերը. արտոյտ—աբեղաձագ թռչունը, (жаворонокъ). ոսկէհնչիւն—ոսկու նման ձայն հանող. թարմ—թաղայ, մաքուր, նոր. ցող—շաղ. ցողապատ—շաղաթաթախ. մարգագետին—կանաչ տափ, (лугъ). նախաճաշիկ—առաջին ճաշը (закуска). հիւթալի—սննդարար, հիւթով լիքը. որոնել—պտրտել. փեթակ—մեղուի տնակը, քթոցը. խուց—փոքրիկ տնակ։

Արտագրեցէք բոլոր շնչաւոր առարկաների անունները՝ թուերը փոխելով։ Արտագրեցէք բոլոր անշունչ առարկաների անունները՝ թուերը փոխելով։

34. ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Արի, իմ սոխակ, թող պարտէզ, մէջին,
Ցաղերով քունն ըներ տղին աչերին.
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի՛ զալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ։

Ե՛կ, աբեղաձագ, թող արտ ու արօտ,
Օրօրէ տղին, քունի է կարօտ.
Բայց նա լալիս է. դու, ծնգուկ, մի՛ զալ,
Իմ որդին չուզէ աբեղայ դառնալ։

Թող դու, տատրակիկ, քո ձագն ու քունը,
Վուվույով տղին ըներ անուշ քունը.

Բայց նա լալիս է. տատրակիկ, մի՛ զալ,
Իմ որդին չուզէ սրգաւոր դառնալ.

Կաչաղակ ճարպիկ, գող, արծաթասէր,
Շահի զրուցով որդուս քունը ըեր.
Բայց նա լալիս է, կաչաղակ, մի՛ զալ,
Իմ որդին չուզէ սովդագար դառնալ։

Թող որսդ, արի, քաջասիրտ բազէ,
Քո երգը զուցէ իմ որդին կ'ուզէ.
Բազէն որ եկաւ, որդիս լըռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քընեցաւ։

Բառեր՝ սոխակ—բլբուլ. մէջի—անտառ. աբեղաձագ—արտուտիկ. աբեղայ—վարդապետ. տատրակ—աղունակի տեսակ մի թռչուն. կաչաղակ—քըչեղակ (сорока). բազէ—ղզել-ղուշ, որսի թռչուն, (соколъ). ռազմի երգեր—պատերազմի երգեր։

Կրկնեցէ՛ք սովորածներդ՝ առարկայ, շնչաւոր առարկաներ, անշունչ առարկաներ, մտաւոր առարկաներ, հոգևոր առարկաներ. առարկայի անունը, անուան թիւը—մէկը և շատը։ Օրինակներ այս դասից։

35. ԿԱԻՃ

Փոքրիկ Նազելին վաղուց գիտէր, որ կաւիճով գրում են գրատախտակի վրայ, որ նրանով կարելի է ձեռներն ու շորերը փոշոտել, որ նա սպիտակ է ու փափուկ և կարելի է փշրել, փոշի դարձնել։ Ուրիշ ոչինչ չէր իմանում Նազելին կաւիճի մասին։ Մի անգամ նա հարցրեց աղախնուն.—Ո՞րտեղից են ստանում կաւիճը։

—«Խանութներից», պատասխանեց աղախինը։

—Շատ լաւ, իսկ խանութներում ինչ տեղից է։

«Սարերից... այդպիսի սարեր էլ կան»։

—Հա՛, ուրեմն դա հող է, մտածեց Նազելին և էլ ոչինչ չհարցրեց։

Բայց ո՛ւրքան զարմացաւ մեր Նազելին, երբ մի անգամ նկատեց գրքի մէջ մի այնպիսի պատկեր, որպիսին նկարած է այստեղ, և նրա տակը կարդաց՝ կաւիճ։ Նազելին վազեց իւր մօր մօտ.

«Մա՛յրիկ, սիրելի մայրիկ, մի՞թէ սա կաւիճ է նկարած»։

—Այո՛, որդի, տեսնում ես, գրած է...

«Բայց մեր կաւիճը այդպէս չէ, մա՛յրիկ»։

—Նա էլ այդպէս կ'երևի, եթէ խոշորացոյցի տակ դնենք։ Խոշորացոյցը մի ապակի է, որ առարկաները ցոյց է տալիս մեծ դիրքով։

Այնուհետև մայրն սկսեց պատմել, թէ ինչից և ինչպէս է զոյանում կաւիճը *)։

Նկատեցէ՛ք նշանակած բառերը՝ *փոքրիկ* Նազելի. *խելօք* Նազելի. *ծոյլ* Նազելի. *աշխատասէր* Նազելի։—*Փափուկ* կաւիճ, *պինդ* կաւիճ. *ծանր* կաւիճ. *թեթև* կաւիճ։—*Սպիտակ* փոշի. *սև* փոշի. *դեղին* փոշի. *կարմիր* փոշի։

Նշանակած բառերը մի առարկայ ջոկում են (որոշում են) իրան նման մի ուրիշ առարկայից—ցոյց են տալիս, թէ առարկան ինչպիսի է (որպիսի է)։

---

*) *Ուսուցիչը բացատրում է.*

Կաւիճը այն մանր կենդանիների բունն է, որոնք չինում են կաւիճէ և կրէ լեռներ։ Դրանք բնակւում են ծովային ջրերում և այնքան մանր են, որ հասարակ աչքով չեն տեսնւում։ Ուսումնականներն այդ մանրիկներին անուանում են ինֆուզորիա։ Նրանք շատ են և իրանց մանր կաշուի մէջ սողում են ջրի յատակում... այնտեղ ապրում են-ապրում ու մեռնում, իսկ իրանց կաշին—վահանը թողնում են ջրի յատակում։ Ջուրն էլ աւազի հետ քշում է նրանց իրան ալիքներով դէպի ծովի ափերը։ Նրանք այնքան շատ են, որ չնայելով իրանց մանրութեան, այդ մեռած մարմինները միմեանց վրայ դարսուելուց ծովի յատակից, շատ տարիներ անցնելուց յետոյ, վեր է բարձրանում և հպարտաբար փայլում է արեգակի տակ մի ամբողջ սար։ Ահա՛ ինչպիսի նշանաւոր կենդանիներ են այն մանրիկները. նրանք մինչև անգամ ամբողջ սարեր են չինում։ Երբեմն այն սարերի վրայ աճում են խոտեր, թփեր, և չինւում են քաղաքներ, գիւղեր։ Մեր պատերն սպիտակացնող կիրն էլ քիչ չունի այն ջրային մանրիկների պատեաններից։

36. ԹՌՉՆԻԿ

Երէկ բացի ես դռնակը այն բանտի,
Որի մէջը խեղճ թռչնիկն էր բանտարկուած.
Նրան տուի ազատութիւն ցանկալի,
Եւ դաշտերին իրանց երգիչը կորած։

Թռաւ-անցաւ նա նուրբը օդը ճեղքելով,
Պայծառ օրուայ թարմութիւնը զգալով.
Թռաւ-անցաւ ազատութիւն շնչելով
Եւ ինձ համար մեղմ, մնջիկ աղօթելով։

Բառեր՝ դռնակ—*փոքրիկ դուռը.* բանդ—*արգելարան, վանդակ.* բանդարկել—*բանդը դնել, տուն գրցել.* ազատութիւն տուի—*արձակեցի.* ցանկալի—*ինչ որ ինքը կամենում էր, ուզում էր.* նուրբ—*նօսրը, ոչ-թանձր.* պայծառ—*պարզ, մաքուր.* թարմ—*թաղայ.* թարմութիւն—*նոր լինելը, թաղայ լինելը.* մեղմ—*կամաց.* մնջիկ—*ցածր ձայնով, մաքումը։*

Արտագրեցէ՛ք որոշող բառերը առարկայի անուան հետ՝ խեղճ թռչնակ, ցանկալի ազատութիւն, նուրբ օդ, պայծառ օր...

37. ՍՊՈՒՆԳ

Փոքրիկ Սաթինիկը՝ հևալով և հազիւ շունչ քաշելով, ներս վազեց մօր սենեակը և բացականչեց. «Մայրիկ, մայրիկ, տես թէ ինչպիսի սև մարդ է անց կենում մեր փողոցով. նրա վրայ, ոտից մինչև գլուխը, կախկխուած են մի տեսակ գեղեցիկ փափլիկ բաներ, սիրուն ծակոտիներով։ Նրանցից մինին ես այն էր ձեռք էի տալիս, բայց որ իմանաս, թէ նա ինչպէս ծիծաղելի կերպով կուչ եկաւ, կ՚ասես թէ վախեցաւ ինձանից. իսկ յետոյ ինքն իրան էլի ուղղուեց»։

—Հա՜, հասկանում եմ, ասաց մայրը. դա սպունգ վաճառող յոյն է. գնանք-գնենք մի քանիսը. ես վաղուց մտադիր էի գնել Ցոլակի համար։ Եւ բռնելով Սաթինիկի ձեռքից, մայրը դուրս գնաց բակը, ուր ներս էր եկել սպունգ վաճառողը։

Մինչև որ Սաթինիկի մայրը ջոկում էր սպունգներից աւելի ամուրներն ու փափուկները, աղջիկն անդադար սեղմում էր կամ մէկ կամ միւս սպունգը. նրան սաստիկ գրաւում էր այն բանը, թէ ինչպէս են նրանք սեղմուում և նորից բացուում։ Մայրը գնեց մի քանի սպունգ, վճարեց նրանց արժէքը և յոյնն էլ արդէն պատրաստուում էր հեռանալու, բայց Սաթինիկը դեռ էլի բռնում էր իւր փոքրիկ թաթիկներով չեչոտ սպունգները և հետաքրքրութեամբ նայում էր կամ յոյնին կամ մօրը։

—Դէ՛հ, գնա՛նք, աղջիկս, տեսնում ես՝ ծախողը հեռանում է։

«Իսկ դա ո՞րտեղից է հաւաքել այդքանը, մայրիկ»։

—Գնա՛նք, գնա՛նք. ես յետոյ տանը կը պատմեմ քեզ։

Եկան տուն։ Աղջիկը չէր հեռանում մօրից, այլ շարունակ խնդրում էր, որ պատմէ, թէ ո՞րտեղից է հաւաքել յոյնը այդքան սպունգները։

Մայրը կատարեց իւր աղջկայ խնդիրը և պատմեց, թէ ինչ տեղից և ինչպէս է ստացուում սպունգը *)։

Բառեր՝ հևալով—շուտ շուտ շնչելով, հեթեթալով. բացականչեց—բարձր ձայն տուեց. մտադիր եմ—միտք ունեմ. գրաւում էր—դիւր էր գալիս, հետաքրքիր էր թուում. սեղմել—հուպ տալ. սեղմուիլ—կուչ գալ, հուպ գալ. վճարել—արժէքը տալ. շարունակ—միշտ, անդադար։

Մայրը ջոկում էր ամուր սպունգներ. մայրը ջոկում էր փափուկ սպունգներ։—Մայրը ջոկում էր ամուրները. մայրը ջոկում էր փափուկները։

Առարկայի որպիսութիւնը ցոյց տուող բառերն էլ թիւ ունեն. նրանք առարկայի հետ միշտ եզակի են դրուում, իսկ երբ առարկան չկայ՝—յոգնակի։

---

*) *Ուսուցիչը պատմում է.*

Այն երկիրը, որտեղ ապրում են յոյները, կղզիներով ցրուած է ծովի մէջ։ (Ծովը մի մեծատարած ջուր է, այնքան մեծ, որ երբ մի անգամ նրա մէջն ես մտնում, էլ շուտով ցամաքի երես չես տեսնում)։ Այս ծովի ափերի մօտ յոյներից աղքատները լողալով խորասուզուում են ջրի տակը և այնտեղից հանում են այդ սպունգները։ Ջրիցը նոր հանած ժամանակը սպունգները ամենևին նման չեն լինում մեր գնածներին. նրանք ամբողջապէս ծածկուած են լինում լորձիւնով, այնպէս որ այդ խոր ծակոտիներն ամենևին չեն նշմարուում։ Այն լորձիւնը նոյնպէս կենդանի է և ապրում է ծովի յատակում, թէև ամենևին չէ կարող իւր տեղը փոխել։ Բայց քանի որ նրան չեն պոկել իւր ծնընդեան տեղից, նա ապրում և շարժում է իւր շօշափուկները։ Այդ շօշափուկներով նա ջրիցն ընդունում է իրան սնունդը։ Նրանք շատ անգամ բռնում են բաւական մեծ տարածութիւն ծովի խորքում։ Երբ-որ ծովի տակից հանում են նրան, ստիպուած են լինում երկար ժամանակ լուանալով մաքրել այդ անշարժ կենդանու անախորժահոտ լորձիւնը, մինչև որ հասնում են նրա փափուկ, ծակոտկենաւոր մասերին, որոնք հիմա էլ ներս են ծծում ջուրը, բայց հէնց սեղմում ես թէ չէ,

38. ԴԱՐՆԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Մարտըն անցաւ, հասաւ ապրիլ գեղեցիկ,
Հեռու աշխարհից եկաւ ծիծեռնիկ.
Բարով դու եկար, դարնան կարապետ,
Բուն շինողներից ամենից վարպետ։

Կռունկը թռաւ գնաց վերերէն,
Սոխակն էլ փախաւ մեր պարտէզներէն.
Մէկ դու մնացիր ճնճղուկների հետ,
Սիրուն ծիծեռնակ, դարնան կարապետ։

Պատուհանիս մօտ շինիր քո բունը,
Անուշ ճռուողով երգիր դարունը,
Ածա՛ ձու, հանիր գեղեցիկ ձագեր,
Ու մնա՛ մեզ մօտ մինչև սեպտեմբեր։

Բառեր՝ կարապետ—ճամպայ բաց անող, առաջից գնացող։ Կարապետ—տղամարդու յատուկ անուն. վերերէն—վերևներից. ճնճղուկ—ծիտ. երգիր դարունը—երգ ասա՛ դարնան մասին, գովիր դարունը։

Արտագրեցէք որպիսութիւնը առարկայի հետ՝ գեղեցիկ ապրիլ. հեռու աշխարհ. սիրուն ծիծեռնակ. անուշ ճռուողիւն. քընքուշիկ ձագեր...

Միևնոյն որպիսութիւնները գրեցէք առանց առարկայի՝ յոգնակի թուով։

Նորից դուրս են թողում։ Հէնց իւր այս յատկութեամբն է նա մեզ պիտանի և օգտակար։ Ուրեմն մեր ունեցած սպունգը այն ծովային կենդանու ամրամասը, նրա ոսկրակազմն է։

39. ՄԱՏԻՏ

Ցոլակը շատ սրամիտ մանուկ էր. մի օր նա իւր հօր գրասեղանի առաջ նստած մատիտ էր կտրում իրան համար. բայց քանի կտրում էր, կոտրւում էր. թէև մատիտ կտրելը դժուար բան չէր, բայց այսօր գործը չէր յաջողւում։ Ցոլակը մտածման մէջ էր. նա անուշադիր էր, նրա համար էլ գործը գլուխ չէր գալիս։

—Ի՞նչ ես անում, փոքրիկս, ներս մտնելով ասաց հայրը. երևում է՝ խելքդ ուրիշ բանի վրայ է, նրա համար էլ գործը ձեռիցդ վայր է ընկնում։

«Այո՛, հայրիկ, ես ուզում եմ իմանալ, թէ ինչպէս է այս սև ու փայլուն չոփը փայտէ ճիպոտի մէջ մտել ու մատիտ դարձել»։

—Է՜, որդի, կ'ուզես հարիւր մատիտ կտրատիր ու կոտրատիր, բայց էլի քո խելքովդ ոչինչ հաստատ տեղեկութեան չես հասնիլ... Դա արդէն շատերին յայտնի է՝ —գրքի մէջ կարդա՛, հարցրու... իսկ ինչ-որ ամենքն էլ վաղուց գիտեն, նրա մասին հարկաւոր չէ գլուխ ցաւացնել։

«Գրքերի մէջ ես այդ բանին չեմ պատահել, իսկ եթէ դու պատմես, հայրիկ, շատ շնորհակալ կը լինեմ»։

—Շատ լաւ. նայիր այդ կտորներին, որ դու այդտեղ թափել ես. նրանք սև են, նշանակում է՝ ինչի նման են։

«Ածուխի նման են, հայրիկ»։

—Շատ լաւ. բայց նկատիր, որ ածուխն աւելի փափուկ է և, երբոր կոտրում ես, հաւասար չէ կոտրւում. իսկ երկաթը, տեսել ես, ինչպէս է կոտրւում։—Համեմատիր...

«Հասկացայ. այստեղ խառնուած են երկաթն ու ածուխը»։

—Ճշմարիտ է, ասաց հայրը և համառօտ կերպով պատմեց, թէ ինչպէս է պատրաստւում մատիտը*)։

Դիտեցէ՛ք եւ զանազանեցէ՛ք՝ կտրել—կտրատել. սրել—սրոտել. քանդել—քանդոտել. փորել—փորփրել. պատառել—պատառոտել. կոտրել—կոտրատել։

Դիտեցէ՛ք հետեւեալ բառերի կազմութիւնը՝ սրամիտ, գրասեղան, այսօր, կապարաքար։

Նկատեցէ՛ք եւ զանազանեցէ՛ք՝ երկար ճիպոտ, փայտէ ճիպոտ. մեծ սար, կաւիճէ սար. բարձր տուն, քարէ տուն. տափակ կտուր, հողէ կտուր։

40. ԼՈՒՍԻՆԸ ԵՒ ԸՐԵՒԸ

Արի՛, լմ՛ քոյրիկ, լոյս տուր գիշերը,
Թէ ամաչում՝ ես դուրս գալ պարզ օրը»։
—Ո՛չ, վախենում՝ եմ՝ ես, լուսին եղբայր,
Գիշերը շրջել, մարդկանցը լոյս տալ։
«Ցերեկը շրջիր, կը տամ՝ ասեղ քեզ,
Որ մարդ կը նայի, աչքերը կ՚ածես»։

---

*) *Ուսուցիչը բացատրում՝ է.*

Ածուխն ու երկաթը անհաւասար չափով, այսինքն մէկից շատ, միւսից քիչ, հողի տակը խառնուել են միմեանց հետ, միացել են և դրանից առաջացել է կապարաքարը։ Մարդիկ էլ գտել են նրան, սղոցել են և անց են կացրել ճիպոտի մէջ ու մատիտը պատրաստուել է։ Բայց այս էլ պէտք է իմանաս, որ սարերում գտած կապարաքարով չեն բաւականացել մարդիկ. այժմ նրանք միևնոյն բանը չինում են արհեստական կերպով, այսինքն՝ գործարանում. դրա համար առանձնապէս շինած հնոցներում երկաթը հալում են, նրա հետ ածուխ են խառնում և կապարաքար են պատրաստում, պատրաստելուց յետոյ՝ նրան ջոկջրկում են և ստանում զանազան տեսակներ՝ փափուկ, պինդ... Փափուկ մատիտների մէջ երկաթը սակաւ է, իսկ պինդերի մէջ նա համեմատաբար աւելի է։

Այն օրից արդէն աննման քոյրը
Տալիս է երկրին տաք, փայլուն օրեր.
Իսկ գիշերները աստղեր անհամար
Լուսին եղբօր հետ փայլում՝ են պայծառ։

Գրեցէ՛ք եւ զանազանեցէ՛ք՝ աննման քուրիկ, արեւիկ քուրիկ. անուշիկ եղբայր, լուսին եղբայր. բարի վարժապետ, Յովհաննէս վարժապետ։

Գրեցէ՛ք միքանի զոյգ անուններ միեւնոյն առարկայի համար՝ Թիֆլիս քաղաք, Կուր գետ... (Բացայայտ որոշողները—բացայայտիչները)։

41. ՌԵՏԻՆ

Վարդիկը, որ մի փոքրիկ, աշխատասէր ու խելօք մանուկ էր, մի անգամ գրքից դասն արտագրելիս, ը տառի տեղ ա գրեց։ Վարդիկը նկատեց իւրաքսիալը և սկսեց լաց լինել։

«Մի՛ լաց լինիր, սիրունիկ, ասաց նրան իւր մայրը. քան թէ լաց ես լինում, վեր առ, ուղղիր»։

—Բայց այն ժամանակ կը կեղտոտուի, մայրիկ. իսկ վարժապետը պատուիրել է, որ մաքուր և անսխալ արտագրենք։

«Է՞հ, այդ ցաւին էլ ճար կ՚անուի. վեր առ ռետինը ու կամաց և զգուշութեամբ քերիր սխալ գրած տառը. միայն զգոյշ կաց, որ թուղթը չը ծակես»։

—Յետոյ այդ քերած տեղը ինչպէս ը գրեմ, մայրիկ. չէ՞ որ թանաքը կը ծծի և աւելի վատ կը լինի։

«Այ, ինչպէս կ՚անես. զգուշութեամբ քերելուց յետոյ՝ դու նրան կը տրորես գրչահատի կոթով. լաւ տրորելուց յետոյ՝ շուտով կը գրես հարկաւոր տառը և իսկոյն աւազ կածես վրան... էլ ոչինչ չի նկատուիր»։

Հացը դադարեց. տառը ուղղուած էր արդէն, և Վարդիկն սկսեց իւր մօրը հարց ու փորձ անել.

—Ո՞րտեղից է, մայրիկ, այդ պատուական ռետինը, որ այդպէս զարմանալի կերպով ձգւում, մատովդ է փաթաթւում, իսկ երբ-որ բաց ես թողում, նորից սեղմւում, կուչ է գալիս։ Իսկ այն միւսը հագցրած է փայտի մէջ և ինչ երկար է ու մեծ... Ո՞րտեղից են այդ բոլոր ռետինները, մայրիկ։

«Մի տեսակ ծառ կայ, ասաց մայրը, որ աճում է տաք երկիրներում. այդ ծառից հիւթ է դուրս գալիս, իսկ այդ հիւթիցը կամ խէժիցը մարդիկ պատրաստում են զանազան տեսակ ռետիններ. նրանցից մի քանիսը թանաքով գրածի համար են, միւսները մատիտով գրածի համար։ Ռետինից շինում են նոյնպէս կրկնակօշիկներ, կօշիկներ, գնդակներ և ուրիշ շատ բաներ։

Բառեր՝ ռետին—բէզին, խունկ. աճում է—դուրս է գալիս, բուսնում է. հիւթ—ծուծը, ջուրը. խէժ—թանձր հիւթ. կրկնակօշիկ—գալոշ։

Գրեցէ՛ք միքանի շնչաւոր առարկաների անուններ այս դասից. առարկաների մօտ դրէք իրանց յարմարաւոր որպիսութեան անուններ։

Հետեւեալ անունների մօտ դրէ՛ք մի երկրորդ անուն իրանց պաշտօնին համեմատ՝ Վարդիկ, մայրիկ, վարժապետ, աշակերտ, քոյր, եղբայր, քեռի, մօրաքոյր, ընկեր, ընկերուհի, թագաւոր, թագուհի։

42 ԵՐԿՈՒ ՔՈՑՐ

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,
Հոգով դեռ արի, գլխով ալեոր.
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը.
Ոսկի ասացին գիտունք այն դարը։

Ունէր նա երկու մատղահաս աղջիկ,
Մինը խիստ տրգեղ, միւսը գեղեցիկ։
Մի օր տգեղը ասում է միւսին՝
«Երթանք ծովի ափ, քոյրիկ, միասին»։

Սիրունը գնաց առաջից տրտում,
Տգեղը յետքից ոխ պահած սրտում.
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,
Իւր սիրուն քրոջ գլորեց նա ցած։

Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.
«Քոյրիկ, եմ քոյրիկ, փրկէ ինձ մահից.
«Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
«Ա՛ռ, էն քեզ լինի, պարգևէ ինձ կեանք»։

—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ։
«Քոյրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,
Կը տամ քեզ ոսկէ պսակ պատուական»։

—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ։
«Քոյրիկ, մի թողնիր դու ինձ անտէրունչ.
«Քեզ սիրուն փեսաս կը տամ անտրտունջ»։

Տգեղի սիրտը դարձել էր լեռ քար,
Քրոջ խնդիրքը թողեց անկատար։

Ձկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,
Բռնեց մարմինը սիրուն աղջկան,
Ջրիցը հանեց, դրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ։

Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջիկան,
Լացեց ու առաւ, դրեց ուսի վրան,
Տարաւ իւր տունը այդ անգին գիւտը,
Չորացուց նորա մարմնի դիպ հիւթը.
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկրերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից։
Երբոր ամեն բան պատրաստեց կարգին,
Գնաց արքունիք՝ տաւիղը ձեռքին.
Երբ մտաւ դահլիճ շքեղ զարդարած,
Տեսաւ տգեղին փեսի մօտ կանգնած.
Բացեց բերանը, լարերին խփեց,
Հիւրերի առաջ բարձրաձայն երգեց.

«Հնչէ, իմ տաւիղ, հնչէ համարձակ,
«Հարազատ քոյրս խլեց իմ պսակ.
«Լսէ, իմ ծնող, լսէ սիրական,
«Հարազատ քոյրս խլեց իմ փեսան.
«Լսէ, ժողովուրդ, լսէ անխրոով,
«Հարազատ քոյրս գլորեց ինձ ծով»։

Միւս օրը դահիճք խարոյկ շինեցին,
Մահապարտ քրոջ մէջը գլորեցին։
Հուրը պլպլալաց, աղջիկը կանչեց.
«Իմ մեղաց համար Ստուած ինձ պատժեց»։

Բառեր՝ արի—քաջ, առողջ. ալեոր—ծեր, սպիտակ մազերով ծածկուած. գիտունք—գիտացող, ուսումով մարդիկ. մատղահաս—ջահիլ տարիքով. ոխ—քէն, ջիղը. մանեակ—ожерелье. բնաւ—ամենևին. անտրտունջ—առանց գանգատուելու, առանց փընթփընթալու. լեռ քար—պինդ քար, ժայռ. գիւտ—գտնուածը. տաւիղ—քնար, սազ. արքունիք—թագաւորի պալատը. լարեր—տաւիղի թելերը, սիմերը.

դահիճ—պաշտօնեայ՝ մարդկանց կախելու, գլխատելու, պատժելու համար. հուր—կրակ. իմ մեղաց համար—իմ մեղքերի համար։

Դիտեցէ՛ք առարկաների արածը, գործածը՝ Սիրունը ասում է՝ ես ունեմ տանը գեղեցիկ մանեակ... ես այն քեզ կը տամ... դու պարգեւի՛ր ինձ կեանք։

Տգեղը գնաց, ասաց, կանչեց...

Ձկնորսը ձգեց, բռնեց, հանեց, դրեց, ցանեց...

Աշուղը անցաւ, տեսաւ, լացեց, առաւ, դրեց տարաւ, չորացրեց, շինեց, հիւսեց...

Դու փրկէ, լսէ, հնչէ... դու մի յուսար, մի թողնիր...

Արտագրած բառերը ցոյց են տալիս թէ առարկան ինչ է անում, ինչ կանէ, ինչ պիտի անէ, կամ ինչ պիտի չանէ...

43. ԿՐԱԿ

Սիմոնը գնաց դաշտը։ Շատ ցուրտ էր և անձրև էր գալիս. նա դողդողում էր ամբողջ մարմնով։ Սիմոնը մտաւ անտառը, չոր ցախ ժողովեց, զրպանից հրահանը հանեց, զարկեց քարին և կրակ արեց։ Նա տաքացաւ, շորերը ցամաքեցրեց և իւր չոր հացի կտորը տաքացրեց, կերաւ։

Կրակի առաջ նստած՝ Սիմոնը մտածում էր. «Ի՞նչ լաւ բան է կրակը. առանց նրան ոչ կերակուր կարելի է եփել և ոչ տաքանալ։ Տես, որքան գործ է շինւում դարբնոցում և գործարաններում։ Եթէ կրակը չլինէր, մենք երկաթից ինչպէս պիտի շինէինք պայտեր, խոփ, կացին և ուրիշ շատ բաներ։ Ճշմարիտ, թէև երբեմն կրակից մենք վնաս ենք ստանում, բայց այդ էլ մեր անզգուշութիւնից, մեր յիմար անհոգութիւնից է լինում։ Մենք արեգակից էլ ենք տաքանում. նա էլ կրակի նման այրւում է երկնքում։ Առանց արեգակի ոչինչ չէր աճիլ՝ ոչ դաշտերում, ոչ անտառներում և ոչ պարտէզներում, և

բոլոր կենդանիք ու մարդիկ կը մեռնէին քաղցածութիւնից, իսկ այժմ Աստուծոյ ողորմութեամբ ապահով ապրում ենք։

Բառեր՝ հրանան—չախմախ. արէթ—դաւ (трутъ). կայծքար—չախմախաքար. դարբին—երկաթագործ. դարբնոց—դարբնի խանութը. գործարան—ուր որ շինում են զանազան գործուածքներ. պայտ—ձիու նալը. խոփ—գութանի երկաթը, որ հողը բարձրացնում, շուռ է տալիս։

Մենք ինչ ենք անում՝ տաքանում ենք, շինում ենք, մրսում ենք...

Սիմոնը ինչ էր անում՝ դողում էր, մտածում էր, ասում էր...

Սիմոնը ինչ արաւ՝ մտաւ անտառը...

44. ԴԱՐԲԻՆ

Կրառանը ձեռքին, զընդանն առաջին,
Քիթ-երես մըրոտ, դարբնոցի միջին,
Կաշուէ դոգնոցը առաջը կապած,
Լըռիկ կանգնած է մեր Խաչոյ դարբին։

Փուքսը—փո՛ւ-հա-փո՛ւհ—փչում է, փչում,
Կայծերը ու մոխիրը դէս ու դէն փըռում,
Երկաթի մի շերտ հնոցը կոխած,
Սաստիկ տաքիցը վառւում, կարմրրում։

Խաչոն հանում է երկաթի շերտը,
Զընդանի վրայ կրառանով ծեծում,
Շինում նրանից պայտ, մեխ ու՝կացին
Եւ իսկոյն ջրի տաշտակը կոխում։

Թշշում է երկաթն ցուրտ ջրի միջին,
Ամպի պէս փըռում տաք-տաք գոլորշին,
Կրկին պնդանում, կրկին փափկանում,
Մինչև պատրաստուած շըպրտում գետին։

Այսպէս ամբողջ օր մեր դարբին Խաչոն
Կրակի առաջ, այն կեղտ ու մըրում,
Մի կտոր չոր հաց ճարելու համար
Կուչ-ձիգ անելով իւր կեանքն է մաշում։

Բառեր՝ կռան—մեծ չաքուճ. մուրճ—սովորական չաքուճ. զընդան—սալը. շերտը—կտորը. գոլորշի—շոգի։

Արտագրեցէք առարկան եւ նրա արած գործողութիւնը։

45. Օ Դ

—Դու օդ տեսել ես։

—Նա միշտ քեզ մօտ է և դու նրան չես տեսնում։

—Բայց կարելի է լսել, թէ ինչպէս է ձայն հանում նա։

—Տեսնենք։

Ահա քամին զօղանջում է խողովակների մէջ և սուլելով ներս է մտնում տան ամենայն բացուածքներից. ահա նա խփում է պատուհաններին և սաստիկ փոշի է բարձրացնում ճանապարհներում։

Իսկ ինչ բան է քամին։

Նա օդն է, որ շարժւում է—մի տեղից միւս տեղ է փախչում։ Փախչելու ժամանակ նա զարկում է որևիցէ առարկայի և լսւում է աղաղակ, շվվոց։ Երբ փչում ես փողդ, կամ սրինգ ես ածում, կամ մտրակդ պտրտացնում ես,—ամեն անգամ ձայն է լսւում։ Փորձի համար մի թղթի պարկ շինիր և մի փոքրիկ ծակ թողելով՝ փչիր, ուռցրու նրան, իսկ յետոյ բռունցքով խփիր այդ փչած

պարկին. պարկը սաստիկ կը ճայթի և կը պատռուի։ Սա օդն էր, որ դու լցրել էիր նրա մէջ քո բերանից։ Երբ-որ վազում ես, զգում ես, թէ ինչպէս է խփում օդը երեսիդ։ Նշանակում է՝ նա միշտ քեզ հետ է և դու նրանով ես շունչ քաշում։ Առանց օդի դու մի բոպէ էլ չես կարող ապրել։ Երբ-որ դու, լողանալիս, ջրի տակն ես անում, քո չորս կողմդ ջուրը է լինում։ Բոլորովին այնպէս էլ օդն է շրջապատում քեզ ցամաքի վրայ և դու նրան չես տեսնում այն պատճառով, որ նա շատ նուրբ է և թափանցիկ։ Օդը մինչև անգամ քո ներսդ էլ է մտնում։

Բառեր՝ զօդանջում է—զընգ-զընգում է. խողովակ—լուլա, (труба). *սուլել—չվվացնել. բացուածք—ճեղք. աղաղակ—ձայն, բըղաւոց. փող—խողովակ, զուռնայ. սրինգ—չվվի. մտրակ—դամչի. բռունցք—դմբուզ* (кулакъ). *նուրբ—բարակ, նօսր. թափանցիկ—նուրբ, պարզ, լոյս անցկացնող։*

46. ՔԱՄԻՆ ԵՒ ՆԱՒԵՐԸ

Ծովի երեսին հանդարտիկ քամին
ճեմում է ազատ՝ ծիծաղը դէմքին.
Փոքր ու մեծ նաւեր՝ առագաստ բացած,
Նորա ժպիտին նայում են յառած.
Քամին հնչում է յաջողակ ու մեղմ,
Նոքա խաղում են, ճեմում քաղցրադէմ.
Կանգնում է քամին, գժւում, բորբոքւում,
Տանջւում են նաւերն, ողբում ու սրգում։

Բառեր՝ ճեմում է—զբօսնում է. առագաստ—վարագոյր, նաւի քաթանէ թիւերը, որոնց քամին ուռցնում է ու առաջ տանում նաւը. յառած—աչքը գցած. պլշած. հնչում է—փչում է. յաջողակ—լաւ կողմից. մեղմ—կամաց. բորբոքւում—սաստկանում. սրում են—սուզ են անում, լալիս են։

Ես ճեմում եմ, դու ճեմում ես, նա ճեմում է. մենք ճեմում ենք, դուք ճեմում էք, նոքա ճեմում են։

Ես ճեմեցի, դուք ճեմեցիք... Ես կը ճեմեմ, դուք կը ճեմէք...

Ես պիտի ճեմեմ, դուք պիտի ճեմէք...

Գործողութեան անունն էլ, առարկայի անուան պէս, երկու թիւ ունի՝ եզակի եւ յոգնակի։

Արտագրեցէք այս դասից առաջ եզակի գործողութիւնները, յետոյ յոգնակիները։

47. ՈՒՐԻՇԻՆ ՀՈՐ ՓՈՐԵՍ, ԻՆՔԴ ՄԷՋԸ ԿԸՆԿՆԵՍ

Մի ծեր մարդ ապրում էր իւր պառաւ կնոջ հետ։ Պառաւը շատ չար կին էր և ունէր մի աղջիկ՝ անունը Զողակաթ։ Զողակաթը չարութեան կողմից իւր մօրից պակաս չէր։

Ծերը հանդարտ և բարի մարդ էր և ունէր մի աղջիկ, անունը Մարիամ։ Մարիամն էլ շատ հանդարտ, աշխատասէր և գեղեցիկ աղջիկ էր։

Խորթ մայրն ամենևին չէր սիրում Մարիամին։ Նա միշտ ասում էր իւր մարդուն. «Չեմ ուզում Մարիամի հետ կենալ. տար նրան անտառը, այնտեղ մի գետնափոր գըտիր, թող նա այնտեղ մանի, գործի, ինչ ուզում է՝ անի»։

Պառաւն այնքան ասաց, որ խեղճ մարդու գլուխը տարաւ։ Էլ ուրիշ ճար չկար. ծերը լծեց սայլակը, վեր առաւ Մարիամին և ճանապարհ ընկաւ։ Գնացին անտառը և այնտեղ գտան մի այր։ Շատ ցաւում էր ծերը իւր աղջըկայ վրայ, բայց ինչ կարող էր անել։ Նա տուեց Մարիամին հրահան, կայծաքար, արէթ և մի տոպրակ բրինձ ու ասաց նրան. «Մարիամ, կրակ վառիր, որդի, բրնձից քեզ համար կերակուր եփիր, խրճիթդ լաւ սրբիր—աւելիր և դու էլ նստիր ու մանիր. մի վախենար, վաղը ես կը գամ քեզ տեսութեան»։

Մարիամը մնաց մենակ, ամբողջ օրը մանեց, իսկ երբ-որ մթնեց, վառարանը վառեց և իրան համար կերակուր եփեց։ Հէնց որ կերակուրն սկսեց եփ գալ, մին էլ տեսնես, յատակի տակից մի մուկը դուրս վազեց և նրան ասաց. «Սիրուն աղջիկ, մի գդալ սպաս տաս ինձ՝ ուտեմ»։ Մարիամը լաւ կերակրեց մկանը. նա էլ շնորհակալութիւն արեց ու գնաց։

Ինքը Մարիամն էլ հաց կերաւ ու սկսեց մանել։ Յանկարծ, կէս գիշերին, մէկ արջ ներս է մտնում խրճիթը և ասում է նրան. «Ապա, աղջիկ, կրակը հանգցրու, արի, աչքակապուկի խաղանք. վեր առ այս արծաթէ զանգակն ու զընգզընգացրու, իսկ ես կ'աշխատեմ քեզ բռնել»։

Մարիամը շատ վախեցաւ և չէր իմանում, թէ ինչ անէ։ Բայց այն րոպէին մուկը դուրս վազեց յատակի տակից, բարձրացաւ Մարիամի ուսերը և նրա ականջումն ասաց. «Մի վախենար, Մարիամ, կրակը հանգցրու, դու էլ դռան յետևը թաղ կաց, իսկ զանգակն ինձ տուր»։ Մարիամն այնպէս էլ արեց։

Արջն սկսեց խաղը, բայց ամենևին չկարողացաւ մկանը բռնել. մուկը վազում էր և զընգզընգացնում, իսկ արջը նրա յետևից պտոյտ-պտոյտ էր անում։ Նա շատ այս ու այն կողմն ընկաւ, բարկացաւ, կատաղեց, գոռաց բարձր ձայնով, սկսեց դագանակով բոլոր անկիւններին ու պատերին խփել, կոտրտեց եղած ման-չամանը, բայց մկանը ինչ կարող էր անել։ Վերջապէս արջը հանդարտուեց ու ասաց. «Դու շատ լաւ աչքակապուկի ես խաղում, աղջիկ, այդ պատճառով ես առաւօտեան կ'ուղարկեմ քեզ համար մի ջոկ ձի և մի սայլ հարստութիւն»։ Ասաց ու գնաց։

II.

Միւս օրը առաւօտեան պառաւն ինքն ուղարկեց

ծերին անտառ. «Գնա, ասաց, տես, շատ է մանել քո Մարիամը»։

Ծերը գնաց. իսկ պառաւը նստեց լուսամուտի առաջ և ինքն իրան ասում էր. «Ահա ծերուկս կը գայ և Մարիամի ոսկորներն էլ հետը կը բերէ»։

Պառաւը նստած սպասում էր. մէկ էլ լսեց, որ անտառի կողմից մի չըխկչըխկոցի ձայն է գալիս։ Պառաւը մտածեց. «Ահա ծերուկս գալիս է և Մարիամի ոսկորներն էլ հետը բերում է»։ Այս խօսքերն ասած-չասած՝ բակի դռները բացւում են, ձիերը ներս են վազում. իսկ Մարիամը, իւր հօր հետ սայլի վրայ նստած, անթիւ բարիք է բերում։ Պառաւը բարկանում, կատաղում է... «Ա՜յ քեզ հրաշք, գոռում է նա. վաղն էլ իմ աղջկաս տանեմ անպատճառ. իմ Զողակաթը քո Մարիամի հատը չէ. նա երկու ջոկ ձի և երկու սայլ ոսկի կը բերէ»։

III.

Միւս օրը ծերը պառաւի աղջկան տարաւ անտառի այրը և տուեց նրան բոլոր բաները, ինչ-որ իւր աղջկան էր տուել։ Զողակաթը կրակ վառեց և ճաշ եփեց։ Մուկը յատակի տակից դուրս նայեց և ասաց. «Սիրուն աղջիկ, խնդրեմ մի գդալ կերակուր տաս»։ Զողակաթը գոռաց նրա վրայ. «Կորիր, կեղտոտ անպիտան. դեռ կերակուր էլ է ուզում». ասաց ու ճիպոտով խփեց խեղճ մկան մէջքին։ Մուկը փախաւ, մտաւ իւր բունը. իսկ Զողակաթը նստեց միայնակ, բոլոր կերակուրը կերաւ ու պարկեց քնելու։

Կէս գիշերին արջը ներս մտաւ այրը և ասաց աղջկան. «Ա՜յ աղջիկ, արի աչքակապուկի խաղանք. առ այս փոքրիկ զանգակը, վազիր և զընգզընգացրու, իսկ ես կ'աշխատեմ քեզ բռնել»։ Աղջիկը վեր առաւ զանգակը և սկսեց վազել.

բայց ուր պիտի փախչէր արջի ձեռքից։ Նրա ծնկները ծալւում էին, ձեռները դողդողում և գանգակն ինքն իրան զընգզընգում էր։ Իսկ մուկը յատակի տակից ասում էր. «Հար Զողակաթը թող ոչնչանայ, արժանի է»։

Միւս առաւօտ պառաւը մարդուն ուղարկեց իւր աղջկայ յետեից. «Գնա, ասաց նա, ձիերը և ոսկին բեր»։

Ծերը գնաց. իսկ պառաւը նստեց դռանը և սպասում էր։ Փոքր ժամանակից յետոյ նա լսեց, որ անտառի ճանապարհից թըխկթըխկոցի ձայն է գալիս։ Պառաւը մտածեց. «Ահա գալիս է իմ Զողակաթը և իրան հետ անթիւ բարիք է բերում»։

Վերջապէս ծերունին մօտեցաւ դռանը։ Պառաւի աղջիկն այնպէս ջարդուած ու կոտրատուած էր, որ հազիւ կարողացան սայլակից ցած բերել։ Կատաղեց շար պառաւը, բայց ինչ կարող էր անել։

Մի քանի ժամանակից յետոյ Մարիամը մի խելօք երիտասարդի հետ ամուսնացաւ։

Արտագրեցէք այն բառերը, որոնք ձեզ չեն պատահած...

Արտագրեցէք միքանի գլխաւոր առարկաներ իրանց գործողութիւններով։

Արտագրեցէք միքանի որպիսութիւն ցոյց տուող բառեր այն առարկաների հետ, որոնց համար նրանք դրած են։

Արտագրեցէք այն բոլոր առարկաների անունները, որոնց համար միաժամանակ դրած է երկու անուն (բացայայտող բառեր)։

Ջոկեցէք այն անունները, որոնց մօտ դուք ինքներդ կարող էք աւելացնել մի ուրիշ յարմարաւոր անուն, որ նրանց ո՛վ կամ ինչ լինելը ցոյց տայ (բացայայտէ)։

ՇՐՋԱՆ ԵՐՐՈՐԴ

Նիւթեր Կենդանական Աշխարհից

48. Զ Ն Ի Կ

«Ապա, սիրուն շնիկ, կարդա՛, թէ ինչ է գրած իմ գըրքումը», ասաց Հայկը իւր փոքրիկ շանը։

«Ի՞նչ իմ բանն է գիր կարդալը, ասաց շունը. ես տունը կը պահպանեմ, գիշերները չեմ քնիլ ու միշտ կը հաչեմ, գայլերին կը վախեցնեմ, որսի կը գնամ, նապաստակ կը բռնեմ, բաղեր կըդտնեմ. իմ կողից այսքանն էլ բաւական է»։

49. Կ Ա Տ Ո Ի

Փիսիկ-փիսիկ, դու չա՛ր փոքրիկ, շատ սիրուն ես, խորամանկ ես, մետաքսապատ թաթեր ունիս, սուր եղունգով մատներ ունիս։ Ականջներդ շուտ են լսում, մեծ աչքերդ մթնում փայլում, երկար բեխերդ ոլորած, խեղճ մկներին մահ ես նիւթում։

Քո ընկերիդ երբ տեսնում ես, պոչդ այս-այն կողմն ես շարժում, մէջքդ ծալում, կռացնում, աչքերդ փակ

մռռացնում, բայց թէ յանկարծ մի խեղճ մուկիկ մի անկիւնից դուրս է ընկնում, քո պողպատէ թաթիկներով գլխին խփում ես, սպանում։

50. ՇՈՒՆԸ ԵՒ ԿԱՏՈՒՆ

Ժամանակով կատուն ճօն էր.
Շունն էլ գլխին դդակ չունէր.
Սա մի անգամ, որդիանց-որդի,
Ճանկել էր մի գառան մորթի.
Եկաւ մի օր, ձմրան մրտին,
Կատուի կուշտը տարաւ մորթին։

«Բարի-աջողում, ուստայ Փիսոյ,
Գլուխս մրսեց, ի սէր Աստ'ծոյ,
Առ էս մորթին ու ինձ համար
Գըդակ կարիր գլխիս յարմար.
Վարձըդ կը տամ, հանդիստ մընայ,
Միայն՝ խնդրում եմ, չուշանայ»։

—Աչքիս վերայ, քեռի Քուչի,
Մի գըդակ է, հօ մի քուրք չի.
Քո պատուական խաթրի համար,
Ուրբաթ օրը համեցէք, տար.
Փողի մասին աւելորդ է,
Մեր մէջ խօսելն էլ ամօթ է։

II.

Ուրբաթ օրը քեռի Քուչին
Ուստից առաջ, բաց-բաց կուճին
Թափ-Ֆափ տալով, քայլերը մեծ,

Ուստայ կատուի շէմքում կանգնեց։
Ուստէն եկաւ, քուրքը հագին,
Ճանը տեսաւ. բեղի տակին
Իրան-իրան քիչ փընթփընթաց
Ու մուշտարու վրայ թընդաց.
—Ի՞նչ եղաւ քեզ, վա՜հ, տընաշէն.
Չես թողնում որ մի շունչ քաշեն.
Հեշտ բան հօ չէ. դեռ ես նոր եմ
Ցըրցամ տուել, թէ որ կարեմ։

«Դէհ, հէր օրհնած, այդպէս ասա,
Այդ բարկանալդ էլ ինչիս ա»,
Ասաւ Քուչին ու նեղացած
Վերադարձաւ, գլուխը բաց։
Մին էլ եկաւ. դարձեալ չըկար։
Այս անգամը դիպան իրար.
Էլ գող փիսոյ, էլ քաչալ շուն...
Բանը հասաւ դիւանբաշուն։
Շունը մինչև գընաց-եկաւ,
Ուստայ կատուն կոտրը ընկաւ,
Գըլուխն առաւ ու մի գիշեր
Հայդէ, կորաւ, էն կորչիլն էր...

III.

Այն օրուանից մինչև այսօր
Շունն այս բանը չի մոռանում.
Որտեղ կատուին պատահում է,
Յարձակւում է, մորթուց քաշում.
Իսկ սեերես կատուն յանկարծ
Յետ է դառնում ու բարկացած

Փըշտացնում է՝ իբր նոր եմ
Ցըրցամ տուել, թէ որ կարեմ։

Բառեր՝ ճոն—քուրք կարող, գլխարկ կարող. քեռի—մօրեղբայր. կումին—գլուխը. թնդաց—բարկացաւ. ցրցամ տուել—ջրցան տուել, թրջել. դիւանբաշի—գլխաւոր դատաւոր. յարձակւում է—վրայ է ընկնում։

51. ԵՐԿՈՒ ՄՈՒԿԸ

Փոքրիկ մուկը մեծին ասաց. «Ինչքան չար և ժլատ է մեր տանուտէրը. տունը կատուներով լցրել է. այս դեռ բաւական չէ՝ անկիւններումն էլ թակարդներ է դրել և ամեն կերպով կամենում է մեզ ջնջել։ Մի՞թէ մեզ շատ բան է հարկաւոր. մի կտոր ճարպ, քիչ հացի փշրանք, միքանի հատիկներ—ինձ բաւական է։

—Ճշմարիտ է, պատասխանեց մեծ մուկը, մեզ ամեն մինիս քիչ է հարկաւոր, բայց մենք էլ քիչ չենք։

52. ԴԱՉՏԵՑԻ ՄՈՒԿԸ

Վախկոտ, մոխրագոյն գազան,
Շատ մեծ է քո երկիւղը.
Ոտներդ զգոյշ ես փոխում,
Սիրտդ սաստիկ է շարժւում.
Քիչ վախեցիր,
Ես չար մարդ չեմ.
Քեզ չեմ հալածիլ,
Միամիտ կացիր։
Քո խրճիթդ քարուքանդ եղաւ

Եւ հողի հետ հաւասարեցաւ.
Դու նոր հողը պիտի փորես,
Փափուկ մամուռ պիտի ճարես,
Նոր տուն շինես,
Մէջը ապրես։
Չորս կողմումդ փչող քամուց
Խիստ ներգործող սառնամանուց
Ազատ լինես։



53. Ձի

Ձին գեղեցիկ կենդանի է։ Նա, երբ-որ ուրախ է, խրախնջում է եռանդով, ականջները վեր ցցում, աչքերն այս ու այն կողմը ոլորում, վիզը սիրուն կռացնում և իւր ամուր սմբակներով գետինը թակում։ Ձին պարանոցի վրայ երկար բաշ ունի, որի մի փունջը, երկու մանրիկ ականջների միջով, ծածկում է նրա ճակատը. յետևի կողմը նա ունի հերարձակ ազի, որ տէրերը, թամբելուց յետոյ, կշկռում, կարճացնում են, կամ սանրում ու երկար ձգուած են թողում։

Ձիու բերանը սանձ են դցում, մէջքին սիրուն թամբ

են դնում, փորքաշը կապում, կրծկալը պնդում, երկու կողմից ասպանդակներ կախում, յետոյ հեծնում ու քշում, ուր որ սրտերն է ուզում։

Ձիու սմբակները պայտում են, որ ոտները չվնասուին։ Ձին արագ և դեղեցիկ գնացք ունի. նա ուժեղ կենդանիներից մինն է։ Երբ աշխոյժ երիվարը չափ է ընկնում, գետինը ոտների տակը, կ'ասես, տատանուում է։

54. ՑԽՈՒՐ ՁԻ

Ի՞նչ ես խրրխընջում, իմ ծի եռանդուն,
Ինչի՞ ես այդպէս գլուխդ կախել.
Ինչի՞, ինձ ասա, քաշդ չես շարժում,
Չես կոծում քերնիդ ոսկեփայլ սանձեր։

Մի՞թէ ես քեզ չեմ պատուում ու քորում
Եւ կամ քեզ զարի առատ չեմ տալի.
Մի՞թէ սարքդ չէ սիրուն, շողշողուն,
Կապդ ու փորքաշդ չե՞ն աբրեշումի.
Երկզոյգ պայտերդ չե՞ն արծաթաջրած,
Ասպանդակներդ ոսկով չե՞ն պատած։

Ցխուր ծին ինձի այս պատասխանեց.
«Ես նորա համար եմ այսչափ տրտում,
Որ որոտմունքի ձայներ եմ լսում.
Ահա փողերի թինդ ու դղրդիւն,
Սրերի ճայթիւնն աշխարհ է լցնում։

Ես խրխնջում եմ մորմոքիչ ձայնով,
Պատճառ՝ զգում եմ, որ հովիտներով
Երկար չեմ վազիլ, պատուով չեմ ապրիլ.
Իմ փայլուն սարքով էլ չեմ պճնուիլ։

Թշնամին անզութ—ես այդ զգում եմ—

Իմ ողջ սարքերս պիտի կողոպտէ
Եւ այս արծաթեայ երկզոյգ պայտերս
Թեթեւ ոտներիցս նա պիտի պոկէ»։

55. ԿՈՎ

Կովը ձիու չափ դեղեցիկ չէ և ոչ էլ նրա չափ ուժեղ, բայց օգտակարութեան կողմից նա ոչ մի ընտանի կենդանուց յետ չի մնալ։

Կովի դունչը լայն է, ականջները դէպի այս ու այն կողմն են ցցուած։ Կովը վերին ծնօտի վրայ առաջնատամներ չունի, այդ պատճառով էլ նա կծել չէ կարող, բայց դրա փոխանակ կարող է հարու տալ իւր երկու սուր եղջիւրներով։

Կովի ճակատը տափակ է, վիզը բարակ, ողնաշարը դուրս ցցուած, կողքերը փքուած, ոտները կարճիկ, կրճղակները բաժանուած, պոչը վրձնաձև։

Կովը իւր կերակուրը երկու անգամ է ուտում. առաջ խոտը պոկում է, փոքր ինչ ծամծմորում ու կուլ տալիս. յետոյ, երբ-որ բաւական պաշար է հաւաքում, կանգնում է կամ նստում մի ապահով տեղ, կուլ տուածը նորից բե-

ըանն է դուրս բերում և հանգիստ կերպով որոճում է, այսինքն իւր տափակ սեղանատամների տակ նորմէկից լաւ աղում, մանրացնում է։

56 ԿՈՐԱԾ ՀՈՐԹ

Ձիւն էր գալիս փաթիլ-փաթիլ,
Հետն էլ անձրև կաթիլ-կաթիլ.
Այդ միջոցին մի պառաւ կին
Հորթ էր փընտռում դաշտի միջին։

Կովը եկաւ տաւարիցը՝
Կուրծ ու ծծեր կաթնով լիքը.
«Հորթուկս ո՞ւր է», նա բառաչեց,
Խեղճ պառաւին լացացրրեց։

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով
Ողբում էին լաց ու կոծով,
Յանկարծ լսուեց մի բարակ ձայն,
Կովն իմացաւ, որ հորթն է այն։

Կովը վազեց բառաչելով,
Պառաւն հետքից տընքտընքալով.
Կորած հորթը մօրը գտաւ,
Լիք ծրծերը բերանն առաւ,

Ծծեց բոլոր կաթն ու տրուզեց,
Տան-տիկնոջը բան չթողեց.
Բայց պառաւը այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին։

57. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԷՃԸ

Կովը, ձին և շունը վիճում էին միմեանց հետ, թէ տէրը նրանցից որին աւելի է սիրում։

«Ի հարկէ նա ինձ ամենից դ շատ է սիրում, ասում էր ձին. ես նրա արօրն ու ցաքանը քաշում եմ, անտառից նրա համար փայտ եմ բերում. նա շատ անգամ հեծնում է ինձ և քաղաք է գնում. նա առանց ինձ բոլորովին կորած կը լինէր»։

—Ո՛չ, մեր տէրն ինձ աւելի է սիրում, ասաց կովը. քո արածդ ինչ է, որ մեծ-մեծ էլ խօսում ես. դրա մեծագոյն մասը իմ եղբայրը եղն էլ կարող է կատարել. իսկ ես նրա բոլոր ընտանիքը կաթնով կերակրում եմ։

—Դուք երկուսդ էլ սխալւում էք, օռնաց շունը. մեր տէրն ինձ ամենքից դ էլ աւելի է սիրում, որովհետև նրա բոլոր հարստութիւնը ես եմ պահպանում։

Կենդանիների տէրը լսեց այս վէճը և ասաց նրանց. «Ձուր տեղը միմեանց հետ մի վիճէք. դուք ամենքդ էլ ինձ հարկաւոր էք և ձեզանից ամեն մինը լաւ է իւր տեղումը»։

58. ԿԹԵԼ ԵՒ ՀԱՐԵԼ

(Մարմնամարզական խաղ)

«Ասա, տեսնեմ, մեր գիւղերում
Կովերն ինչպէս են կըթում»։

—Ահա այսպէս են կըթում.
Հորթը կապում մօր ծընկնից,
Ծիծը խլում զաւակից,
Կովկիթն իրանց ձեռքն առնում,
Ապա կողքին կրկրզում.

Փը՜շշ, բը՜ժժ...
Փը՜շշ, բը՜՜ժժ...
Ահա այսպէս են կըթում,
Փոքրիկ հորթին լացացնում։

—

«Ո՞նց են հարում խընոցին,
Հէնց էսօր էլ հարեցին»։

—Ահա այսպէս հարեցին.
Թոկը ծառից կապեցին,
Հաստ խնոցին կախեցին,
Երկու օրուայ հաւաքսը
Նրա մէջը ածեցին,
Տաք ու հով ջուր խառնեցին
Եւ, ծայրերից բռնելով,
Տարան, բերին, շարժեցին.
Թրը՜խկ, չրը՜խկ,
Շրը՜խկ, թրը՜խկ...
Ահա այսպէս հարեցին,
Դեղին կարագ հանեցին։

59. Ո Շ Խ Ա Ր

Ասում են, թէ ոչխարը յիմար է, ես էլ կարծում եմ, որ այդ ճշմարիտ է։ Հրդեհի ժամանակ ոչխարներն իրանք-

իրանց ընկնում են կրակի մէջ, իսկ երբ-որ տեսնում են գայլը, փայտի պէս մնում են իրանց տեղը և յիմարաբար կճղակներով գետինը փորում են։

Բայց մեր ինչին է պէտք ոչխարի խելքը. մեզ հարկաւոր է նրա բուրդը՝ գուլպայ, շալ և մահուդ գործելու համար, նրա ճարպը՝ սապոն և մոմ շինելու, կաշին՝ կօշիկների և մուշտակների, իսկ միսը՝ խորովելու համար։

60. ԳԱՌԸ ԳԱՅԼԻ ՄՈՐԹՈՎ

Մի օր մէկ գառը, չեմ գիտում ինչ էր,
Խելքին ինչ տեսակ քամի էր փչել,
Գընցեց իւր վրայ մի գայլի մորթի,
Գընաց, խառնուեցաւ հետը իւր հօտի։

Բայց երբ շների աչքովը ընկաւ,
Ասին՝ անտառից ահա գայլ եկաւ.
Գոռում-գոչումով վրան վազեցին,
Բերաններն առան ու զըզգըզեցին։

Լաւ էր, որ շուտով հովիւը տեսաւ,
Փայտ ու մահակով նոյն տեղը հասաւ.
Ու խեղճ գառնուկը կատղած շների
Սուր ատամներից հազիւ փրկուեցաւ։

Եւ մեր գառը հազիւ հազ,
Արիւնթաթախ ու նուազ,
Թոյլ ոտները քաշ տալով,
Հասաւ գոմը վայ տալով։

61. ԽՈԶ

Շատ կեղտոտ է մեր խոզը, կեղտոտ է և շատակեր. ամեն բան ուտում է, ամեն բան ջարդում, տիղմերի մէջ այնպէս է թաւալւում, կ'ասես թէ պարզ ջրի մէջ լինի. նա մեծ յօժարութեամբ մտնում է ճահիճների մէջ և էլ չի ուզում դուրս գալ այնտեղից։

Խոզի կնճիթը գեղեցիկ չէ—բութ է, քիթը դէմնին է հասնում, բերանը՝ ականջներին. իսկ ականջները՝ կեղտաշորի պէս կախուած են։ Ամեն մի ոտի վրայ խոզը չորս կճղակ ունի։ Նրա պոչը ոլոր է, ողնաշարը դուրս ցցուած, ողնաշարի և պարանոցի վրայ կոշտ մազեր են դուրս եկած։ Խոզը երեքի չափ ուտում է, հինգի չափ հաստանում. տէրերն էլ նրան լաւ պահում են և շատ ուտացնում, որովհետև նրա ճարպը և մազը լաւ գին ունին։

62. ԽՈԶԸ ԿԸՂՆԻ ԾԸՌԻ ՏԱԿ

Խոզը, հաստարմատ կաղնու տակ կանգնած,
Կերաւ կաղինը, գլուխը կախած,
Մինչեւ կոկորդը կերաւ, լցուեցաւ,
Ապա կաղնու տակ հանգիստ քնեցաւ։

Յետոյ զարթելով՝ բացաւ աչքերը
Եւ բութ կնճիթով սկսաւ փորել
Այն կաղնի ծառի հաստ արմատները,
Որից այդ ժամին սնունդ էր առել։

«Ձէ՞ որ այդ բանը ծառին վնաս է,
Նրան վերեւից ազդաւը կ'ասէ.
Եթէ այդպիսով արմատը բանաս,
Նա կը չորանայ, այդ լաւ իմանաս»։

—Իսկ ինձ ի՞նչ վնաս, թէ կը չորանայ,
Ցածից ասում է նրան խոզն ազահ.
Ես դրբա մասին իսկի չեմ ցաւում,
Կաղինն է իմ, նա է գերացնում։

Ծառը բարձրից՝ «Ապերախտ, ասաց,
Ուստի են թափւում կաղինները ցած.
Գէթ կարենայիր մի վերեւ նայել
Եւ կոյր աչքովդ այդ բանն ստուգել»։



63. ՍԱԳԵՐ

Սագերը գնացին դեռի ափը՝ կերակուր գտնելու, ճիճուներ որսալու։ Իրիկնապահին պառաւը վեր առաւ ճիպոտը և գնաց, որ նրանց տուն բերի։ Սագերը պառաւին

որ տեսան, ջուրը թափուեցան և սկսեցին լողալ։ Պառաւը կանչեց նրանց.

Ջո՛ւ-ջո՛ւ, ջո՛ւ-ջո՛ւ, շատակեր,
Սև ու սպիտակ իմ սագեր,
Հերիք, որչափ լողացիք,
Կարմիր տոտիկ լուացիք,
Հերիք, որչափ գետի մօտ
Որդեր կերաք դուք տրղմոտ.
Գընա՛նք, գընա՛նք դէպի տուն.
Ձեզ կուտ կը տամ իրիկուն։

Բայց չար սագերը խղճուկ պառաւին չուզեցան լսել. երկար ու բարակ վիզները ձգեցին, կարմիր թաղանթոտ ոտները շարժեցին, լայն թևերը թափ տուին, կտուցները բաց արին,

—Ղա՛-ղա՛, ղա՛-ղա՛, գոռացին,
Թո՛ղ ջուր մտնենք մենք կրկին.
Դեռ չենք ուզում գնալ տուն,
Մտնել աղտոտ հաւաքուն.
Ջրի մէջը վայր ու վեր՝
Պէտք է մաքրենք մեր թևեր։

Պառաւը նստեց գետի ափին։ Սագերը լողացան, լողացան, մէկ էլ յանկարծ թևերը թափթափ տուին, միմեանց յետևից գոռգոռալով դուրս թափուեցին ջրից ու դէպի տուն վազեցին։

64. ԱՂԱԻՆԻՆԵՐ

Սիրուն աղաւնիներ, թաւոտն թռչուններ, կտրին նրս-

տելով, միմեանց նայելով, իրար սիրում են, միշտ համբուրւում են և ձագուկներին մնաս բարով ասելով, դէպի դաշտն են շտապում, հատիկներ են հաւաքում, քուչերում վազվզացնում, իրանց փոքրիկ ձագերին նախաճաշիկ պատրաստում։ Իսկ ընի մէջ ձագերը, քնքոյշ աղաւնեակները, նստած են մնում, ուտել են ուզում։ Մայրը տուն է յետ դառնում և պատրաստած սնունդով փոքրիկներին կերակրում։

65. ԾԻԾԵՌՆԱԿ

Ծիծեռնակը, տես, ամենևին չէ հանգստանում, ամբողջ օրը թռչում է, ծղօտներ է հաւաքում, կտուցովը կաւ է կրում, իւր համար բուն է շինում։ Բունը շինեց, վերջացրեց, մէջը երեք ձու ածեց, նրանց վրայ շարունակ երեք շաբաթ պինդ նստեց, փոքրիկ ձագեր դոյացրեց։ Ձագերը որ դուրս եկան, բերանները բաց արին և կերակուր խնդրեցին։ Ծիծեռնակը թռաւ, դաշտը դուրս եկաւ, մժեղներ բռնեց, նրանց կերակրեց։

Ժամանակը հասաւ. ձագերի փետուրները դուրս եկան. նրանք թևաւորուեցան, իրանց ընից դուրս թռան, հեռու ճանապարհ ընկան, կապոյտ ծովերի, մութ անտառների, բարձր սարերի վրայից անցան։

66. ՊԸՆԴՈՒԽՏ ՊԸՏԸՆՈՒ ԵՐԳԸ

Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու զարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա, թռչում ես այդպէս արագ։

Ա՜խ, թռիր, ծիծեռնակ, ծնած տեղս—Աշտարակ,
Անդ շինիր քո բունը հայրենի կտուրի տակ։

Անդ հեռու ալեւոր հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդուն սպասում է օրէցօր:

Երբ տեսնես դու նորան, իմնից շատ բարեւ արա,
Ասա, թող նստի լայ իւր անբախտ որդու վերայ:

Դու պատմէ, թէ ինչպէս աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով կեանքս մաշուել, եղել կէս:

Ինձ համար ցերեկը մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս քունը մօտ չի գալիս:

Ասիր որ չբացուած, թառամեցայ միացած,
Ես ծաղիկ զեղեցիկ՝ հայրենի հողից զրկուած:

Դէհ, սիրուն ծիծեռնակ, հեռացիր, թռիր արագ
Դէպի Հայոց աշխարհը՝ ծնած տեղս—Աշտարակ:

67. ԿԱՂԱՄԲԻ ԹԻԹԵՌ

Մանուկը պարտէզում բռնեց մէկ սպիտակ թիթեռ և բերեց իւր հօր մօտ:

«Դա շատ վնասակար թիթեռ է, ասաց հայրը. եթէ դրանք բազմանան, մեր կաղամբը բոլորովին կ'ոչնչանայ»:

—Մի թէ սա այդչափ ագահ է, հարցրեց մանուկը:

«Ոչ թէ ինքը թիթեռն է ագահ, այլ նրա թրթուրը, պատասխանեց հայրը: Այդ թիթեռն ածում է շատ մանր ձուաներ, իսկ նրանցից դուրս են սողում որդունքներ, որոնք անուանւում են թ ր թ ո ւ ր ն ե ր: Թրթուրը շատ ագահ է. նա ուրիշ բան չունի, բացի ուտելն ու մեծանալը: Երբ նա մեծանում է, պատենաւորւում է: Այդ միջոցում նա ոչ ուտում է, ոչ խմում, այլ անշարժ ընկած է: Մի քանի ժամանակից յետոյ նրանից թիթեռ է դուրս

գալիս, ինչպէս ահա այդ բռնածդ: Այդպէս է կրկրպարանափոխւում ամեն մի թիթեռ: Ձուից գոյանում են թրթուրներ, թրթուրներից պատենաւորներ և պատենաւորներից՝ թիթեռներ: Իսկ թիթեռները ձու են ածում ու մեռնում:

68. Զ Ա Տ Ի Կ

Որդին. Նայիր, հայրիկ, ինչպիսի զեղեցիկ, կլորիկ բզէզ եմ բռնել: Սրա գլուխը սև է, թեւերը կարմիր և թեւերի վրայ բծեր կան: Մի թէ սա կենդանի է, հայրիկ. ամենևին չի շարժւում:

Հայրը. Կենդանի է, բայց մեռած է ձևանում. իւր վեց ոտները ծալել, փորիցն է կպցրել, բեխերը թաղցրել է և սպասում է, որ դու նրան վայր գցես խոտերի մէջ: Դրա անունը Զատիկ է: Դա շատ օգտակար բզէզ է: Զատիկը և աւելի էլ դրա թրթուրները ուտում-ոչնչացնում են շատ վնասակար կանաչագոյն միջատներ, որոնք խմբովին կրսչում են տերևներին և շատ վնաս տալիս նրանց:

Որդին. Նայիր, հայրիկ, բզէզը արթնացաւ և բարձրացաւ մատիս ծայրը. այնտեղից նա ուր կը գնայ:

Հայրը. Ահա կը տեսնես. մտիկ տուր, թէ նա ինչպէս շարժում է իւր կարծր վերնաթեւերը, իսկ նրա տակից հանում—չռում է իւր իսկական թեւերը, որոնք թեթև են և թափանցիկ:

Որդին. Ահա թռաւ նա. ինչ խորամանկն է եղել:

69. ԹԻԹԵՌ ԵՒ ՄԱՆՈՒԿ

Մ ա ն ո ւ կ

Սիրուն թիթեռ, ինձ ասա,

Թէ ինչով ես դու ապրում.
Ամբողջ օրը խաղում ես,
Ի՞նչպէս է որ չես յոգնում։

Թ ի թ ե ռ

Սիրուն կանաչ դաշտերում
Ես ապրում եմ համարձակ,
Ծաղկանց բուրմունքը անուշ
Իմ կերակուրն է միակ։

Բայց իմ կեանքը շատ կարճ է,
Նա մի օրից չէ երկար.
Բարի՛ եղիր, ո՛վ մանուկ,
Խնայի՛ր ինձ, ձեռք մի՛ տար։

70. Հ Ր Ե Ղ Է Ն Ձ Ի

Ա

Մի ծեր մարդ երեք որդի ունէր՝ երկուսը խելօք, իսկ երրորդը յիմար և կեղտոտ։ Գիշեր ու ցերեկ յիմարը, տանը վայր ընկած, ոչինչ գործի չէր գնում։

Ծեր մարդը մի օրավար ցորեն էր ցանել։ Ցորենը դուրս էր եկել, մեծացել և գեղեցիկ հասկեր բռնել. միայն գիշերները մէկը գալիս էր ու տրորում արտը։ Այս բանին մի ճար անելու համար՝ ծերը իւր որդոցն ասաց. «Սիրելի՛ որդիք, գիշերները հերթով գնացէք, արտը պահպանեցէք և աշխատեցէք գողին բռնել»։

Առաջին գիշերը մեծ որդին գնաց՝ պահպանութիւն անելու, բայց կէս գիշերին քունը տարաւ ու քնեց։ Առաւօտեան յետ դարձաւ տուն և ասաց. «Ամբողջ գիշերը չքնեցի, սառայ, փայտ դարձայ, բայց գող չտեսայ»։ Միւս գիշերը երկրորդը գնաց, ողջ գիշերը քնեց և առաւօտեան միևնոյն լուրը բերեց։

Երրորդ գիշերը հերթը յիմարին հասաւ։ Նա մէկ պարան վեր առաւ և գնաց, արտի մօտ նստեց, գողին սպասեց։ Կէս գիշերին մօտեցած՝ նրա քունը տարաւ։ Յիմարը վեր առաւ դանակը, մատը մի փոքր կտրեց, մէջը աղ ածեց, մրմնջացրեց և այդպիսով քունը փախցրեց։ Կէս գիշերին, մէկ էլ տեսնես, աշխարհ շարժուեցաւ, քամի վեր կացաւ և երկնքիցը հրեղէն թեով մի ձի ցած իջաւ, արտի մէջ մտաւ. քթածակերից ամպ էր բարձրանում, աչքերում, կարծես, կայծակ էր փայլում։ Եւ ձին սկսեց ուտել ցորենը. ոչ այնքան ուտել, ինչքան կոխոտել։

Փորսող տալով մեր յիմարը կամաց-կամաց մօտեցաւ ձիուն և յանկարծ թոկը նրա պարանոցը գցեց, բռնեց։ Ձին ամենայն զօրութեամբ ձգձգեց, յետի ոտների վրայ ծառս եղաւ, բայց մեր յիմարի ձեռքից չազատուեցաւ։ Ապա կանգնեց ու սկսեց աղաչել. «Յովհաննէս, բարեկամ, ինձ արձակի՛ր. ես դրա փոխարէն մեծ ծառայութիւն կ'անեմ քեզ»։

«Զա՛տ լաւ, բայց ես քեզ յետոյ ի՞նչպէս գտնեմ», ասաց Յովհաննէսը։

—«Երբ-որ կը կամենաս ինձ կանչել, դուրս կը գաս դաշտը, երեք անգամ կը շվվացնես և կը կանչես. «Հրեղէն ձի, հրեղէն ձի, շո՛ւտով ինձ հասիր». ես այն րոպէին քո առաջը կը լինիմ»։ Յովհաննէսն արձակեց ձին և պատուիրեց, որ միւս անգամ արտը չտրորէ։

Յիմարը յետ դարձաւ տուն։ «Ի՞նչ տեսար, ի՞նչ շինեցիր», հարցրին նրան եղբայրները։ Յովհաննէսը պատասխանեց. «Ես մի հրեղէն ձի բռնեցի. նա ինձ խոստացաւ, որ էլ մեր արտը չի մտնիլ. ես էլ նրան արձակեցի»։ Մնա-

ցած բանները նա չպատմեց։ Զատ ծիծաղեցին եղբայրները խեղճի վրայ. միայն, ճշմարիտ որ, այն օրից յետոյ ոչ ոք արտին վնաս չէր տալիս։

Բ

Այս անցքից մի օր յետոյ թագաւորից ամեն գիւղեր ու քաղաքներ մունետիկներ ուղարկուեցին, որոնք բարձր ձայնով կանչում էին և ասում. «Ո՛վ պարոններ, քաղաքացիներ, ազնուականներ և գիւղացիներ, մեծ թագաւորը տոն է կատարում և ձեզ ամենքիդ հրաւիրում է. երեք օր պէտք է ուրախութիւն լինի։ Լաւ ձիաներդ վեր արէք. թագաւորի միակ և արեգակից գեղեցիկ աղջիկը բարձր բուրգի պատշգամբում նստած կը լինի. ով որ իւր ձիով կարողանայ թռչել, թագաւորի աղջկան հասնել ու նրա մատից մատանին հանել, թագաւորը նրան իւր աղջիկը կնութեան կը տայ»։

Յովհաննէսի եղբայրներն էլ գնացին այս հանդէսը, բայց ոչ թէ իրանք թռչելու, այլ ուրիշներին նայելու։ Յովհաննէսը խնդրեց, որ իրան էլ հետները տանեն։ «Դու ինչի համար ես գալիս, յիմար, ասացին եղբայրները, մարդկանց վախեցնելու, ինչ է. տանը վէր ընկիր»։

Եղբայրները ձի նստեցին, գնացին։ Յովհաննէսն էլ նրանց յետևից ծածուկ դուրս գնաց դաշտը և իւր հրեղէն ձիուն կանչեց։ Որտեղից որ էր՝ ձին իսկոյն վազեց, Յովհաննէսի առաջին կանգնեց։ Յովհաննէսը ձիու գլխովը թռաւ, որից յետոյ կերպարանքն էլ փոխուեցաւ և մի այնպիսի քաջ տղամարդ դարձաւ, որ տեսնողն ամենևին չէր ճանաչիլ, թէ առաջուայ կեղտոտ Յովհաննէսն է։ Յետոյ նա հեծաւ ձին և քշեց դէպի հանդէս։ Գնաց-տեսաւ, որ թագաւորի տան առաջ, ընդարձակ հրապարակում,

անհամար ժողովուրդ էր հաւաքուած. իսկ բարձր աշտարակի պատշգամբի վրայ թագաւորի աղջիկն էր նստած. ինքը գեղեցիկ լուսնի նման, մատանին փայլում էր արեգակի նման։ Բայց ոչ ոք չէր համարձակւում դէպի վեր ցատկել. ով էր իւր գլխից ձեռք վեր առել։ Մեր Յովհան-

նէսը խփեց իւր ձիու կողերին։ Ձին մռնչաց ու ցատկեց. միայն երկու աստիճան մնաց, որ հասնէր թագաւորական աղջկան։ Ժողովուրդը լեզուն կծեց—զարմացաւ։ Իսկ Յովհաննէսը ձիու գլուխը յետ դարձրեց ու փախաւ։ Եղբայր-

ներն ուշ ճանապարհ տուին։ Յովհաննէսը մի լաւ մտրակեց նրանց ու անյայտացաւ։ Երբ-որ հասաւ նոյն դաշտը, ձիու վրայից թռաւ, իւր առաջուայ կերպարանքն ստացաւ, ձին արձակեց ու տուն գնաց։ Եղբայրները երեկոյեան յետ դարձան քաղաքից և զարմացած պատմեցին իրանց հօրը, ինչ որ տեսել էին։ Իսկ Յովհաննէսը լսում էր և քթի տակին ծիծաղում։

Գ

Հետևեալ օրը մեծ եղբայրները միւսների նման կրկին գնացին հանդէս և Յովհաննէսին հետները չտարան։ Յովհաննէսը դուրս եկաւ դաշտը, ձիուն կանչեց, հեծաւ ու քշեց։ Երբ-որ թագաւորի պալատին մօտեցաւ, առաջուանից աւելի մարդ տեսաւ. ամենքն էլ թագաւորապն աղջկան էին մտիկ տալիս, բայց ոչ ոք չէր կամենում ցատկել։ Նա խփեց իւր ձիու կողերին, ձին մռնչաց ու ցատկեց. միայն մէկ աստիճան մնաց, որ աղջկան հասնէր։ Ժողովուրդը լեզուն կծեց—զարմացաւ, իսկ Յովհաննէսը ձիու գլուխը յետ դարձրեց ու փախաւ։ Նրա եղբայրները ուշ ճանապարհ տուին։ Յովհաննէսը նրանց մի լաւ մտրակեց, ճանապարհ բացեց, դէպի դաշտ վազեց, իւր ձին արձակեց ու յետ դարձաւ տուն։ Եղբայրներն եկան, իրանց հօրը պատմեցին բոլորը. իսկ Յովհաննէսը լսում էր և քթի տակին ծիծաղում։

Երրորդ օրը եղբայրները նորից գնացին հանդէս։ Յովհաննէսը դուրս եկաւ դաշտը և հրեղէն ձին հեծնելով՝ ինքն էլ գնաց. բայց երբ-որ աշտարակին մօտեցաւ, ձիուն այնպէս մտրակեց, որ նրա աղդրի կաշին պլոկուեց։ Կենդանին մռնչաց, սաստիկ ոյժով վեր ցատկեց և պատշգամբին հասաւ։ Յովհաննէսն շտապեց, թագաւորի աղջկայ մատից թանկագին մատանին հանեց, ձիու գլուխը

յետ դարձրեց և սկսեց փախչիլ։ Թագաւորը, թագուհին և բոլոր ժողովուրդը սկսեցին գոռալ. «Բռնեցէք, հա՜, բռնեցէք»... Բայց որտեղ...

Յովհաննէսը տուն եկաւ՝ ձեռքի մէկը փալասով փաթաթած։ «Այդ ինչ է եղել ձեռքդ», հարցրին հարսները։

«Մորի քաղելիս քարից վայր ընկայ, ձեռքս պլոկուեցաւ, ոչինչ բան չկայ», ասաց Յովհաննէսը ու գնաց, կրակի առաջ ձգուեց։

Եղբայրները յետ դարձան և մեծ զարմանքով պատմեցին իրանց հօրը բոլորը, ինչ-որ պատահել էր քաղաքում։ Այդ միջոցին Յովհաննէսը կամեցաւ նայել մատանուն. փալասը բարձրացրեց թէ չէ, բոլոր խրճիթն սկսեց լուսաւորուիլ։ »Ցիմար, կրակի հետ չեն խաղալ, գոռացին եղբայրները. փոքր մնաց՝ խրճիթը կրակ տայիր. ամենևին պահելու պտուղ չես. վաղուց պէտք էր քեզ տանից դուրս անել»։

Դ

Երեք օրից յետոյ թագաւորից մունետիկներ են գալիս և ասում են, որ բոլոր մարդիկ, որոնք բնակւում են նրա թագաւորութեան մէջ, պարտաւոր են գնալ նրա մօտ՝ խնճոյք անելու, և ով որ թագաւորի այս հրամանը չի կատարիլ, նրա գլուխը կը կտրեն։

Ուրիշ հնար չկար. ծերունին իւր բոլոր ընտանիքով գնաց հրաւէրքի։ Եկան, ժողովուեցան, սփռոցի շուրջ շարուեցան, կերան, խմեցին, շատ ուրախացան։ Խնճոյքի վերջում թագաւորի աղջիկը իւր ձեռքով սկսեց ամենքին մեղրաջուր բաժանել։ Ամենից յետոյ Յովհաննէսին մօտեցաւ։ Յովհաննէսն էլ այն օրումն էր, որ թշնամիդ չլինի. շորերը պատառոտուած, մրոտուած, մազերը կեղտոտ, խր-

ճրճուած, ձեռքի մէկն էլ կեղտոտ փալասով փաթաթած. իստակ զզուելի։ «Տղայ, ձեռքդ ինչի է կապած, հարցրեց թագաւորի աղջիկը. բաց արա, տեսնեմ»։

Յովհաննէսը ձեռքի փաթաթանը յետ արեց. մատի վրայ փայլեց թագուհու մատանին։ Աղջիկը բռնեց նրա ձեռքից, տարաւ իւր հօր մօտ և ասաց. «Հայրիկ, ահա իմ փեսացուն»։

Սկսեցին Յովհաննէսին բաղանիք տանել, գլուխը սանրել, մազերը օծել, շորերը փոխել . . . և նա այնպիսի գեղեցիկ տղամարդ դարձաւ, որ հայրն ու եղբայրներն էլ չէին կարողանում ճանաչել նրան։ Թագաւորը եօթն օր, եօթը գիշեր հարսանիք արեց, մեծ խնճոյք տուեց և Յովհաննէսին փառքով պսակեց։

ՇՐՋԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Նիւթեր Բուսական Աշխարհից

---

71. Ա Ց Գ Ի

Այգիները երկու տեսակ են՝ պտղաբեր և հասարակ։ Հասարակ այգիները սովորաբար տների առաջ կամ քաղաքի զանազան թաղերումն են լինում՝ զբօսանք անելու համար։ Պտղաբեր այգիները մեծ մասով քաղաքից դուրս են լինում։ Այգիները շրջապատում են ցանկով, պատով կամ ճաղերով (վանդակներով)։ Այգու մէջ տնկում են պտղատու ծառեր, թփեր և պարտիզի ծաղիկներ։ Գեղեցիկ հասարակ ծաղիկներ էլ են բուսնում այնտեղ։

72. ԵՐԿՐԱԳՈՐԾԸ ԵՒ ԾԱՂԻԿԸ

Համեստ ծաղիկ դաշտային,
Վատ ժամի հանդիպեցար.
Երբ արօրը քշեցի,
Նրա առաջն ընկար։

Գեղեցկութիւն դաշտերի,
Քեզ փրկել չկարացի.

Սրբտի ցաւով, ակամայ,
Քաղցրը կեանքիդ կարճեցի։

Խոնարհաբար փայլելով
Իբրև գոհար խոտերում,
Միամիտ կրսպասէիր
Արեգակի ծագելուն.

Յանկարծ արօրս սրածայր
Անդրթաբար քեզ կրտրեց,
Եւ այսպիսով քաղցր կեանքիդ
Դրժբաղտաբար վերջ տուեց։

73. Պ Ա Ր Տ Է Զ

Պարտէզները տների մօտ են շինում և չորս կողմից ցանկ կամ պատ են քաշում։ Պարտէզը շատ անգամ մշակում է պարտիզի տէրը, երբեմն էլ պարտիզպանը։ Պարտիզի մէջ շինում են մարգեր (ածուներ) և ցանում են տեսակ-տեսակ ծաղիկներ ու բանջարներ։ Պարտիզում տնկում են նաև պտղատու ծառեր։ Շատ ծառեր էլ կան, որոնք պտուղ չեն տալիս, բայց սիրուն, անուշահոտ ծաղիկ ունին։ Պարտիզին վնաս են տալիս թռչունները, ընտանի կենդանիները և որդերը։ Տաք եղանակին մարդերը ջրում են։ Պարտիզի բանջարեղէնները մարդիկ գործ են ածում իբրև կերակուր, իսկ անպէտք մասերը անասուններին են տալիս։ Եթէ պարտիզում միայն բանջարեղէն է ցանած, *բանջարանոց* կամ *ընդեզ* է կոչւում։

74. ԾԱՂԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

Վարդ

Ինձ ամենքը կոչում են
Ծաղիկների թագուհի,
Որովհետև ծաղիկս
Սիրուն գոյն ու հոտ ունի։

Թէև իմ կանաչ թուփը
Շատ մարդու ձեռք կը ծակի,
Բայց այս անմեղ յանցանքը
Ինձ ամեն մարդ կը ների։

Շուշան

Իմ սպիտակ կոկոնում
Անուշ բուրմունքներ կան շատ,
Եւ ոսկէնման փոշի
Մեղուներին բազմաշխատ։

Իմ ցօղունս է նազուք,
Եւ զգաթս գեղեցիկ,
Տերևներս ընդարձակ
Եւ ինքս եմ խիստ հեզիկ։

Իմ հիւրասէր թերթերում
Մեղու, մրջիւն, թէ թիթեռ

Կարող են հանգիստ գտնել
Իրրև ազնիւ զեռուններ։

Յափրուկ

Իմ թուփերս փարթամ չեն,
Ոչ ծաղիկս փառաւոր,
Բայց բուրմունքս կը լսեն
Ամեն մարդիկ հեռաւոր։

Այս պատճառով կարող էք
Յափրուկ գտնել ամեն տեղ,
Թէ փոքրիկ պարզ փընջերում,
Թէ պարտէզներում շքեղ։

75. ԵՐԱՉՏ

Ամառը չորային էր։ Արեգակը օրէցօր բարձրանում էր պարզ երկնքի վրայ։ Փոշին ամպի նման տարածւում էր ճանապարհին։ Երկիրը քարի պէս պնդացել, ճաքճքոտել էր։

Առուները ցամաքել էին։ Ծաղիկները տխրութեամբ կախել էին իրանց գլուխները։ Խոտերը դեղնել էին, նորահաս արտերը թառամել։ Երկրագործը տխրութեամբ նայում էր իւր արտերին և ասում. «Աստուած իմ, ինչ-որ ինձանից կախուած էր՝ արեցի, հողը՝ որքան կարելի էր, խոր ցելեցի, ընտիր սերմով սերմեցի և ուշադրութեամբ ցաքեցի. այժմ թող լինի Քո սուրբ կամքը»։

76. ԳԱՐՆԱՆԱՑԻՆ ԱՌԱՒՕՏ

Գարնան արևը հպարտ բարձրացաւ,
Երկրագործն իրան մանը ձեռք առաւ.

Արօրի ետքից հանդարտ գնում է
Եւ ուրախ-զուարթ բարձր երգում է.
«Ո՞վ է կեանք վարում երկրագործի պէս
Գարնան սկզբից միշտ ուրախ այսպէս»։

77. ԲՈՅՍԵՐԻ ԿԵՐԱԿՈՒՐԸ

Պայծառ երկնակամարի վրայ ամպեր երևացին. փոքր-առփոքը նրանք թանձրացան և սև կեղևով ծածկեցին կապոյտ երկինքը, իսկ երեկոյին կենսատու անձրևը ջրեց արօտամարգերն ու արտերը։ Դաշտային թառամած բոյսերը զուարթացան. նրանք աննկատելի կերպով ծծեցին իրանց բարակ արմատներով թաց հողի սննդարար հիւթը։ Խոտը կանաչեց. ծառերի փայլուն տերևները ագահաբար ներս ծծեցին խոնաւ օդը։ Ուրախ-ուրախ տատանուիլ սկսեցին ցորենի, դարու և վարսակի արտերը և արագ-արագ լցրին իրանց քստալի հասկերի նիհար հատիկները։

78. ԳԱՐՆԱՆ ՓՈԹՈՐԻԿԸ

Գարնան փոթորիկն ես շատ եմ սիրում,
Երբ բարձր օդի մէջ ամպեր են գոռում,
Եւ կարծես պայծառ, կապոյտ երկնքում
Ուրախ ոստիւնով առաջ են խաղում.
Գլորւում են, գոռում, անձրևներ թափում,
Իսկ կաթիլներից ցնցուղ բարձրանում։

Ձորերի միջով անթիւ առուակներ
Ուրախ քրքիջով ցած են գլորւում
Եւ անտառներում երգող հաւերի
Երգի փոխանակ ժայռերն են թընդում։

79. ԾԱՌԵՐԻ ՎԷՃԸ

Ծառերը վիճեցին միմեանց հետ, թէ նրանցից ո՞րն է լաւը։ Կաղնին ասաց. «Ես բոլոր ծառերի թագաւորն եմ. իմ արմատս գետնի մէջ խորն է մտած, բունս հաստ է, գագաթս երկնքին է նայում. իմ տերևներս կտրատուած, իսկ ճղներս կարծես երկաթից ձուլած լինին։ Ես փոթորիկների առաջ չեմ խոնարհում, կայծակների առաջ չեմ ընկ-ճւում»։

Սօսին ժպտաց այս խօսքերի վրայ. «Շատ ես պարծենում, ասաց նա. դու մոռանում ես, որ ինձ նման ծառ ողջ Հայաստանումը չկայ. արմատներս անդունդն են հասնում, գագաթս ամպերի մէջ է խաղում. ես հարիւրաւոր ճղներ ունիմ, ամեն մի ճիւղս քո բնիցը հաստ։ Իսկ իմ բունս... օ, նրա փչակում կարող է մարդս կարիք օրը տեղ գտնել։ Համեստութիւն արեցիր, պտուղներդ չքիշեցիր. բայց նրանք էլ խոզերին են քեզ մօտ հրաւիրում. իսկ իմ կոծոծները թէև սնուցիչ չեն, բայց տերևներիս հետ ձեռք ձեռքի տուած սօսելով, յոգնած ու տոչորուած անցուորականին իրանց ստուերի տակն են առնում, արևից, անձրևից պաշտպանում են»։

Խնձորենին լսեց այս երկուսի խօսակցութիւնը և ասաց. «Դուք երկուսդ էլ շատ էք հպարտանում, բայց, ասացէք՝ դուք տալիս էք մարդկանց այն, ինչ-որ նրանք ինձանից են ստանում»։

Լսում է մայրին, շարժում է իւր փշոտ գլուխը և ասում է. «Սպասեցէք, շուտով կը գայ ձմեռը և դուք ամենքդ էլ կը մերկանաք, իսկ ինձ վրայ միշտ կը մնան իմ կանաչ փշերը։ Առանց ինձ ցուրտ երկիրներում ապրել չի կարելի. ես նրանց վառարանները տաքացնում եմ և մարդիկ իմ փայտից իրանց համար խրճիթներ են շինում։

80. ՈՒՌԵՆԻ

«Ուռերի կանաչ, ուռենի սիրուն,
Ինչի դու այսօր ուրախ չես ժպտում.
Մթթէ քեզ սաստիկ արևն է այրում,
Արևն է այրում, անձրևը ծեծում,
Արմատիդ մօտից սառ ու ջուր չէ՞ վազում»։

Հայոց աշխարհից իշխանները անցան,
Ուռին կտրեցին—կեանքից զրկեցին.
Նրան տաշեցին, տաշտշորեցին
Եւ իրանց համար թիեր շինեցին.
Նաւակ կազմեցին, մէջը նստեցան,
Մէջը նստեցան ու տուն յետ դարձան
Եւ ինձ, փոքրիկիս, հետները տարան։

81. ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԽՄԵԼԻՔ

Առանց ուտելիքի մարդս քաղցից, իսկ առանց խմելիքի ծարաւից կը մեռնէր։ Մարդը իբրև ուտելիք գործ է ածում բուսեղէն, մսեղէն և աղ։ Նա խմում է ջուր, թէյ, սուրճ, գինի, գարեջուր...

Ամենահարկաւոր ուտելիքը հացն է. ամենակարևոր և առողջարար խմելիքը ջուրն է։

82. ՀԱՆԵԼՈՒԿ

Մի տուն ունինք, տան նման չի.
Գետի ափին, մեծ ժայռի տակ,
Կրկըզած է մեն-միայնակ.
Գիշեր-ցերեկ չար բուի պէս
Ձայն է հանում, գոռում այսպէս՝
Թրը՛խկ-չրը՛խկ,
Վ.ը՛շտ-ճը՛շտ։

Առուն բարձրից ցած է թռչում,
Պատը ծակում, միջովն անցնում.
Յատակումը դղրդոց է,
Զրըմփոց ու թրըխկոց է։

Տան մէջ երկու ուժեղ դաղան,
Մինը տակին, միւսը վրան,
Առիւծի պէս մռընչում են,
Իրար ըռեխ կըռծոտում են . . .

Սրանք մարդ չեն, ո՛չ արջ, ո՛չ գայլ,
Ինչ էլ որ տաս, քիչ է դարձեալ.
Հարամի են խպառ քաղցած,
Էլ չեն լսում ոչ խօսք, ո՛չ լաց,
Դուրս են մղում իրանց փորից
Կերակուրը փոշի դարձրած։

Այժմ ասէք՝ այդ ինչ տուն է,
Որ մինչ այսօր էլ կանգուն է։

83. ՓՈՐՁԱՆՔ ՈՒ ՊԱՏՈՒՀԱՍ

Գիւղացին ցորեն էր տանում ջրաղացը։ Ջուալը ծակ էր և մի քանի ցորենի հատիկներ թափուեցին ճանապարհին։ Ծտերը խմբովին ցած եկան և սկսեցին ուտել հատիկները, բայց աքաղաղը մօտ վազեց և ծտերին հալածեց։ Ծտերը գանգատուեցին ցինին։ Ցինը իւր օրէնքով դատեց նրանց. առաջ պատառոտեց աքաղաղին, իսկ յետոյ խեղդոտեց ծտերին։

84. ՋՐԱՂԱՑ

Ջուրը նաւից արշաւելով,
Կատաղաբար ձայն է հանում
Եւ ջրաղացի յատակի տակ
Կարծես ամպեր են որոտում։

Անիւների խիստ շարժուելուց
Ամբողջ յատակն է դողդողում
Եւ երկանի պտրտուելուց
Փոքրիկ լեզուակն է չըխչըխկում.

Նա շարժւում է օրօրուելով,
Ցորնատաշտի բերնից քաշում,
Որից վերին երկանի մէջ
Մաքուր աղունն է կաթկաթում,

Եւ քարի տակ մանրուելով՝
Ալիւը դարձած ամբարն ածւում,
Իսկ ջրաղացը գեղեցկապէս
Իրրև ծերուկ ալեզարդում։

85. ՎՈՒՇ ԵՒ ՔԱԹԱՆ

I. Փոքրիկ Հայկանուշը տեսաւ, որ իւր հայրը արտումը բռնով մանր ու փայլուն սերմեր էր ցանում և հարցրեց.

«Հայրիկ, այդ ինչ ես անում»։

—Վուշ եմ ցանում, աղջիկս, որ քեզ ու Բարսեղի համար շապիկ դուրս գայ։

Հայկանուշը մտածման մէջ ընկաւ։ Նա երբէք չէր տեսած, որ շապիկներն աճեն արտումը։

Երկու շաբաթից յետոյ ցելը ծածկուեցաւ կանաչ մետաքսեայ խոտերով և Հայկանուշը մտածեց. «Ինչ լաւ կը լինէր, եթէ ես այդպիսի շապիկ ունենայի»։

Մի քանի անգամ Հայկանուշի մայրը և քոյրերը գնացին արտը քաղհանելու և ամեն անգամ ասում էին նրան, թէ լաւ շապիկ պէտք է ունենաս։ Անցաւ էլի մի-քանի շաբաթ. կանաչը բարձրացաւ. ցօղունների գլուխներին կապտագոյն ձաղիկներ երևացին։ «Իմ եղբայր Բարսեղի աչքերի նման են սրանք, մտածեց Հայկանուշը. բայց այսպիսի շապիկ ես ոչ ոքի հագին չեմ տեսել»։

Երբ-որ ծաղիկները վայր թափուեցին, նրանց տեղը մնացին կանաչ և կլոր գլուխներ։ Երբ-որ գլուխները փոքր ինչ կարմրեցին ու չորացան, Հայկանուշի հայրն ու քոյրերը արմատից փետեցին նրանց, խուրձեր կապեցին և կոթերի վրայ կանգնեցրին, որ չորանան։

II. Վուշի խուրձերը չորացան. նրանց գլուխները կտրեցին, կապեցին և պահեցին, իսկ կոթերը թրջոց դրին առուակի մէջ, վրան էլ քարեր դարսեցին, որ ջրի երեսը չանեն։ Հայկանուշը տխուր նայում էր, թէ ինչպէս են իւր շապիկը ջրումը խեղդում։ Իսկ քոյրերը նրան նոցից ասացին, թէ շատ գեղեցիկ շապիկ ես ունենալու։

Երկու շաբաթից յետոյ վուշը ջրից հանեցին, չորացրին և սկսեցին փայտով թակել՝ առաջ կալումը, իսկ յետոյ բակումը, այնպէս որ խեղճ վուշի չոփերը բոլորը դուրս թափուեցին։ Թակելուց յետոյ սկսեցին երկաթէ սանդերքով գզել, մինչև որ նա փափկեց և դարձաւ իրրև մետաքս։ «Ի՜նչ գեղեցիկ շապիկ ես ունենալու», ասացին նոցից Հայկանուշի քոյրերը։ Իսկ Հայկանուշը մտածում էր. «Այդ ինչ տեսակ շապիկ է. կ'ասես թէ մեր Բարսեղի շէկ մազերը լինին»։

III. Ձմեռուայ երկար գիշերներն եկան։ Հայկանուշի

քոյրերը ճախարակները սարքեցին և սկսեցին վուշից թել մանել։ «Այս թել է, իսկ շապիկը ո՞ւր է», մտածում էր Հայկանուշը։

Հայկանուշի հայրը տորքը սարքեց խրճիթում, նրա վրայ հինած արեց և սկսեց գործել։ Մաքուքը սատանի նման անցուդարձ էր անում թելերի միջով և Հայկանուշը տեսնում էր, թէ ինչպէս էր թելերից քաթան շինւում։ Երբ-որ քաթանը պատրաստուեց, պրծաւ, նրան ցրտի տակ սառցրին և ձիւնի վրայ փռեցին, իսկ գարնանը ձգեցին կանաչ խոտերի վրայ, արևի տակը, և վրան էլ ջուր ցանեցին։ Քաթանը փոքր առ փոքր սպիտակեց ինչպէս ձիւն։

Մայրը քաթանից շապիկներ ձևեց և Հայկանուշի քոյրերն սկսեցին կարել, այնպէս որ Զրօրհնէքին նա էլ, իւր եղբայր Բարսեղն էլ հագան ձիւնի պէս սպիտակ շապիկներ։

86. ՁԼՀՆՁԱԾ ԱՐՏ

Աշունն սկսուեց, ծիծառը թռաւ.
Անտառն է դատարկ, դաշտը մերկացաւ.
Միայն դաշտումը, անհունձ մնացած,
Տխուր ու տրտում մի արտ կայ կանգնած։

Կարծես հասկերը ասում են միմեանց.
«Ի՞նչպէս մրսում ենք մենք այս ցրտի տակ.
Շատ տխրալի է դետին խոնարհուել
Եւ ատօք պտուղդ հողում թաթախել։

«Ամենայն դիշեր մեզ մօտ իջնում են
Անցնող թռչուններն ու մեզ ուտում են.
Գազաններն տրորում, քամին մեզ ծեծում.
Ո՞ւր է մեր տէրը, ինչ է սպասում»։

Քամին տալիս է նրանց վատ համբաւ.
«Մահը ձեր տիրոջ երկրից վեր առաւ»։

87. ՋՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

I

Ջուրը ո՞ւմ ասես որ հարկաւոր չլինի. բոյսերին, գազաններին, թռչուններին և մարդկանց հարկաւոր է նա։ Ահա թէ ինչի Աստուած ծովերն ու ովկիանոսները լցրել է ջրով։

Բայց ծովի ջուրն աղի է և դառն։ Այդ վնաս չունի, որովհետև ամենքը ծովի մօտ չեն բնակւում։ Սակայն ինչպէս մաքրենք ջուրը, ինչպէս տանենք մենք նրան ծովերից հազարաւոր մղոն հեռու, ինչպէս բարձրացնենք նրանց սարերի գլուխը, ինչպէս անենք, որ նա լաւանայ, քաղցրանայ, խմելու ջուր դառնայ։

Աստուած այս գործը յանձնել է աշխատասէր արևին։ Իւր տաք ճառագայթներով արևը ջուրը թեթև գոլորշիների է դարձնում. ջրի գոլորշիներն իրանց միջի աղային մասերը թողնում են ծովերում, իրանք բարձրանում են և, թանձրանալով, երևում են արծաթափայլ ամպի կերպարանքով կապոյտ երկրակամարի վրայ։

II

Գոլորշիները բարձրանալով թանձրանում և ամպ են դառնում. բայց նրանք չեն կանգնում ուղղակի ծովի վրայ։ Այստեղ քամին սկսում է իւր գործը և ահագին ամպերը թեթև փետուրի նման քշում է դէպի լոյս աշխարհի ամեն կողմերը։ Ամեն մէկ ամպի մէջ այնքան ջուր կայ, որ եթէ նա միանգամից ցած թափուէր, կը ծածկէր քաղաքներ,

գիւղեր, մարդկանց և կենդանիներին։ Բայց Աստուած գործը ուրիշ տեսակ է կարգադրել. ամպերից կաթկաթում են անձրևի փոքրիկ կաթիլները, ինչպէս ալիւրը մաղի միջից, կամ սառչում ու թափւում են ինչպէս ձիւն։

III

Ջուրը թարմացնում է հովիտներն ու արտերը և հողը նրան իւր ներսն է ծծում։ Հողի տակ աւելորդ կաթիլները միմեանց յետևից հաւաքւում և կազմում են ստորերկրեայ փոքրիկ կոհակներ. մի քանի կոհակներ խառնւում են միմեանց հետ և, մի ճանապարհ գտնելով, դուրս են բղխում երկրի երեսը սառն աղբիւրի ձևով։ Աղբիւրը բղխում է և, առուակ կազմելով, առաջ է խաղում։ Առուակն էլ իրան համար ճանապարհ է պատրաստում. փոքր առ փոքր հողը քանդում է և սկսում է քարերի վրայ խոխոջալով առաջ գնալ։ Պատահում է, որ նա ճանապարհին հանդիպում է իւր նման մի շատախօսի և նրա հետ եղբայրանալով, ձայն ձայնի տուած, առաջ են խաղում։ Նրանց պատահում են ճանապարհին երրորդ, չորրորդ և հինգերորդ առուակներ... սրանք ամենքը խառնւում են միմեանց հետ և բարեկամաբար առաջ են հոսում։ Նայում-տեսնում ես, որ ահա այս եղբայրական միութիւնից մի կանոնաւոր գետակ է կազմուել։ Այս գետակը ջուր է տալիս մարդկանց, կենդանիներին, թարմացնում ու զովացնում է դաշտերի ծարաւ բոյսերը, պտտացնում է ջրաղացների երկանները, կրում է իւր վրայ լաստեր և թեթև նաւակներ. իսկ նրա սառը կոհակների մէջ խաղում են ուրախ ձկները՝ փայլեցնելով իրանց արծաթագոյն թեփուկները։

IV

Գետակը վազում, խառնւում է ուրիշ գետակի հետ և միասին առաջ են գնում։ Ճանապարհին նրանց հետ խառնւում են ուրիշները և այսպիսով կազմում են մի ահագին գետ, որ ունենում է բազմաթիւ վտակներ և անցնում է մի թագաւորութիւնից միւս թագաւորութիւն. երբեմն միևնոյն գետն անցնում է շատ մանր տէրութիւններով և նրանց ամենին էլ բաշխում է իւր առատ ջրից։ Լողում են գետերի վրայ ծանր նաւեր, որոնք բարձած են լինում զանազան ապրանքներով։ Անցնում են նրանց վրայով առագաստաւոր նաւեր, իսկ եզերքների մօտ շինւում են արուեստագործական գիւղեր և առևտրական քաղաքներ՝ մինը միւսից հարուստ։ Գետը մեծամեծ հարստութիւններ է տանում մի երկրից միւսը և իւր լայն բերանով ոչ թէ փոքրիկ նաւակներ, այլ և մեծամեծ նաւեր, թեանման առագաստներով զարդարուած, ծովն է մտցնում։

Գետերից շատ ջուր է թափւում ծովերի մէջ, բայց արեգակն էլ հանդարդ չէ մնում. նա անդադար գոլորշիներ է բարձրացնում, ամպեր է կազմում և ամբողջ աշխարհին անձրև է բաժանում։

Գետերը դարերով թափւում են ծովերի մէջ և նրանց երբէք չեն լցնում. արևն էլ յաւիտեան գոլորշի է բարձրացնում ծովերից, բայց երբէք նրանց չէ ցամաքեցնում։ Այսպէս ամենիմաստ կերպով է կարգադրել Աստուած այս գործը։

88. ՋԵՐՄԸՆԵԼԻ ՄԾԵԿ

Ինքն է անշունչ, չունի հոգի,
Բայց գործերն են ազգի-ազգի։

Անիւները մեծ ու փոքրիկ,
Լիսեռները լայն ու նեղլիկ.
Կաշուէ գոտի մէջքին կապած,
Հուր ու դժոխք իւր փորն առած.
Ծծած ջուրը տակառներով,
Արտաշնչումն ամպ է ու ծով։

Մռնչում է վիշապի պէս,
Ծրվվում, ճրչում, մրրիկ կ'ասես.
Փռընչոցը այնպէս ուժգին՝
Հազար գոմէշ ունի միջին։

Ինչեր ասես նա չէ անում՝
Ցորեն կալսում, կտաւ գործում,
Բուրդ ու բամբակ մաքրում, մանում,
Վուշը գզում, հինած անում,
Երկար ու լայն մեծ տորքերին,
Անթիւ ու բիւր մաքուքներին
Արագ-արագ գործի դնում։
Գերաններից մանրիկ մեխեր,
Բազմատեսակ տախտակ քաշում.
Մետաղներից սիրուն փողեր,
Եւ երկաթից գործիք ձուլում.
Կարծը ապակիք, պողպատիկներ
Խաղ ու պարով տաշում, յղկում,
Կ'ասես նրա սուր կլորիչին
Չեն դիմանալ՝ ինչ էլ դիպչին։

Այս ամենը նա գործում է անխոով.
Յոգնիլ չունի, միշտ շարժւում է անվրդով։

89. ՅՈԼԱԿԸ ԵՒ ՎԱՐԴՈՒՀԻՆ

Երկու որբ, Յոլակը և նրա քոյր Վարդուհին, հեռու ճանապարհ էին գնում։ Սաստիկ շոգ էր. արեգակն այրում էր նրանց։ Յոլակը ծարաւ էր։ Ճանապարհին ոչ աղբիւր կար, ոչ գետ։ «Քոյրիկ, ծարաւ եմ, ջուր եմ ուզում, ասաց Յոլակը»։

—Սպասիր, եղբայր, շուտով աղբիւրին կը հասնենք։ Գնում են։

Արևն էլ բարձրից կրակ է թափում
Եւ խեղճ որբերին այրում, խորովում.
Աղբիւրն էլ, կարծես, դեռ շատ հեռու է.
Գընում են—գընում, նրան չեն հասնում։

Յոլակը տեսնում է մի ձիու սմբակ ճանապարհի մօտ ընկած, անձրևի ջրով լիքը։ «Քոյր իմ Վարդուհի, ահա ջուր. կաց, թող ես այս սմբակի ջուրը խմեմ»։

—Չէ, եղբայր, մի խմիր, թէ չէ՝ քուռակ կը դառնաս։

Յոլակն ախ է քաշում և նորից առաջ են գնում։

Արևն էլ բարձրից կրակ է թափում
Եւ խեղճ որբերին այրում, խորովում.
Աղբիւրն էլ, կարծես, դեռ շատ հեռու է.
Գընում են-գընում, նրան չեն հասնում։

Ճանապարհին Յոլակը տեսնում է մի կովի կճղակ, անձրևի ջրով լիքը։ «Քոյր իմ Վարդուհի, ահա ջուր. կաց. թող ես այս կճղակի ջուրը խմեմ»։

—Չէ, եղբայր, մի խմիր, թէ չէ, հորթ կը դառնաս։

Նրանք շարունակում են իրանց ճանապարհը։

Արևն էլ բարձրից կրակ է թափում
Եւ խեղճ որբերին այրում, խորովում.

Աղբիւրն էլ, կարծես, դեռ շատ հեռու է.
Գընում են-գընում, նըրան չեն հասնում։

Վերջապէս Ցոլակը նկատում է մի ոչխարի կճղակ, անձրևի ջրով լիքը։ Նա էլ քրոջը չի հարցնում. մի փոքր յետ է մնում, վեր է առնում կճղակը և բոլոր ջուրը խմում է։

II

Վարդուհին յետ է նայում և տեսնում է, որ եղբայրը չկայ. նա կանչում է բարձր ձայնով, բայց փոխանակ Ցոլակի, նրան մօտենում է մի սպիտակ գառը։ Վարդուհին հասկանում է, թէ սա ինչ գառն է և սաստիկ արտասուում է։ Բայց էլ ճար չկար. նա առաջ է գնում գառան հետ։ Ճանապարհին նրանց պատահում է մի պարոն։ «Սի բուն աղջիկ, ասում է սա. ծախիր այդ գառը, առնեմ»։

—Ոչ, պարոն, այս գառը ծախու չէ. սա իսկական գառը չէ, իմ հարազատ եղբայրս է։

Պարոնը խղճում է նրանց և երկուսին էլ վեր է առնում իւր մօտ։ Յետոյ նա պսակւում է Վարդուհու վրայ, իսկ գառանը պահում-պահպանում է։

Նրանք շատ երջանիկ էին ապրում. բարի մարդիկ, նրանց վերայ նայելով, ուրախանում էին, իսկ չարերը նախանձում էին։ Ամենից աւելի նախանձում էր մի պառաւ, որ նրանց հարևանն էր։ Սա միտք ունէր իւր աղջիկը պարոնին կնութեան տալ, բայց իւր մտադրութիւնը չկատարուեց։ Պառաւը մտքումը դրեց փորձանքի մէջ գցել Վարդուհուն... Մի օր Վարդուհին գնաց լճի ափը զբօսնելու։ Պառաւը թագուն հետևում էր նրան։ Երբ որ մի փոքր հեռացան բնակութիւնից, պառաւը բռնեց տիկնոջը, վզից մի քար կապեց և գցեց լիճը։ Յետոյ նա Վարդուհու շո-

ները հագցրեց իւր աղջկան և ուղարկեց պարոնի ապարանքը։ Նրան ոչ ոք չճանաչեց. նոյն իսկ պարոնը խաբուեցաւ։ Միայն գառն էր տեսել ամեն բան. նա ոչ ուտում էր, ոչ խմում. միշտ վազվզում էր լճի եզերքին և ցաւալի կերպով մայում էր։

V

Նոր տիրուհին տեսնում է, որ գառը շատ է զոռում, գոչում. նա վախենում է՝ չլինի թէ պարոնը հասկանայ իւր խարդախութիւնը, այս պատճառով հիւանդ է ձևանում և խնդրում է ամուսնուն, որ գառանը մորթել տայ։ «Ինձ բժիշկներն ասել են, որ այն ժամանակ միայն կազատուիմ այս հիւանդութիւնից, եթէ այդ գառան մսից ուտեմ», ասում է նա։ Պարոնը շատ է զարմանում, բայց էլի հրամայում է, որ կնոջ կամքը կատարեն։

Գառը հասկանում է, որ ինքն էլ երկար ապրելու չէ, գնում է լճի ափը և ողբալի ձայնով կանչում է.

«Քոյր իմ Վարդուհի, օգնութեան հասիր,
Թշուառ եղբօրդ մահից ազատիր.
Ահա մեր բազում հընոց են շինել,
Հընոց են շինել, դանակներ սրրել՝
Խղճուկ եղբօրդ ուզում են մորթել»։

Վարդուհին ջրի տակից պատասխանում է.

«Անուշիկ եղբայր, ինչպէս օգնեմ քեզ,
Ի՞նչպէս ճար անեմ քո ցաւերիդ ես.
Մի ահագին քար վզիցս է կապած,
Ջուրը ինչպէս սար վրրաս ծանրացած»։

«Անգութ պառաւը ինձ լիճը գցեց,
Տունրս կործանեց, իմ փեսաս խրլեց.

Մինթէ խիղճ չունի իսպառ իւր սրրտում,
Որ անմեղ եղբօրս մորթել է ուզում»։

Պարոնը շատ հեռու չէր. նա լսեց այս խօսակցութիւնը և կանչեց իւր սպասաւորներին.

«Հաւաքուեցէք, հաւաքուեցէք, ծառաներ,
Եւ ձգեցէք իմ մետաքսեայ ուռկաններ»։

Ծառաները վազեցին, ուռկանները ձգեցին և Վարդուհուն հանեցին. նրա պարանոցի թոկը կտրեցին, մաքուր ջրով լուացին և վերան ճերմակ սաւան ձգեցին։ Վարդուհին առաջուանից աւելի գեղեցկացաւ։ Նա գրկեց գառանը և կամենում էր համբուրել... բայց գառն էլ գառը չէր, այլ տղամարդ էր դարձել։ Պարոնը տուն տարաւ նրանց և այնուհետև երեքը միասին առաջուանից աւելի երջանիկ սկսեցին ապրել։ Իսկ պառաւի աղջկան ծառաները տանից դուրս արին։

ՇՐՋԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Տարուայ չորս եղանակներին

90. ՁՈՐՍ ԵՂԲԱՅՐ

Չորս եղբայր են. ամեն տարի
Երկրիս վրայ ման են գալի.
Չորսն էլ ջոկ-ջոկ ունին հասակ,
Պարզևներն են հաղար տեսակ։

Առաջինը է պատանի,
Բողբոջ, տերև, սաղարթ ունի.
Պայծառ տերև, կանաչ արօտ,
Որոնց տղայքն են միշտ կարօտ։

Երկրորդ եղբայրն երիտասարդ,
Տալիս է մեզ անձրև առատ.
Ծաղկունք ցանում է ամեն դի,
Յոյս է տալիս առատ հընձի։

Երրորդ եղբայրն այն չափահաս,

Մրգերով լի ունի մի թաս.
Բաժանում է տղոց իւր դանձ՝
Ծիրան, խընձոր, խաղող ու տանձ...

Հորրորդ եղբայրն է ծերունի,
Ցուրտ ու խաւար շալկած ունի.
Այգի, անտառ ամայացած,
Դաշտ և արօտ ձիւնով լցուած։

91. ԱԼԵՒՈՐ ՊԱՊԻ ՀԱՐԻՒՆԵՐԸ

Բարկացաւ ալեոր ձմեռը, սաստիկ բարկացաւ և մրտքումը դրեց, որ ոչ մի կենդանի շունչ չթողնէ երկրիս երեսին։ Ամենից առաջ նա թռչուններին ձեռք առաւ. նրանք ձանձրացրել էին նրան իրանց երգերով ու ծլվլոցով։

Ձմեռը փչեց սառը քամի, ծառերի տերևները վէր ածեց, թռչունների տեղը կտրեց։ Թռչուններն էլ խումբ-խումբ հաւաքուեցին, միտք արին և սկսեցին կռկռալով թռչել բարձր սարերի, խոր-խոր ձորերի և կապոյտ ծովերի վրայով դէպի տաք երկիրները։ Մնացին միքանի թռչուններ, բայց նրանք էլ մօտեցան մարդկանց բնակարաններին։

Ձմեռը տեսաւ, որ թռչունների յետևից չէ կարող հասնել, գազաններին ձեռք առաւ։ Ձիւնով ծածկեց դաշտերն ու անտառները և մինը միւսի յետևից ուղարկեց իւր սառնամանիքները։ Գալիս են սառնամանիքները մինը միւսից չար, գալիս են և թռչկոտալով անցնում են ծառից ծառ, ամեն բան ճայթում, ճռճռացնում ու գազաններին վախեցնում։ Բայց գազանները չվախեցան. նրանցից մի քանիսը հաստ քուրքի մէջ էին կոլոլուած, միւսներն էլ,

մտան իրանց խոր որջերի մէջ. սկիւռը իւր խոռոչում ընկոյզ էր կուծում. արջը քարայրի մէջ իւր թաթն էր ծծում. նապաստակը ցաթկոտելով էր տաքանում. իսկ ձիաները, կովերը, ոչխարները շատ վաղուց տաք դոմերի մէջ պատրաստի խոտը ծամում էին և տաք ջուրը խմում։

Աւելի սաստիկ բարկացաւ ձմեռը, դէպի ձկները դարձաւ։ Սառնամանիքներ է ուղարկում մինը միւսից կատաղի։ Նրանք վազում, անցնում են գետերի և լճերի վրայից և նրանց երեսը ծածկւում են թանձր սառուցով։ Գետերն ու լճերը սառան, բայց միայն երեսից. իսկ ձկները ջրերի խորքը գնացին. սառցային ծածկոցի տակ նրանք աւելի տաք էին ապրում։

«Է՜հ, սպասիր, ասում է ձմեռը. հիմա ես իմ բոլոր բարկութիւնը մարդկանց վրայ կը թափեմ»։ Ասում է ու մինը միւսի յետևից ուղարկում իւր սառնամանիքները։ Ցրտութիւնից լուսամուտների ապակիները սառուցով ծածկւում են. սառը քամին խփում է պատերին, լուսամուտներին։ Իսկ մարդիկ վառում են վառարանները, նրանց առաջ նստում ու ձմեռուայ վրայ ծիծաղում։ Եթէ մէկը կամենում է գնալ անտառը փայտ բերելու, հագնում է հաստ քուրք ու տաք թաթմաններ և, երբ սկսում է կացինը բարձր ու ցածը անել, փայտ կտրել, դեռ քրտնում էլ է։ Ճանապարհներին, կարծես ծիծաղելով ձմեռուայ վրայ, կարաւանները շարւում են՝ ձիաներից դոլոշի է բարձրանում, իսկ ձիապանները ոտով են գնում, ձիւնը տրորում, ուսերը թափահարում և ցուրտը գովաբանում։

Ամենից աւելի ամաչեց ձմեռը, երբ տեսաւ, որ մինչև անդամ փոքրիկ մանուկները իրանից չեն վախենում. նրանք սղղում են սառուցների վրայ, ձնագնդի են խա-

զում, ձիւնից սարեր են կանգնեցնում և նրանց վրայ ջուր ցանելով՝ երգում են.

«Օրը կարճ է. արեւ չըկայ, շատ ցուրտ է.
Ծերմակ ձիւնը քուլայ-քուլայ կը ըրրդէ.
Մարդ, անասուն քուք-քորանից վախեցած,
Տաք-տաք տներ, խոր-խոր քներ են մտած:
Օ՛յ-օ՛յ-օ՛յ,—ձմեռն է,
Մեզ դուրեկան մի բեռն է»:

Ձմեռը տեսաւ, որ ոչ ոքի չէ կարողանում յաղթել, բարկութիւնից լաց եղաւ: Երկնքից նրա արտասուքը կաթկաթեց . . . Երևի գարունը մոտեցել էր:

92. Ի՞ՆՉ ԱՐԵՑ ՁՄԵՌԸ

Ո՞ւր է շշնջիւնը
Քաղցը անտառի
Եւ կարկաչիւնը
Մերձակայ առուի.
Ո՞ւր են հոտաւէտ
Ծաղկունքը դաշտի:
Ծառը մերկացաւ,
Էլ տերև չունի.
Ձիւնէ սփռոցը
Ամենը ծածկեց,
Դաշտեր ու ձորեր
Սպիտակացրեց:
Ալևոր պսպը
Իւր թեւի տակը
Ամենն շղթայեց.
Առուն էլ սառեց:
Միայն ցուրտ քամին
Կատաղութիւնով
Անցորդի բերանն
Լցնում է ձիւնով,
Երկինքն էլ ծածկում
Մռայլոտ մէգով:

93. ՅՈՒՆՎԱՐԻ ՄԷԿԻՆ

Մանկական յիշողութիւնից

Երէկ երեկոյեան մեր տանը շատ հիւրեր կային. նրանք

հաւաքուել էին, որ դիմաւորեն նոր տարուն: Ես մինչև տասներկու ժամն արթուն չմնացի և, առանց շորերս հանելու, քնեցի: Այսօր ես շատ վաղ զարթեցի և գնացի, իմ ծնողներիս նոր տարին շնորհաւորեցի: Համբուրելով նրանց ձեռքը, ես վազեցի բարի հօրեղբօրս սենեակը, շնորհաւորեցի նոր տարին և ցանկացայ նրան բաղդաւորութիւն և առողջութիւն: Հօրեղբայրս համբուրեց և տուեց ինձ մի գեղեցիկ պատկերազարդ գիրք: Նա ասաց. «Եթէ միշտ լաւ աշխատես, այսպիսի ընծաներ շատ կըստանաս ինձանից»: Ո՜րքան բարի է իմ հօրեղբայրս. նա իմ փոքր քրոջս ու եղբօրս էլ չմոռացաւ ուրախացնել. Զուշանիկին ընծայեց մի գեղեցիկ տիկին, իսկ Գարեգնին մի փոքրիկ թմբուկ: Նա ուրախութիւնից այնքան խփեց թմբուկը, որ ձեռները թուլացան:

Այսօր ամենքն էլ ուրախ են և շնորհաւորում են միմեանց նոր տարին՝ փոխադարձ բաղդաւորութիւն ցանկանալով: Մայրս հագցրեց մեզ նոր շորեր: Երեկոյեան մենք գնալու ենք հօրաքրոջս տուն: Ես գիտեմ որ այնտեղ կը խաղանք, կ'երգենք և շատ ուրախութիւններ կ'անենք:

94. ՆՈՐ ՏԱՐԻ

Ահա՛ եկաւ նոր տարի,
Հետը բերաւ նոր բարի.
Մանը տղոց ուրախ օր,
Բարի զաւակ հօրն ու մօր:

Մանը տղայք են ուրախ,
Ունին կաղին, գոզինաղ.
Սալորի չոր, չամիչ, թուզ,
Փշատ, յունապ և ընկուզ:

Մանր տղայք, չըմոռնաք՝
Աշխարհումս չէք մենակ.
Ուրիշ շատ խեղճ տղայք կան
Աղքատ և անօգնական։
Նոքա հայր ու մայր չունին,
Սև չոր հացի կարօտ են.
«Աղքատներին ողորմած
Եղէք», կ'ասէ ձեզ Աստուած։

95. ՅՈՒՆՎԱՐԻ ՀԻՆԳԻՆ

Այսօր երեկոյին Քրիստոսի սուրբ ծննդեան և մկրտութեան ճրագալոյցն էր։ Ես իմ ծնողներիս հետ գնացի եկեղեցի,



որ լիքն էր ժողովրդով։ Եկեղեցին լուսաւորուած էր հազարաւոր ճրագներով. տիրացուներն ու սարկաւագները քաղցր

ձայնով շարականներ ու երգեր էին երգում. քահանան պատարագ էր մատուցանում. մի ուրիշը կարդում էր աւետարանը. իսկ բոլոր ժողովուրդն աղօթում էր։

Ես էլ էի աղօթում։ Ես մտաբերում էի իմ վարժապետի պատմածը, թէ ինչպէս Փրկիչը ծնուեց ոչխարների այրի մէջ, ինչպէս հրեշտակը աւետիս տուեց հովիւներին. ինչպէս այդ հովիւներն եկան, երկրպագութիւն տուին նորածին Մանկանը։ Երևի այն երկիրը, ուր ծնուեց Փրկիչը, մեր երկրից տաք էր, որ հովիւները կարողանում էին գիշերները դուրսը քնել։ Իսկ մեզ մօտ ինչպէս ցուրտ է այժմ։ Ձմարիտ՝ յունվարը ամենացուրտ ամիսն է։ Երկիրը սպիտակ սաւանով ծածկուել է։ Ինչքան լաւ կը լինէր, եթէ վաղը դոնէ եղանակը մեղմ լինէր։

96. ՁԻՒՆ

«Ա՜խ, ինչու-ինչու կը գայ պաղ ձիւնը.
Նորից ամիսներ պիտ՝ մընամ տունը.
Տեսնելու չեմ ես կանաչ ծառ, արօտ.
Հոտոտ ծաղիկին պիտ՝ մընամ կարօտ»։

—«Ձիւնը որ կը գայ երկինքէն դէպ վար,
Իմացիր՝ մեծ բաղդ է մարդուս համար.
Վերմակի պէս տաք կը ծածկէ գետին,
Որ բոյսի արմատն դիմանայ ցրտին։

Նա հողին կը տայ հիւթ, պարարտութիւն,
Դաշտին ու արտին մեծ առատութիւն։
Մի տըրտնջար, մարդ, դու բնութենէն.
Թէ տաք և թէ ցուրտ՝ մեզ միշտ օգուտ են»։

97. ՅՈՒՆՎԱՐԻ ՎԵՑԻՆ

Արդէն քանի օր է, որ գետի եզերքին Քրիստոսի մկրտութեան համար տեղ է պատրաստած։ Այսօր, կէսօրին, պատարագից յետոյ, բոլոր քահանայական դասը ժողովրդի հետ մայր եկեղեցուց դիմեց դէպի Յորդանան։ Հանդէսը շատ փառաւոր էր։

Ճաշից յետոյ քահանան տիրացուի հետ եկաւ՝ մեր տունն օրհնեց։ Նա կարդաց աւետարանից, թէ ինչպէս



Յիսուսն եկաւ Յորդանան գետը՝ մկրտուելու, թէ ինչպէս ընդունեց նրան Յովհաննէս Մկրտիչը, ինչպէս բացուեց երկինքը և Աստուծոյ Հոգին աղաւնակերպ իջաւ նրա վրայ, ինչպէս լսուեց երկնքից Հայր Աստուծոյ ձայնը։

Սիրտս արորւում է, երբ-որ մտածում եմ, թէ վաղը

չէ՝ միւս օրը պիտի դնամ ուսումնարան. բայց մայրս ասում է, որ եթէ միշտ ազատ ման գամ, տօներն էլ այսպէս ուրախալի չեն լինիլ։ Պէտք է իմացած, արդեօք շատ ժամանակ կայ մինչև բարիկենդան։

98. ԿՈՆԿԼՈՒԹԻՆ ԳԱՐՆԱՆ

Ձմեռը դաշտում ծաղիկներ չկան.
Ձիւն գալուց առաջ նորա չըքացան.
Բայց ծաղիկների քնքուշ արմատներ
Փափուկ ձիւնի տակ հանգիստ են առել։

Կըգայ գարուն ոստոստալով,
Սար ու դաշտին այցելելով.
Կռիւ կըտայ ձիւն ու սառին,
Վերջ կըդնէ գիւժ ձըմեռին։

Նոր բողբոջ կըտան խոտերն ու ծաղիկ.
Գարնանաբերը կըբացուի հեզիկ.
Մանկունք ցնծալով դաշտը կըվազեն՝
«Օրհնեա՛լ է գալդ, գարուն, քո», կ'ասեն։

99. ՊԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻՆ

Բարիկենդաններին մենք շատ ուրախութիւններ արինք, խաղացինք, իւղաբլիթ կերանք։ Մենակ մենք չէինք ուրախանում։ Ամենայն կողմից խնդութեան ձայներ էին լսւում... Այսօր էլ մարդիկ մեծ շարժողութեան մէջ են, բայց յայտնի երևում է, որ այդ շարժողութիւններն այն զուարթութիւնը չունին, ինչ-որ երէկ. ամենքն զզում են,

որ այժմ պաս է։ Մեղմ զանգահարութիւնը օրը երեք անգամ և փառաբանութիւնները եկեղեցիներում, ահա պասի միակ զարդարանքը։ Մարդիկ համեստութեամբ օրը երեք անգամ ժամ են գնում։ Երէկ նրանք ուրախանում էին, այսօր աղօթում և պատրաստւում են հաղորդուելու։

Այժմ օրերն էլ փոխուել են։ Օդի մէջ գարնան նշանները երևում են։ Միջօրէի արեգակը բաւականին տաքացնում է։ Կտուրներից բիւրեղեան շիթեր են կախւում։ Ձնծաղիկը դեղնած խոտերի միջից իւր գլուխը բարձրացնում է։ Ի՞նչքան ուրախալի է մտածել, որ Զատկին երկիրը կանաչ խոտով ծածկուած կը լինի։ Մենք միայն վեց Շաբաթ ենք կարդալու. եօթներորդ շաբաթն ազատ ենք։

100. ԳԱՐՈՒՆ

Կարօտ ենք տեսքիդ, աննման գարուն,
Ձմեռ արի, մեզի բեր ծաղիկ սիրուն.
Բեր պայծառ արև, բեր մեզ տաք օրեր,
Ճրուվրռող թռչուն, բեր կանաչ դաշտեր։

Բաց մեր դռները, բաց մեր պատուհան,
Թող բացուին, ծաղկին վարդ, մեխակ, շուշան.
Փակուած սենեակից ելնենք, ազատուենք,
Կանաչ դաշտ երթանք, խաղանք, գլորուենք։

101. ՄԱՆԿԱԿԱՆ ՑԻԶՈՂՈՒԹԻՒՆԻՑ

Ծաղկազարդ կիրակի

Ահա պասի վեց շաբաթն անց կացաւ։ Երէկ մեզ ուսումնարանից արձակեցին։ Երբ-որ տուն եկայ, հայրս

հարցրեց, թէ երէկ ինչ տօն էր։ Ես այդ չգիտէի, բայց ինձ հասկացրին, որ շաբաթ օրը Ղազարոսի յարութեան տօնն էր. իսկ այսօր Քրիստոսի հանդիսաւոր կերպով Երուսաղէմ մտնելու տօնն է. այս ես գիտեմ։



Այսօր մեր տանը ցիք բոլորը, բացի մանուկներից, շատ շուտ ժամ գնացին։ Երբ մայրս վերադարձաւ, ձեռքին ուռ ունէր։ Մենք դուռ անկողնի մէջ էինք։ Մայրս ուռով մեզ կամաց խփեց և ծիծաղելով ասաց. «Վեր կացէք, այսօր ով որ շուտ վեր կենայ, շնորհքով տղայ կը լինի»։ Մենք ամենքս էլ տեղներից վեր թռանք։ Մայրս համբուրեց ամենիս և մի-մի ուռ տուեց, ասելով՝

«Օրը տաքցաւ, ձիւնը հալուեց արեւից,
Քչքչալով ջուր է հոսում լեռներից.

Սար ու ձորեր զարդարուեցին կանաչով,
Դաշտը ծածկուեց ոչխարների հօտերով:
Հա՜-հա՜-հա՜, զարուն է.
Տեսէք, ինչպէս սիրուն է»:

Ա՜խ, ինչ գեղեցիկ է։ Ուռի վրայ ջրդոտ կոկոններ —գառնուկներ կան. սա գարնան նշան է։ Երևի շուտով ծառերի ծաղիկներն էլ կը բացուին։

102. ԱՒԱԴ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Այսօր ես խոստովանուեցի։ Ես երկիւղով մօտեցայ քահանային, չոքեցի նրա առաջ և խոստովանուեցի իմ տղայական պակասութիւնները։ Քահանան խրատեց ինձ, և երբ ես խոնարհաբար խոստացայ, որ կ'աշխատեմ միշտ ջանասէր, բարի և ճշմարտախօս լինել, նա ձեռքը դրեց գլխիս և Քրիստոսի անունով օրհնեց ինձ։

Պատարագն սկսուեց. բայց վարագուրով դեռ ծածկուած էր սեղանը և քահանան կարդում էր այդ օրուան աղօթքը։ Եկեղեցին լիքն էր մարդկանցով։ Նրանք ամենքն էլ աղօթում էին։ Ես էլ աղօթում էի. ես աղօթում էի, որ Աստուած ինձ կարողութիւն տայ կատարելու իմ խոստումները։ Ես գիտեմ, որ խոստում չկատարելը մեծ պակասութիւն է։ Քահանան վերջացրեց աղօթքը։ Յանկարծ վարագոյրը բացուեց. սարկաւագներն սկսեցին գեղեցիկ ձայնով երգել։ Սրբութիւնը վերաբերեցին ժողովրդի միջով։ Հաղորդութեան ժամանակ սարկաւագը երգեց. «Երկիւղով և հաւատով առաջ եկէք և սրբութեամբ հաղորդուեցէք»։ Ես խոնարհութեամբ և երկիւղով մօտեցայ սեղանին և հաղորդուեցայ։

Այսօր ես ամբողջ օրը չեմ վազվզել, այլ նստած էի տատիս մօտ և աղօթք էի կարդում։

Աւագ ուրբաթ դիշեր մենք գնացինք սգին։ Քահանան կարդաց եկեղեցում, թէ ինչպէս էր աւանդում մեր Փրկիչը աշակերտներին իւր վերջին պատուէրները և թէ ինչպէս դղում էր, որ Ինքն արդէն մատնուած է և պէտք է բռնուի։ Դղուր չէր, որ ամեն մի աւետարանից յետոյ դպիրները ողբաձայն երգում էին... Վերջին աւետարանը կարդացին, ուր մանրամասն գրուած էր, թէ չար մարդիկ ինչպէս չարչարեցին ու խաչեցին Քրիստոսին։

Այս դիշեր տասներկու գլուխ աւետարան կարդացին։ Իհարկէ դժուար էր կանգնել այդքան երկար, բայց ես կանգնեցի։

103. ԱՒԱԴ ՈՒՐԲԱԹ ԵՐԵԿՈՅԻՆ

Այսօր Քրիստոսի թաղման օրն է և մենք գնացինք եկեղեցի։ Ժամերգութիւնը դեռ չէր սկսուել։ Ես սկսեցի պտտել եկեղեցու շուրջը։ Շատ պայծառ օր էր. արեգակը երեկոյեան վերջալուսի ճառագայթներով փայլեցնում էր եկեղեցիների գմբէթները։ Թռչուններն ուրախ-ուրախ թռչկոտում էին եկեղեցու կտուրի վրայ և երեկոյեան վերջալուսի տակ մեղմօրէն ծլվլացնում էին։ Չնայելով այդ բոլորին, ես կարծես տխուր էի. այսօր մեր Փրկչի թաղման օրն է. եկեղեցու մէջ դրած է Քրիստոսի դագաղը, որի չորս կողմը հանդարտ այրւում են մոմերը և իրանց շուրջը կապտագոյն շառաւիղներ են արձակում. կարծես նրանք էլ տխուր են։ Միայն ուրախալի է լսել, թէ ինչպէս բարի Յովսէփը սուրբ կտաւով պատեց մեր Փրկչի մարմինը և չթողեց նրան չարագործների ձեռքին։

Ժամերգութիւնից յետոյ մենք յետ դարձանք տուն։

ճանապարհին տեղ-տեղ դեռ ևս ձիւն էր երևում, բայց շատ տեղերում էլ նա արդէն հալուել էր։ Հալուած տեղերը կանաչ նորափթիթ խոտով ծածկուել էին։ Պարտէզներում էլ հոտաւէտ փոքրիկ մանուշակն արդէն բաց էր արել իւր կապոյտ աչերը։ Ծառերի կոկոններն ուռել ու լցուել էին. իսկ նշենիներն արդէն քանի օր է զարդարում են այդիներն իրենց սպիտակ ծաղիկներով։ Ահա մերձակայ ձորում խոխոջում է ձիւնի ջրերից գոյացած առուակը։ Գեղեցիկ արև, գործիր ջանասիրութեամբ. մի մոռանար, որ երկու օրից յետոյ Զատիկ է լինելու։

104. ԳԱՐՆԱՆՑԻՆ ՋՐԵՐ

Սարերի ձիւնը դեռ չէ վեր կացել,
Բայց դաշտ ու հովիտ փթթել են, բացուել.
Ձիւնի ջրերը ուրախ կարկաչով
Ցած են գլորւում հովիտի միջով։

Ցած են գլորւում հովիտի միջով,
Մտնում են դաշտը ուրախ քրքիջով,
Եւ ամեն մարդու համբաւ ցանկալի,
Ամեն մանուկի աւետիս տալի.

«Ահա կենսաբեր գարունը եկաւ,
Նոր հոգի, նոր կեանք մեր երկրին տուաւ.
Դուք էլ, մանուկներ, նոր եռանդ առէք,
Գարնան ծաղկի պէս դուք էլ ճոխացէք»։

105. ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Զատիկ շաբաթ երեկոյին եկեղեցում հանդիսով տո-

նեցին սուրբ Յարութեան ճրագալոյցը։ Մենք երեկոյեան ժամից յետոյ վերադարձանք տուն և լուծեցինք պասները— թաթախուեցանք։ Եօթը շաբաթ պահելուց յետոյ՝ ինչքան ուրախալի էր ձեռքիդ ունենալ կարմիր ձու և նրանով թաթախուիլ։ Սեղանի վրայ դարսած էին զանազան տեսակ կերակրեղէն, բացի մսեղէնից, որովհետև այս երեկոյ



նաւակատիք էր։ Հաց ուտելուց յետոյ ես շուտ քնեցի. բայց խնդրեցի մօրս, որ ինձ էլ զարթեցնի առաւօտեան ժամերգութեանը ներկայ գտնուելու։

Կէս գիշերից յետոյ մայր-եկեղեցու զանգակը որոտաց։

Ես նրա ձայնից ինքս զարթեցի։ Լուսաբացին միւս եկեղեցիների զանգակներն էլ սկսեցին մեղմաբար զողանջել։ Մենք դուրս եկանք տանից։ Փողոցները դեռ ևս մութն էին, բայց եկեղեցին հաղարաւոր ճրագներով փայլում էր։ Եկեղեցում այնքան ժողովուրդ կար, որ մենք հազիւ տեղաւորուեցինք։ Ժամերգութիւնն սկսուած էր։ Ես անչափ ուրախացայ, երբ սարկաւագները երգեցին քաղցր ձայնով. «Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»։ Ահա իսկապէս ամենամեծ տօնը։

Պատարագը վերջանալուց յետոյ՝ մենք վերադարձանք տուն։ Ես շտապեցի համբուրել իմ հօրն ու մօր ձեռքը, կրկնելով ինձ շատ սիրելի խօսքը. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։ Նրանք էլ ինձ համբուրեցին։ Ապա ես մօտեցայ իմ փոքրիկ եղբօրս ու քրոջս և քաղցրութեամբ համբուրեցինք իրար։

Մի քանի ժամից յետոյ եկաւ քահանան տիրացուի հետ։ Նրանք օրհնեցին մեր տունը և երգեցին Քրիստոսի հրաշափառ յարութեան շարականը։

Ես և եղբայրս դուրս եկանք, որ գնանք մեր բարեկամների Զատիկը շնորհաւորենք։ Ա՜խ, ինչպէս գեղեցիկ առաւօտ էր. փայլուն արևը սփռում էր իւր արծաթագոյն ճառագայթները. մեր պարտիզի բոլոր նշենիները ծաղկել էին. մանուշակը խոտերի մէջ փռուել էր ինչպէս մի կապտագոյն սփռոց և անուշահոտութեամբ լցնում էր աշխարհս։ Ահա միւս կողմից ծիրանի ծաղիկներն էլ իրանց կիսաբաց կոկոնների տակից համեստաբար ժպտում են։ Ինչքա՜ն պայծառ է օրը. բոլոր բնութիւնը կարծես զարդարուած լինի։ Կռունկների երամներն ահա շղթայաձև ընթանում են՝ փառաբանելով գեղեցիկ գարունը, իսկ նրանցից ցած, երկրի վրայ, մանուկները, միասին ժողո-

վուած, ուրախ զուարթ ձուի են խաղում։ Ահա մատաղ գառների փոքրիկ հօտերն էլ մայելով շրջում են փողոցներում։ Ամեն մարդ աշխատում է գառն ունենալ իւր տանը։ Սա Զատկի նշանն է։ Հայրս գնեց մեզ համար մի գեղեցիկ գառը. ես նրան շատ եմ սիրում և նորաբոյս կանաչ խոտով կերակրում եմ։

106. ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՜Ի

Դաշտերումը ձիւնը հալուեց,
Կենդանարար հովը փչեց.
Սառնամանիք, հողմ ձրմեռուան,
Կարճ միջոցում անյայտացան։
Բերկրութիւն է անհոգ մարդոց.
«Քրիստոս յարեա՜ւ 'ի մեռելոց»։

Այգի, պարտէզ զարդարուեցան,
Ծառերն ամեն կանաչեցան.
Ծիծեռնակներ, թռչուն ամեն
Ողջունեցին նորեկ գարնան։
Ցնծութիւն է հարուստ մարդոց.
«Քրիստոս յարեա՜ւ 'ի մեռելոց»։

Բազմութիւնը մեծ ու փոքր
Ժողովուեցան եկեղեցին.
Հարսն ու աղջիկ զարդարուեցան
Որպէս ծաղկունք գարնանային։
Բերկրութիւն է շա՜տ-շա՜տ մարդոց.
«Քրիստոս յարեա՜ւ 'ի մեռելոց»։

Եկեղեցում վիզը ծռած,
Հագուստները պատառոտած,
Քարի վրայ ոտաբոբիկ
Տեսէք, եղբարք, ով է կանգնած...
Սուգ ու լաց է թշուառ մարդոց.
«Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց»։

Որդկերանցով շրջապատուած,
Նա աղքատ է, սոված, քաղցած.
Նա տրկար է, անօգնական,
Մրսիթարենք, եղբարք, նորան։
Տանջանք, մահ է թըշուառ մարդոց.
«Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց»։

107. ՄԵՌԵԼՈՑՔ

Զատիկ երկուշաբթի ծնողներս ինձ, քրոջս և եղբօրս տարան հանգստարան։ Այնտեղ, գերեզմանաքարերի տակ, հանգստանում են մեր ազգականներից շատերը. այնտեղ է և իմ քոյր Եղիսաբէթը։ Քահանան ներկայ էր։ Հայրս օրհնել տուեց քրոջս գերեզմանը։ Ի՜նչքան խոտեր են կանաչել նրա փոքրիկ բնակարանի վրայ։ Գերեզմանատունն էլ է նորոգուել։ Ամեն կողմում ծաղկում են գեղեցիկ ծաղիկներ. Շատ գերեզմանների հաղապատերի մէջ իրանց ազգականները զանազան ծառեր են տնկել։ Դարունը չէ մոռացել հանգստարանն էլ գեղեցկացնել. ծառերը զարդարուած են կանաչ տերևով. թռչունները նրանց վրայ թռչկոտում են և ծլվլում. մինը ծղօտ է տանում, միւսը փետուրներ. երևում է, որ նրանք սկսել են իրանց համար

բներ շինել։ Հանգստարանի միւս կողմում գիւղացիք արդէն հերկում են իրանց վարելահողերը։

108. ՇԻՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԳԸ

Ա՜յ մարդ, այսօր շատ քընեցար, ննջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր.
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը փռուեցաւ։

Ընկերներդ վաղ արտերը գնացին,
Ցորեն, գարի գերանդիով հնձեցին.
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նրստան հանգչիլ կաղնիների հովումը։

Ա՜յ մարդ, վեր կաց, սառը ջրով լուացուիր,
Գոտիդ կապէ, գերանդիդ առ, դաշտ հասիր.
Քանի հով է՝ հունձդ արա արտումդ,
Հունձդ հնձէ, մի ծուլանար գործումդ։

Հունձդ կապէ, բարդդ բարդէ, տուն արի,
Հանգստացիր, երբ քո հունձդ կատարի.
Բեր գերանդիդ, կախէ պատէն քո տանը,
Ես իրիկուան կը պատրաստեմ սեղանը։

Ա՜յ մարդ, հերիք ինչ-որ այսօր քնեցար,
Աչքդ մէկ բաց, տես թէ որչափ ուշացար.
Մեր դրացին վաղ անցկացաւ, կամուրջէն,
Վաղ լրեալ է մեր գիրը ձայնելէն։

Ի՞նչ ես պառկել, ինչ ես քընել, սիրեկան,

Արեգական շողը հասաւ մեր դրան.
Մի ծուլանար, ժամանակդ խընայէ.
Այն պիտի մեզ բոլոր ձմեռ կերակրէ։

109. ԱՄԱՌԱՅԻՆ ԱՌԱՒՕՏ

Ամառուայ պարզ գիշերն անց կացաւ. առաւօտեան հովը տարածուեցաւ օդի մէջ. մութ մէգերը բարձրացան ձորերից, աստղերը մինը միւսի յետևից շիջան. լուսաստղն էլ թառամեցաւ և շիջանելուն մօտ էր. նա երկնակամարից նկատում էր, որ ամպերը վազում են դէպի արևելք և, հանդիպելով արեգակին, ոսկեփայլ և արծաթագոյն շերտերով զարդարւում են։

Ահա և նա երևեցաւ։ Ուրախ զուարթ բարձրանում է երկնքում ոսկեճաճանչ արևը և իւր փայլուն ճառագայթներով արթնացնում է գետակները, դաշտերը, հովիտներն ու անտառները. արթնացնում է ծառերի վրայ թառ եղած թռչուններին և անտառի դազաններին. արթնացնում է բզէզին, որ մի փոքր հանգստացել էր իւր մամռապատ անկողնում։ Ոսկիանման արևը կարճ խօսքերով ասում է ամենին. «Հանգստացաք, բաւական է. այժմ ժամանակ է գործ շինելու»։

Գիշերն ամենքը հանգստացել են ցերեկուայ գործերից։ Դաշտերն ու արտերը, զովարար ցօղով նորոգուած, նոր ոյժ են ստացել և ոսկիանման փայլում են առաւօտեան ճառագայթների տակ։ Ծառերի տերևները, մարգերի խոտերը, արտերի հասկերը—բոլորը նորոգուեցին, զուարթացան։ Թռչուններն արթնացան և սկսեցին ուրախ երգելով իրանց նախկին գործը ձեռք առնել։ Ամառուայ գիշերը կարճ է, բայց կենդանարար։

Մանուկները զարթեցին և յետ դցեցին վերմակները. նրանց մատղաշ անդամները բաւական հանգստացել էին. ոտները կամենում էին վազել. ձեռները գործ էին խընդրում. գանգրապատ գլուխներում նոր-նոր մտքեր էին ծնւում։ Աղջիկները հագնուեցին, սառը ջրով երեսները լուացան, Աստուծուն աղօթք արին և գնացին ուսումնարան։ Ահա վազում են նրանք, ծըլվըլում են ինչպէս թռչունները դաշտերում և ուրախ զուարթ սկսում են գործել։ Արեգակը երկնքից նայում է աշխատասէր մանուկներին և ասում է քնքշաբար. «Թող Աստուած օգնէ ձեզ»։

110. Ա Մ Ա Ռ

Ստեղծողն իւր առատ ձեռքը բաց արեց,
Արտեր, անտառներ հարստացրեց.
Ծառեր ու թփեր զարդով ծածկուեցին.
Ամենայն կողմում ծաղկունք փայլեցին։

Ազատ շրջում են հօտերը դաշտում.
Ազատ լողում են ձկները ծովում.
Այգում պտուղներն դեղնել սկսան.
Արտերում հարուստ ցանքերը հասան։

Դաշտում մանգաղներն սկսան փայլել,
Եւ անտառներում թռչնակներն երգել.
«Ի՜նչքան սիրուն է այս ստուերներում.
Ե՛կ, հանգստացիր, մանկիկ, հովերում.
Ականջ դիր, ինչպէս մենք երգ ենք երգում,
Առատ ամառուան փառք վերընծայում»։

—«Ո՛չ թէ ամառուան, ասաց, փառք տուէք՝
Ով ամառ տուեց, Նորան օրհնեցէք»։

111. ԱՄԱՌԸ ԽՈՏՀԱՐՔՈՒՄ

«Տղա՛յք, վաղը առաւօտեան մենք ամենքս կը գնանք խոտհարքի», ասաց մեր հայրը, և մենք այնպէս գոռգոռացինք ու վազվզեցինք, որ զօրով կանգնեցրին մեզ։ Ես ձուկը բռնելու կարթեր էի պատրաստել, իսկ քոյրերս վեր առան իրանց կողմները, որ պտուղներ հաւաքեն, և առաւօտեան լուսաբացին մեր բոլոր ընտանիքը, սայլերի վրայ նստած, ճանապարհ ընկաւ։

Մի ժամից յետոյ մենք շեղուեցինք լայն ճանապարհից և գնացինք նեղ շաւիղներով, իսկ վերջումը բոլորովին ճանապարհից դուրս եկանք և, վերջապէս, հասանք մեր փափագելի մարգագետիններին։ Երբ-որ մենք տեղ հասանք, արևի ոսկիափայլ ճառագայթները դեռ նոր ծածանւում էին Մեծ—Մասիսի ձիւնապատ գագաթի վրայ, բայց հովիտն արդէն հնձողներով լիքն էր։ Հնձողները, չուխանները հանած, շապկանց, զոյգ-զոյգ առաջ էին քայլում բարձր խոտերի մէջ և իրանց յետևից վայր էին գցում կանաչ խոտերի շերտերը։ Նրանցից փոքր ինչ հեռու, միւս կողմը, նրանց ընկերները փոցխով ու եղանով հաւաքում էին չորացած խոտը և փոքրիկ դէզեր կազմում։ Հովտի այս ու այն կողմումն էլ սարի նման բարձրանում էին մեծամեծ դէզեր։ Մէկ մարդ կանգնած էր դէզի գլխին և վարպետութեամբ դարսում էր խոտը։ Դիւղացի մանուկները փոքրիկ կոյտերը կրում էին մեծամեծ դէզերի մօտ։ Ուրախութեան աղաղակը տարածւում էր օդի մէջ. աշխատասէր մշակները գործում էին զուարճութեամբ. երգեր, ծիծաղ,

բարձրաձայն խօսակցութիւն, շների հաչոցը, գերանդիների զընգզընգոցը, բեռնակիր ձիաների խրխընջոցը, եզների բառաչիւնը, անիւների մեղմ շառաչիւնը—այդ բոլորը խառնուելով ընութեան երգիչների քաղցր դայլայլիկների հետ, յափշտակում էին մարդու միտքը։

Ես շտապեցի ձուկը բռնել այն գետակի մէջ, որ հոսում էր այդ հովտի միջով. իսկ քոյրերս սկսեցին հատապտուղներ ժողովել։ Յետոյ մենք շատ ուրախութիւններ արինք՝ թիթեռներ բռնեցինք, ծաղիկներ ժողվեցինք և քոյրերիս հաւաքած մորու զեղեցիկ կարմրախառն հատիկներից փնջեր կազմեցինք։

Փոքր առ փոքր սկսեց մութն ընկնել. արեգակն արդէն ծածկուել էր հորիզոնի յետևը։ Մշակները դադարեցին իրանց գործերից, ցած դրին գերանդիները և, խաչակնքելով, գոհացան Աստուծուց։ Մի քանի ըոպէից յետոյ բանուորները, գերանդիներն ուսներին, ուրախ-ուրախ ճանապարհ ընկան դէպի գիւղը։ Փոքր տղաները, խմբեր կազմած, գնում էին առաջից. նրանցից մի քանիսը սրինգ էին ածում, միւսները պարելով հետևում էի նրանց և երգում.

«Մաստիկ շոգ է. ցորեն, դարի հասել են.
Հնձողները խոտը քաղել՝ դիզել են.
Բոլոր ծառեր ծածկուել են տերևով,
Պտուղները «ճիթ» են անում ժպտալով։
Հո՛-հո՛-հո՛,—ամառ է.
Արևը խիստ կը վառէ»...

Ես ու քոյրերս էլ խառնուեցինք այդ երգող խումբի հետ և ամենևին չիմացանք, թէ ինչպէս տուն հասանք։

112. ՀՈԻՆՉ

Ահա բանուորներն շարէ-շար կանգնած,
Մանգաղը ձեռքին, գոգնոցը կապած,
Մինչև գոտկատեղ բարձրացող արտում,
Ծպիտն երեսին, ցորեն են հնձում։

Ընդարձակ դաշտը, որ ամիսուկէս
Մեղմ քամու դիմաց, կապոյտ ծովի պէս,
Ճկուում-թեքուում էր ու հէրանց գնում,
Նորից յետ դառնում, իւր տեղն էր բռնում,

Այժմ բաց-դեղին ոսկու գոյն առած,
Տիրոջ օրհնութեամբ հասկերը լցրած,
Արևի դիմաց փայլում է, խաղում,
Ամբողջ հովիտը հուր ու ծով շինում։

Կարծես հրեշտակը Տիրոջ հրամանով
Ծիծաղ է սրփռել իւր առատ ձեռքով.
Ուրախ ու քրքիջ, խինդ ու բերկրութիւն
Դաշտը բռնած է, կ'ասես, օրն-ի-բուն։

Ահա բանուորներն շարէ-շար կանգնած,
Մանգաղը ձեռքին, գոգնոցը կապած,
Հնձում են ցորենն ու խուրձեր կապում,
Կապած խուրձերից տասնեակներ կազմում։

113. ԹԱԺԱՑ ՀԱՑ

Կիւրակէի արևը ծածկուեց անտառի յետևը։ Միւս առաւօտ դիւղացին իւր որդոց հետ դուրս գնաց դաշտը

և ուրախ-ուրախ նայեց մարգագետիններին ու արտերին։ Մարգագետիններում կանգնած էին մեծամեծ խոտի դէզեր. իսկ արտերում դեռ տատանուում էին հասած ցորենի հասկերը։ Դիւղացին խաչակնքեց և ասաց. «Օրհնենք Աստուծուն, որդիք. այս տարի մեր տաւարը խոտ կ'ունենայ և մենք էլ հաց»։ Դիւղացին պոկեց մէկ հասկ, տրորեց իւր ափի մէջ, նայեց և տեսաւ որ հատիկները մգացել են. յետոյ ատամի տակ փորձեց և տեսաւ որ տրաքում են։ «Ո՛րդիք, ժամանակ է հնձելու. ձեր մայրը երէկ ամբարի վերջին ալիւրը մաղեց»։

Միւս օրը՝ թէ մեծ և թէ փոքր, բոլորը դուրս թափուեցին դէպի արտերը։ Խուրձերը արագութեամբ շարուեցին միմեանց յետևից. իսկ երեկոյեան արդէն բարձր տասնեակներ և երեսնեակներ կարգով կանգնած էին արտումը։

Դեռ հունձը չէր վերջացել, որ կամն սկսեց պտրտել կալի վրայ։ Հայրը մի բեռը ցորեն տարաւ ջրաղաց և այնտեղից ճերմակ ալիւր բերաւ։ Մայրը խաշ ճարեց, խմոր հունցեց. իսկ միւս օրը մանուկներն արդէն ուտում էին նոր ցորենից պատրաստած թաժայ հացը։

114. ՀԱՏԻԿ

Լոյսը բացւում է, շուտ արտը գնամ,
Պատռեմ սուր խոփով ես կուրծքը հողի,
Իմ սիրուն հատիկ, քեզ նորան պահ տամ,
Մինչև օրերը ամրան արևի։

Թաղեմ քեզ, հատիկ, և դարդս քեզ հետ.
Թէ Աստուած ուզեց, դու կանաչեցիր,

Թող դարդրս մեռնի գետնի տակ անհետ.
Դու, ինձ մխիթար, կրկին տուն դարձիր։

Եւ ջերմ աղօթքով Տիրամօր առջև
Ես մոմ կըվառեմ, ես խունկ կը ծխեմ,
Որ քեզ պարգևէ մի առատ անձրև,
Որ քեզ միշտ սիրով նայէ խընդաղէմ։

Բայց թէ այդ շնորհին, մեղքերիս համար,
Արժանի չլինիմ, ծով կը դարձընեմ
Ես տաք քրտինքը ճակտիս արևառ,
Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ չթողնեմ։

Ծլիր, կանաչիր, ոսկէ սաւանով
Ծածկիր իմ արտը ողջ ալէծածան,
Նոր այն ժամանակ անուշ շըշիւնով
Տուր ջարդուած սրտիս մի քուն հանգստեան։

115. ՄԱՆԿԱԿԱՆ ՑԻԶՈՂՈՒԹԻՒՆԻՑ

Օգոստոս

Շատ ժամանակ է՝ ես իմ յիշատակարանումս ոչինչ չեմ գրել. ամբողջ ամառ ես դրա համար միջոց չունէի։ Այժմ մենք էլ այնքան չենք խաղում, որովհետև շուտ-շուտ անձրևում է և աշնան հոտ է գալիս։

Այսօր, Աստուածածնի վերափոխման տօնին, մեծ ուրախութեամբ եկեղեցի են տանում այգիների և արտերի պտուղները։ Աստուածածնին պտուղներն օրհնում են։ Գիւղական փոքրիկ եկեղեցին լիքն է մարդկանցով։ Բարի գիւղացին ջերմեռանդութիամբ վեր է առնում մի փոքրիկ

խաղողի ճիւռ և մի բուռն ցորեն։ Խաղողը նա ուտում է, պասը լուծում, իսկ ցորենը տանում է, իւր սերմացուի հետ խառնում։ Հայրս և մայրս այսօրուանից սկսում են պտուղները ուտել. իսկ մենք վաղուց լուծել ենք պտղապասը։

Դաշտերում արդէն շարուած են ցորենի տասնեակները. շուտով գիւղացին կը բերէ նրանց իւր կալը, որ անձրևների տակը չմնան։ Ահա աշխատասէր գիւղացին ջանասիրութեամբ կասում է, իսկ նրա որդին խուրձն է կրում հնձատեղերից։

Խուրձը կրելուց յետոյ նա պարապ չէ մնալու. արեգակի տաքութիւնը պակասում է. երկինքը շուտ-շուտ ամպում և անձրևներ է թափում. գիւղացու ցելերը փափկացել են. շուտով ցանքը կըսկսուի։ Ճանճերն էլ սկսել են զգալի կերպով կծել. երևում է, որ ամառը վերջանում է։

116. ԱՇՈՒՆ

Երեկոյեան վերջալուսին
Ծիծեռնակները չքացան.
Սարեաները խըմբեր կազմած
Մեր կողմերիցը հեռացան։

Ամեն բան հանդարտ քնած է.
Դուրսը խաւար է տիրում.
Զոր տերևը խշխշում է,
Եւ քամին դուռը ծեծում։

ՎԵՐՔ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

(Քերականական վարժութիւններ)

Ա. ԱՌԱՐԿԱՑ

Մարդը հինգ արտաքին զգայարանք ունի՝ տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք եւ շօշափելիք:

ա. Դասատանը մենք տեսնում ենք՝ աշակերտ, վարժապետ, սեղան, աթոռ, նստարաններ, գրասեղաններ, գրատախտակ, քարտատախտակ, լուսամուտներ, դուռը...

Տանը մենք կարող ենք տեսնել՝ հայր, մայր, եղբայր, քոյր, սենեակներ, իսկ սենեակների մէջը...

բ. Երբ անձրեւ է գալիս, մենք լսում ենք՝ որոտումն, շառաչիւն, գոչիւն. եկեղեցում—դպիրների երգեցողութիւն, քահանաների ընթերցանութիւն, զանգակի հնչիւնը. դաշտումը—սոխակի դայլայլիկը, թռչունների ծլվլոցը. փողոցում—մարդկանց ձայնը, խօսակցութիւնը, աղաղակը, երգը, կռիւը...

գ. Ճաշակելով մենք կարող ենք ճանաչել՝ աղը, շիրը, շաքարը, գինին, քացախը ջուրը, թէյը, սուրճը, մածունը...

դ. Հոտոտելով ճանաչում ենք՝ վարդը, մեխակը, ռեհանը, շուշանը, մանուշակը, խունկը...

ե. Շօշափելով ճանաչում ենք՝ գնտակը, բամբակը, փետուրը, բուրդը, ձիւնը, հացը...

§ 1. Հինգ զգայարանքի միջնորդութեամբ ճանաչած *բառերը* (իրերը) կոչւում են *առարկայ*:—Աշակերտ, հայր, քոյր, երգ, շաքար, բամբակ, վարդ,—առարկաներ են:

Վարժութիւն 1. Ի՞նչ առարկաներ ենք տեսնում եկեղեցում,

դաշտում, անտառում, փողոցում, գետի մօտ, գետի մէջ, արտերում, գոմերում:

Ի՞նչ առարկաներ են շինւում փայտից, երկաթից, կաւից, պղնձից, ապակուց:

Ի՞նչ առարկաներ ենք ուտում: Ի՞նչ ենք խմում: Ի՞նչ ենք հագնում:—Բերանացի:

§ 2. Կան առարկաներ, որոնք մի քանի մասից են բաղկացած:

2. Ո՞րոնք են սեղանի, լուսամուտի, ծառի, կովի, հաւի մասերը: Ի՞նչ մասեր ունի գլուխը, իրանը, ոտները, ձեռքերը:—Բերանացի:

§ 3. Մարդս առարկաներին ջոկ-ջոկ *անուններ* է տալիս. ամեն առարկայ իւր անունն ունի: Առարկայի մասերն էլ ջոկ-ջոկ անուններ ունին:

Մարդս այն ժամանակն է առարկայի անունը տալիս, երբ-որ իւր *տեսածի* և *ճանաչածի* մասին ուրիշներին մի բան ուզում է ասել:

Առարկան **տեսնում և զննում ենք մեր հինգ զգայարանքներով, իսկ *անունը* չենք կարող տեսնել և զննել. նրան միայն լսում ենք և հասկանում: Առարկաների անունները մեր տեսողութեանը ենթարկելու համար՝ նրանց *գրում* ենք, այսինքն տառերով նշանակում ենք:**

3. Վերևի երկու վարժութիւնների պատասխանները ներկայացրէք գրաւոր՝ առաջ ամբողջ առարկաների անունները գրեցէք, յետոյ նրանց մասերի անունները:

Բ. ԾՆՈՂԻՒՐ ԵՒ ԸՆԾՈՒՆՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐ

ա. Ոչխար, շուն, կատու, ձի, հաւ, կով, գոմէշ, աշակերտ, քահանայ:

բ. Սեղան, քար, աթոռ, փայտ, կերակուր, այգի, գիրք, եկեղեցի:

§ 4. Առաջին տողի մէջ նշանակած բառերը կենդանի առարկաների անուններ են. այդ առարկաները ազատ

կարող են մի տեղից միւս տեղ անցնել, իրանք իրանց տեղը փոխել: Դրանք *շնչաւոր* առարկաներ են։

Երկրորդ տողի մէջ նշանակած բառերը *անկենդան* առարկաների անուններ են։ Այդ առարկաներն իրանց կամքով չեն կարող մի տեղից միւս տեղ անցնել, իրանք իրանց տեղը փոխել։ Դրանք *անշունչ* առարկաներ են։

4. Ի՞նչ շնչաւոր առարկաներ էք տեսնում դասատանը, պարտէզումը, այգումը, դաշտումը, ուսումնարանումը, եկեղեցումը։—Բերանացի։

Ի՞նչ անշունչ առարկաներ էք տեսնում դասատանը, պարտէզումը, այգումը, դաշտումը, ուսումնարանումը, եկեղեցումը։—Բերանացի։

5. Հետևեալ բառերից ջոկեցէք և գրեցէք առաջ շնչաւոր առարկաների անունները, յետոյ անշունչներինը։—Կացին, գիւղացի, սրոց, սղոց, դարբին, հովիւ, մուրճ, աղախին, կողմէք, ծառայ, աղաւնի, խոզ, հաւ, հաւաքուն, մեխ, այգի, այգեպան, հաց, հացթուխ, սրահ, գոմ, ձի, կով, եզը, ոչխար, օրօրոց, մանուկ, անկողին, մահճակալ, զգեստ, դերձակ, ասեղ, կօշկակար, կօշիկ, սիսեռ, կաղամբ, համեմ, կարմրախայտ, լոր, մեղու, ճանճ, ծառ, մոծակ, բզէզ, խոտ, հնձող, մանգաղ, ձեռներ, ոտներ, աչքեր, այծ, սագ, բադ, եղջիւր, եղջերու, միս, պանիր, աքաղաղ, նապաստակ...

6. Հետևեալ օրինակներից արտագրեցէք առաջ անշունչ կենդանիների անունները, յետոյ շնչաւորներինը։

Հաւը խօսեցաւ, օրը բացուեցաւ (*գրքիս 22 երեսից—մինչեւ վերջը*)։

Դ. ՄՏՔԻՈՐ ԵՒ ՆԻՒԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ

ա. Աստուած, հոգի, հրեշտակ, ապրուստ, եռանդ, աշխոյժ, աշխատանք, ծուլութիւն, քաջութիւն, սրբութիւն։

բ. Արօր, սեղան, աքաղաղ, մարդ, բաժակ, ալիւր, կաքաւ, կաղամբ, կացին, անտառ, կարագ, գինի։

§ 5. Առաջին սիւնակի մէջ նշանակած առարկաները թէև կան և անուն ունին, բայց մեր հինգ զգայարանքին ենթակայ չեն. դրանց մենք միայն *մտքով* [ենք] ճանաչում։ Դրանք *մտաւոր* առարկաներ են։

Երկրորդ սիւնակի մէջ նշանակած առարկաները *շնչաւոր* և *անշունչ* առարկաներ են. դրանց ճանաչում ենք մեր հինգ զգայարանքի միջնորդութեամբ։ Դրանք կոչւում են նաև *նիւթական* առարկաներ, որովհետև կազմուած են որևէ նիւթից։

7. Հետևեալ խօսքերից ջոկեցէք մտաւոր առարկաները նիւթականից, նիւթականներն էլ երկու խմբի բաժանեցէք՝ շնչաւոր և անշունչ։

Աստուած ստեղծեց մարդուն և տուեց նրան հոգի, միտք և կամք, որ կարողանայ սեպհական խելքով իրան համար ապրուստ ճարել։ Մարդը հնարեց արօրը, երկիրը վարեց, հացահատիկներ ցանեց. կացին հնարեց՝ իւր տան ու վառելիքի համար փայտ կտրատեց. սանձ ու թամբ հնարեց և իրանից ուժեղ կենդանիներին հնազանդեցրեց. միտք բանացրեց և շատ անասուններ, գործիք ու սարք ունեցաւ։ —Բարի մարդը իւր կարողութիւնից աղքատին փող, ծարաւին ջուր, քաղցածին հաց և տկլորին շոր է տալիս։ Աստուծու հրեշտակն օգնում է բարի մարդուն։

Բերանացի և գրաւոր։

Դ. ԸՌԸՐԿԱՑԻ ԹԻՒԸ

ա. Հաց, քար, ծառ, պատ, միս, մոմ, աղ, մաղ, ձեռն, ոտն։

Կացին, սեղան, քորոց, աշակերտ, կերակուր, եկեղեցի, քահանայ, մատանի։

բ. Հաց-եր, քարեր, ծառեր, պատեր, մսեր, մոմեր, աղեր, մաղեր, ձեռներ, ոտներ։

Կացին-ներ, սեղաններ, քորոցներ, աշակերտներ, կերակուրներ, եկեղեցիներ, քահանայք, մատանիք։

§ 6. Առաջին երկու տողի մէջ եղած բառերից ամեն մինը *մի հատիկ* առարկայի անուն է. մի հաց, մի քար, մի կացին, մի եկեղեցի։

Երկրորդ երկու տողի մէջ եղած բառերից ամեն մինը *մի քանի միատեսակ* առարկայի անուն է՝ շատ հաց, շատ քար, շատ կացին, շատ եկեղեցի։

Միևնոյն անունը, շատ առարկաներ ցոյց տալիս, վերջիցը ը, ներ կամ ք է առնում։

8. Հետևեալ խօսքերի մէջ մի առարկայի անունը ջոկեցէք շատից։ Հայրս գնաց փողոց և գնեց միս, հացեր, հաւեր, բաղ և հընդկահաւեր։ Աշակերտները կաւիճ գնեցին և գրատախտակի վրայ դասը գրեցին։ Դիւղացիք արտերը վարեցին։ Քահանայք եկեղեցում ժամ ասացին։ Դաշտում արածում էին կովեր, եղներ, այծեր, ոչխարներ և ուրիշ շատ կենդանիք։ Դարբինը շինում է կացին, բահ, խոփ, մանգաղ, ուրագ և ուրիշ բաներ։ Ջուլհակը շալ գործեց։ Բրուտը շինեց կժեր, սրուակներ, գաւաթներ։ Հաւը ձու է ածում։ Կովը կաթն է տալիս։ Աշակերտը գնեց մատիտ, քանոն, գրիչ, թանաքաման և գրչաման։ Հայկը պայուսակ ունի։ Արամը կարկին չունի։ Բոլոր աշակերտները քանոններ ունին։ Ոչ մի աշակերտ տողացանց չունի։

Բերանացի և գրաւոր։

9. Բոլոր ջոկած առարկաները փոփոխեցէք՝ մէկը շատի դարձրէք, շատը մէկի, հետևեալ կարգով՝ հայրս—հայրերս, փողոց—փողոցներ, միս—մսեր, հացեր—հաց և այլն։

Ե. ԱՌԱՐԿԱՑԻ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆԸ

ա. Կարմիր խնձոր, սպիտակ շաքար, թթու քացախ, սև թանաք, կապոյտ ծաղիկ։

բ. Ոսկէ մատանի, քարէ եկեղեցի, արաբական ձի, հիւսիսային եղջերու, առաւօտեան հով։

§ 7. Առաջին և երկրորդ տողերի մէջ նշանակած բառերը՝—կարմիր, սպիտակ, արաբական, հիւսիսային և այլն, ոչ առարկաների անուններ են և ոչ նրանց մասերի. նրանք գրուած են առարկաների համար և ցոյց են տալիս նրանց *որպիսութիւնը* կամ *յատկութիւնը*։

§ 8. Մարդս իւր զգայարանքների միջոցով ոչ միայն առարկաներն է ճանաչում, այլև նրանց *որպիսութիւնը* (թէ առարկան *ինչպիսի է*)։

Որպիսութիւնն առանց առարկայի չի կարող լինել։ Որպիսութիւնն էլ, առարկայի պէս, իւր *անունն* ունի։

10. Հետևեալ օրինակներից ջոկեցէք որպիսութիւնների անունները։—Սև կուպր, կարմիր գինի, կանաչ խոտ, պայծառ արև, փայլուն աստղ, կապոյտ երկնակամար, փայտեայ կլոր գաւաթ. անտառային թթու խնձոր. դաշտային խորամանկ աղուէս. փոքրիկ երկչոտ նապաստակ. թունաւոր սև օձ. եղջերաւոր խոշոր անասուն. հարաւային տաք քամի. հիւսիսային սառնաբեր փոթորիկ. պողպատէ սուր մանգաղ. քարէ լայն ուղի. ծուռ նեղլիկ շաւիղ. հին խոր ջրհոր. տերևաշատ խիտ անտառ. քառակուսի գեղեցիկ սեղան. մազէ երկար թոկ. բրդէ փափուկ գուլպայ. արծաթէ փայլուն դրամ. պարսկական թանկագին գորգ։

11. Որպիսութիւն ցոյց տուող անունների տակը գիծ քաշեցէք։—Պայծառ երկնակամարի վրայ գորշագոյն ամպեր երևացին։ Ամպերը թանձրացան և սև կեղևով ծածկեցին կապոյտ երկինքը։ Երեկոյեան կենսատու անձրևը ջրեց ծարաւ երկիրը։ Դաշտային թառամած բոյսերը զուարթացան. նրանք իրանց բարակ արմատներով թաց հողից դուրս ծծեցին սննդարար հիւթը։ Ծառերի փայլուն տերևներն ագահաբար ներս ծծեցին խոնաւ օդը։ Ցորենի և գարու արտերն իրանց քստալի հասկերի նիհար հատիկները լցրին, կշտացրին։

12. Հետևեալ առարկաների մօտ դրէք իրանց պատշաճ որպիսութիւնների անունները։—Ամպ, գունդ, շուն, թիթեռ, խնձոր, ջուր, կապիկ, ապակի, քամի, գրիչ, անիւ, խուրձ, խոտ, արև, ոսկի, արծաթ, ածուխ, քար, բամբակ, հաց։

§ 9. Մի առարկայ կարող է նաև մի քանի որպիսութիւն ունենալ՝ *կանաչ, տերեւախիտ, բազմաճիւղ, ճկուն, ստուերաշատ* ուռենի։

13. Ինչ յատկութիւններ կարող են ունենալ հետևեալ առարկաները՝ ճանապարհ, տուն, գարուն, ամառ, աշուն, ձմեռ, ջուր, շաքար, ապակի։—Բերանացի և գրաւոր։

§ 10. Մի քանի առարկաներ կարող են միևնոյն որպիսութիւնն ունենալ՝ *վնասակար գայլ, վնասակար մարդ, վնասակար գործ. բարձր ձայն, բարձր ծառ, բարձր մարդ, բարձր արժանաւորութիւն*։

14. Հետևեալ որպիսութիւններն ինչ առարկաների կարելի է յատկացնել՝ կարմիր, սպիտակ, սև, կանաչ, կապոյտ, քաղցր, դառը,

սուր, պինդ, փափուկ, կլոր, հիւթաւոր, թափանցիկ, ծանր, թեթև, մաքուր։—Բերանացի և գրաւոր։

15. Հետևեալ առարկաներից ամեն մինը ինչ յատկութիւններ պիտի ունենայ անպատճառ՝ սոխը, սխտորը, արծաթը, ոսկին, պղինձը, շուշանը, մանուշակը, զանգակը, գետի ջուրը, ծովի ջուրը, բամբակը, արճիճը, մեղրը, քացախը։

16. Որպիսութիւն ցոյց տուող բառերի տակը գիծ քաշեցէք։—Անձրևային աշուն։ Աշնանային անձրև։ Փոթորկալի ծով։ Ծովային փոթորիկ։ Դաշտային ծաղիկ։ Ծաղկաւէտ դաշտ։ Անձրևոտ ամառ։ Ամբարային անձրև։ Մարդկային արժանաւորութիւն։ Արժանաւոր մարդ։ Կենդանական բնութիւն։ Բնական կենդանի։

17. Որպիսութեանը նայելով՝ ճանաչեցէք առարկաները։—Հեղուկ, հոսանուտ, թափանցիկ, անհամ։ Կլոր, ամուր, սպիտակ, երկնքից վայր ընկնող։ Կլորակ, դեղին, աշխարհի սիրելին։ Դեղեցիկ, անուշահոտ, կարմիր, փշոտ։ Կլոր, կարմրաթշիկ, քաղցրահամ։ Պողպատէ, սուր, շողշողուն, կարևոր։

Զ. ՈՐՊԻՍՈՒԹԵԱՆ ԹԻՒԸ

ա. Կարմիր ինձորներ, երկար քանոններ, սպիտակ թղթեր, կանաչ յուլունքներ, գիւղացի մարդիկ, դաշտեցի բնակիչներ։

բ. Կարմիր-ները, երկարները, սպիտակները, կանաչները, գիւղացի-ք, դաշտեցի-ք։

§ 11. Որպիսութիւն ցոյց տուող բառերը թիւ չունին, երբ առարկայի մօտ են դրուած. բայց եթէ մենակ են, կարող են առարկաների անուան պէս ելնել, ներ, ք տառերն առնել իրանց վերջում և շատի համար գործ ածուել։

18. Հետևեալ օրինակների մէջ գտէք մենակ գործածուած որպիսութիւն ցոյց տուող բառերը և տակը գիծ քաշեցէք։—Հիւանդները նախանձում են առողջներին։ Հարուստները պարտաւոր են օգնել աղքատներին։ Դիտունները տգէտներին սովորեցնում են։ Օրէնքը պատժում է չարերին։ Քրիստոսը ներում էր մեղաւորներին, բժշկում էր կաղերին, կոյրերին, անդամալոյծներին, բորոտներին և դիւահարներին։ Աստուած խնամում է որբերին։ Կաղն ու կոյրը մի սրընթաց առուակով պէտք է անցկենային։ Վարդերի մէջ ես սիրում եմ կարմիր-

ները։ Քաղաքացի մարդիկ թէև շատ անգամ ծաղրում են գիւղացիներին, բայց եթէ գիւղացի մարդիկը չլինին, քաղաքացիք, հաւատա՛, սոված կը կոտորուին։

Է. ԱՌԱՐԿԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Ձունը հալում է. ձունը կծում է. ձունը փախչում է։ Թռչունը թռչում է. թռչունը խաղում է. թռչունը երգում է, քուն է չինում, ձագ է հանում, մժեղներ է բռնում, ճուտերին կերակրում։

§ 12. Նշանակած բառերը՝ *հալում է, թռչում է, երգում է*... ոչ առարկաների անուններ են և ոչ որպիսութեան. նրանք միայն ցոյց են տալիս, թէ առարկան ինչ է անում, ինչ է գործում։ Դրանք *գործողութիւն* ցոյց տուող բառեր են։

Առարկայի գործողութիւնն էլ մարդս ճանաչում է իւր հինգ զգայարանքների միջնորդութեամբ։

§ 13. Գործողութիւնն էլ, որպիսութեան պէս, առարկայի համար է դրուում։ Որպիսութիւնը ցոյց է տալիս թէ առարկան ինչպիսի է, իսկ գործողութիւնը՝ թէ նա *ինչ է անում*։

§ 14. Ինչպէս որ առարկաներն ու իրանց որպիսութիւնները, այնպէս էլ առարկաների գործողութիւնները ջոկ-ջոկ բառերով ենք նշանակում։

19. Հետևեալ խօսքերի մէջ գտէք գործողութիւն ցոյց տուող բառերը և նրանց տակը գիծ քաշեցէք։—Որսորդն սպանեց մի գայլ։ Գայլը պատառել էր հովուի ոչխարները։ Կարապետը տաւատները վեր է կենում, շորերը հագնում, երեսը լուանում, աղօթք է անում և առաւօտուայ հացն ուտում ու գնում դաշտը։ Մանր տղաներն ուսումնարան են գնում։ Ձին բեռն է կրում։ Օձը սողում է։ Ձուկը լողում է։ Թռչունը թռչում է։ Արծիւը սլանում է օդի մէջ։ Գետը հոսում է։ Քամին փչում է։ Ամպը որոտում է։

20. Արտագրեցէք առաջ գործողութիւն ցոյց տուող բառերը, յե-

տոյ առարկաների անունները։—Գիւղացին մաքրում է վարելահողը, վարում է օրավարը, սերմում է, ցաքանում և Աստուած է կանչում, որ ժամանակին տայ արև, անձրև և օրհնէ իւր վաստակը։ Գիւղացին գնում է պարտէզ, հողը մշակում, մարգեր է շինում, բանջարներ ցանում, կարտոփիլ սերմում և պարտէզի չորս կողմն էլ ցանկով պատում, որ անասուններ չմտնեն, իւր աշխատանքը չուտեն, չարորեն։ Գիւղացին էլի շատ բան է շինում, շատ գործեր գործում։

21. Ամեն մի առարկայի մօտ դրէք իրան յարմարաւոր գործողութիւնը և աւելացրէք թէ առարկան ինչ բան է շինում և ինչից։—Հացթուխը թխում է հացը ալիւրից։ Քոյրս կարում է շապիկներ քաթանից։ Դարբինը շինում է պայտեր... կօշկակարը... պղընձագործը... ոսկերիչը... նկարիչը... խոհարարը... ջաղացպանը... դերձակը... հիւսնը... ջուլհակը... որմնադիրը... ճարտարապետը... հնձողը... ձկնորսը...

§ 15. *Մի առարկայ կարող է մի քանի տարբեր գործողութիւններ կատարել։—Գիւղացին վերցրեց մանդաղը, դուրս գնաց դաշտը և ձիու համար խոտ հնձեց։ Մանուկները ժողովեցին իրանց գրքերը, դասեցին պայուսակի մէջ և գնացին վարժատուն։*

22. Հետևեալ առարկաներից ամեն մինին տուէք մի քանի յարմարաւոր գործողութիւններ։—Ձին, կովը, ոչխարը, հաւը, աքաղաղը, կատուն, շունը, գայլը, ագռաւը, ծիծեռնակը, սոխակը, կկուն, մեղուն, խոզը, աղաւնին, գորտը, բադը, թռչունը, ձուկը, օձը, մարդը... —Բերանացի և գրաւոր։

§ 16. *Միևնոյն գործողութիւնը կարող է դանազան առարկաների ձեռքով կատարուիլ։—Ձուկը լողում է, գորտը լողում է, բադը լողում է, մարդն էլ լողում է։*

23. Ի՞նչ առարկաների կարող ենք յատկացնել հետևեալ գործողութիւններից ամեն մինը։—Լոյս է տալիս (ճրագը լոյս է տալիս, կրակը լոյս է տալիս, լուսինը լոյս է տալիս, աստղերը լոյս են տալիս, արևը լոյս է տալիս...). արթնանում է. թռչում է. բառաչում է. մայում է. հանգչում է. որոտում է. դուրս է գալիս. մայր է մանում. վառւում է. վայր է ընկնում. փայլում է. ծաղկում է. աճում է. մեռնում է։

24. Հետևեալ բառերից ո՞րոնք են ցոյց տալիս առարկայ, գործողութիւն և որպիսութիւն։—Մշակ, մշակել, մշակող, մշակութիւն։ Կոտրեցի, կոտրած, կոտր։ Փշրանք, փշրուն, փշրում էր։ Կերակուր, կերած, կերել եմ։ Կըգրեմ, գիրք, գրութիւն, գրիչ, գրող։ Խմիչք, խմեցի, խմած։ Խելք, խելօք, խելօքացաւ։ Խաղ, խաղում է, խաղասէր, խաղալիք։ Ծամում է, ծամ, ծամելու։ Կար, կարած, կարող, կարկատան, կարեց։ Կըհնձէ, հունձ, հնձող, հնձած։ Ձայն, ձայնաւոր, ձայնել, անձայն։ Ճանապարհ, ճանապարհել, ճանապարհորդ, ճանապարհորդութիւն։ Մանուկ, մանկական, մանկանալ։ Ցիշատակ, յիշատակել, յիշատակող, յիշատակարան։ Ներել, ներողամիտ, ներողութիւն։ Ընորհ, շնորել, շնորհած, շնորհաւորէք, շնորհաւորեցիր, շնորհաւորող։ Չար, չարանալ, չարութիւն, չարչարանք, չարչարուել։ Սուր, սրոց, սրել։ Ոյժ, ուժեղ, ուժեղանալ։

Ը. ԴՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԹԻՒԸ

ա. Ես կարդում եմ։ Դու գրեցիր։ Հնձողը հնձեց։

բ. Մենք կարդում ենք։ Դուք գրեցիք։ Հնձողները հնձեցին։

§ 17. *Առաջին տողի մէջ գործ կատարող առարկաները մէկ-մէկ են. նրանց կատարած գործողութիւնն էլ մէկ է—մի անգամ է կատարւում։ Երկրորդ տողի մէջ գործողները շատ են. նրանց կատարած գործողութիւնն էլ շատ է—մի քանի անգամ է կատարւում։ Գործողութիւնն էլ՝ առարկայի ու որպիսութեան պէս, կարող է մէկ և շատ ցոյց տալ։ Գործողութիւնը շատացնելիս՝ վերջից աւելացնում ենք ն և ք տառերը մենակ կամ ուրիշ տառերի հետ։*

25. Հետևեալ օրինակները փոփոխեցէք այնպէս, որ առարկաներն ու գործողութիւնները մէկից շատ ցոյց տան։—(Աշակերտը կարդում է իւր դասը։ (Աշակերտները կարդում են իրանց դասերը)։ Կովն արածում է դաշտումը։ Թռչունը երգում է իւր քաղցրահնչիւն երգը։ Որմնադիրը պատում է պատը։ Վարժապետը սովորեցրեց աշակերտին։ Աշակերտը լսեց վարժապետի ասածը։ Քահանան մկրտեց մանկանը։ Մանուկը մեծացաւ, ուժեղացաւ և իւր հօրն օգնող եղաւ։ Ամառը եա կըգնամ գիւղը. աշնանը նորից կըվերադառնամ։

26. Հետևեալ օրինակների մէջ գործողութիւնները փոփոխեցէք՝ շատը մէկ շինեցէք։—Հացը թխում են տանտիկինները կամ հացթուխները։ (Հացը թխում է տանտիկինը և այլն)։ Հացը թխում են խմորից։ Խմորը հունցում են ալիւրից, ջրից և խաշից։ Ալիւրն աղում են ջաղացում ցորենից։ Հացահատիկները հասնում են արտերում, հասկերի մէջ։ Դիւղացիք դաշտը մշակում են. նրանք հերկում են հողը—ցել են անում, յետոյ ցելումը սերմում են ցորեն և ուրիշ հացահատիկներ։

§ 18. *Մեր սովորած բառերից մի քանիսը առարկայի անուն են, միւսները որպիսութեան, իսկ ոմանք գործողութեան։*

27. Հետևեալ խօսքերը վերլուծեցէք և ասացէք իւրաքանչիւր բառի նշանակութիւնը։—Փայլուն արևը մայր մտաւ (փ ա յ լ ո ւ ն՝ ցոյց է տալիս արևի որպիսութիւնը. ա ր և ը՝ անշունչ և նիւթական առարկայի անուն է. մ ա յ ր մ տ ա՝ ցոյց է տալիս արևի գործողութիւնը)։ Լուսինը վաղուց գնաց, թագկացաւ։ Փոքրիկ աստղերը ամպի տակ մտան։ Բարեպաշտ մարդիկ ժամ գնացին։ Ծոյլ մանուկները տանը մնացին։ Աշխատասէր աշակերտները դասերը սովորում են։ Աղօտ լուսինը լուսաւորում է քնած երկիրը։ Պայծառ աստղերը փայլում են պարզ երկնքի վրայ։ Սև-սև ամպերը ծածկեցին կապոյտ երկնքի երեսը։ Դիշերը մթնեց։ Վայրենի գազանները դարթեցին։ Շատ մարդիկ սիրում են խաւար գիշերները։

Բ

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ. ԲԱՌ, ՎԱՆԿ ԵՒ ՏԱՌ

§ 19. *Առարկային, նրա որպիսութեանն ու գործողութեանը մարդս առանձին-առանձին անուններ է տալիս։ Առարկայի, գործողութեան և որպիսութեան անունները բառեր են։*

ա. Հաց, ծառ, քար, ջուր, ցուրտ, սև, լաւ, մոմ, միս, շէկ։

բ. Բա-ժակ, դարի, ցորեն, բարակ, հասակ, սիրուն։

գ. Բա-րե-կամ, աշակերտ, աշխատել, աշխատութիւն։

§ 20. *Առաջին տողի մէջ նշանակած բառերը կարդացւում են միանգամից. երկրորդ տողի մէջ նշանակուածները երկու անգամից, իսկ երրորդ տողի մէջ նշանակուածները երեք անգամից։*

Բառի այն մասը, որ արտասանւում է միանգամից, վանկ է կոչւում։

§ 21. *Վանկերի թուին նայելով բառերը լինում են՝ միավանկ, երկավանկ և բազմավանկ։*

§ 22. *Ամենայն բառ մի կամ մի քանի վանկից է շինուած, իսկ ամենայն վանկ շինուած է մի կամ մի քանի հնչիւններից։*

§ 23. *Գրելու ժամանակ հնչիւնների տեղակ գործ ենք ածում առանձին նշաններ, որոնք տառ կամ գիր են կոչւում։*

§ 24. *Կան տառեր, որոնք հեշտ են արտասանւում և, առանց ուրիշ տառերի օգնութեան, պարզ հնչում են. բայց կան և այնպիսի տառեր, որոնք միայնակ դժուար են հնչում և հեշտ հնչուող տառերի օգնութեամբ են միայն արտասանւում։—Հեշտ հնչուող տառերն են՝ ա, ե, է, ը, ի, ո, օ, ու։ Սրանք ձայնաւոր են կոչւում։ Մնացած տառերը կոչւում են բաղաձայն։*

§ 25. *Առանց ձայնաւոր տառի վանկ չի լինիլ։ Առանց բաղաձայն տառի վանկ կարող է լինել։*

§ 26. *Գրելու ժամանակ, բառի մի մասը մէկ տողից միւս տող անցկացնելիս, պէտք է ամբողջ վանկ կամ վանկեր անցկացնել։*

Ա-սա, ա-ղա, ա-ժան, գի-նի, բա-րի, դա-նակ, եղան։

Ա-ղե-գակ, ա-ղե-գայ, ժա-մա-նակ, ժա-մա-ցոյց։

§ 27. *Կանոնաւոր կարդալու և անսխալ գրելու համար*

պէտք է գիտենալ, թէ բառերն ինչպէս են վանկւում։ Վանկելու հիմնական կանոնն այն է՝ որ բաղաձայն տառը, եթէ մենակ է, կպչում է իրանից յետոյ եկող ձայնաւորին։

28. Վերոյիշեալ կանոնին համաձայն վանկեցէք հետևեալ բառերը. կերայ, տեսայ, եկայ, բարակ, գաթայ, թաւայ, արեգակ, Արուսեակ, քահանայ, յիսուն, Ցիսուս, գարի, ցորեն, ցերեկ, ցուցակ, կարաս, կացին, գաւաթ, գինի, Գարեգին։

Ար-ճիճ, աղ-քատ, աղ-ջիկ, ար-դար, եղ-նիկ։ Ըն-տե-ղէն, ընտ-ու-թիւն, երկ-ա-չափ։

§ 28. Երբ բառի մէջ մի քանի բաղաձայններ կան, միայն վերջին բաղաձայնն է կպչում իրանից յետոյ եղած ձայնաւորին, իսկ միւսը կամ միւսները մնում են նախորդ ձայնաւորին։

29. Վանկեցէք հետևեալ բառերը՝ աղբիւր, եղջիւր, երկինք, երդիկ, երկնաւոր, երկրագործ, իշխանաւոր, ինքնասէր, որկրամոլ, որդեսէր, սրբակեաց, ընկուզ, ընտանի, ընտեղէն, թարգմանել, մարդկութիւն, մաքրասէր, կարգաւոր, ընտրութիւն։

Բը-ժիշկ, բնակ, բլիթ, դդում, դժոխք, թթու, թզուկ, բբրդել, խըն-դիր, զըն-դան. խբրտ-նել, ճընճ-ղուկ։

§ 29. Եթէ բառի սկզբում մի քանի բաղաձայն տառեր կան, վանկելու ժամանակ առաջին բաղաձայնից յետոյ դրւում է ը ձայնաւորը, իսկ միւս բաղաձայնները վարւում են նախընթաց կանոնին համեմատ։

30. Վանկեցէք հետևեալ բառերը՝ բռնել, բրդել, գրիչ, գնտակ, գլուխ, գդակ, դրդել, տրտմել, դդալ, զննել, զրկել, թթու, թզուկ, թռչուն, թշնամի, ժպիտ, ժլատ, ժժմակ, լռել, լրտես, խխունջ, խնձոր, խնդիր, խրտնել, ծնունդ, ծնկաչոք, ծղրիդ, կթել, կրկնել, կռթնել, հնդիկ, հնդկահաւ, ձնծաղիկ։

§ 30. Բառի վերջում բաղաձայն տառերը միշտ կըց-

ւում են իրանցից առաջ եղող ձայնաւորին՝ մէկ լինին, թէ մի քանի. միայն ն և ր տառերը հարևան բաղաձայնի հետ առանձին վանկ են կազմում (ծունը—ծունրը)։

31. Վանկեցէք հետևեալ բառերը և, ուր որ պէտք է, ը աւելացրէք.—Սանդ (գործիք), սանր. ծունկ, ծունր. ծածկ, ծանր. մարդ, մանր. կուրծ, կարծր, բարձր. ոտք, ոտն. ձեռք, ձեռն. բերք, բեռն. կառք, դառն, դարն, սառն, դուռն, նուռն, բուռն, ծուռն, ամառն, ձմեռն. մեղր, կայսր, եղր, ծաղր։

Բըժիշկ, դրդում, զընդան, թըզուկ, ժըժմակ, լըրտես, խընդիր ծընունդ։

Սկունդ—ըսկունդ. սպաս—ըսպաս. զրաղմունք—ըզբաղմունք. շտապ—ըշտապ. զդալ—ըզդալ։

Առաջին տողի մէջ բաղաձայն տառը վանկուելու համար իրանից յետոյ առել է ը ձայնաւորը, իսկ երկրորդ տողի մէջ բաղաձայնը իրանից առաջ է առել այդ ձայնաւորը։

§ 31. ս բաղաձայնը թ, կ, պ, տ, ք տառերի հետ, զ բաղաձայնը ը, գ տառերի հետ և շ բաղաձայնը տ տառի հետ հանդիպելիս, բառի սկզբում, հնչւում են որպէս ամփոփ ըս, ըզ, ըշ։

32. Աւելացրէք ը տառը, ուր որ հարկաւոր էք համարում։—Սթափուել, սկեսուր, սկայ, սկունդ, սկուտղ, սպաս, սպունդ, սպի, սպիտակ, սպեղանի, սպասել, ստամոքս, ստէպ, ստոր, ստոյգ, ստանալ, ստինք, սփիւռ, սփոփանք, սփածանելի, սքօղել, սքանչելի, սքանչանալ։—Զբօսանք, զբաղմունք, զգալի, զգեստ, զգոյշ, զգօն, զգայարանք, շտապել, շտեմարան։

Սարդ (միջատ)—սարդ (այդ սարը)։—Ձին երկու ոտի վրայ ծառս եղաւ (ծառանալ)։—Ծառս արմատից կտրուեց (այս ծառը)։—Տունն, բունն (այն տունը)։

§ 32. ս, ղ, ն տառերը, եթէ բառի անանջատ մասը

չեն, այլ՝ որպէս եկամուտ տառեր, աւելացած են բառի վերջում, որ առարկաների դասաւորութիւնը ցոյց տան, իրանց նախորդ բաղաձայնի հետ միշտ մի վանկ են կազմում։

33. Ուր որ յարմար է՝ ը դրէք և վանկ կազմեցէք.—Կարդ—կարդալ։ Կարդ կարիր։ Բարդ—բարդել. մարդ—տղամարդ. մէրդ—մարդ մայրդ. հորթ—հօրդ. կիրթ—գիրդ. սերդ—սէրդ. բանտ—բանտարկել. բանդ չինիր, յետոյ խաղա. մարս—մարսել. մերս—մերսել. մէրս—մարս—մայրս. սարս—սարսել—սարսափ. սարս ձիւնապատ, ամպերս մթին, անտառներս խիտ։

§ 33. *Կ* տառը դրւում է բառի սկզբում և, եթէ մօտի տառը բաղաձայն է, այն ժամանակ *Կ* առնում է ը ձայնաւորը և առանձին վանկ է կազմում. իսկ եթէ մօտի տառը ձայնաւոր է, այն ժամանակ առնում է (') նշանը և յաջորդ ձայնաւորի հետ մի վանկ է կազմում՝ կըգրեմ, կ'ասեմ։

§ 34. Հայերէն տառերը դրւում և կարդացւում են հետևեալ կարգով՝ այբ, բեն, գիմ, դա, եչ, զա, է, ըթ, թոյ, ժէ, ինի, լիւն, խէ, ծա, կէն, հոյ, ձա, ղադ, ճէ, մէն, յի, նու, շա, ո, չա, պէ, ջէ, ռա, սէ, վէվ, տիւն, րէ, ցо, ւիւն, փիւր, քէ, օ, ֆէ։

§ 35. Բոլոր տառերը միասին վերցրած՝ կազմում են Հայերէն *այբուբենը*, իսկ այստեղ յառաջ բերած կարգը կոչւում է *այբբենական* կարգ։ Հայերէն այբուբենի տառերը 38 են։

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ Բ. Տ.

ՆԻՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ

Յառաջաբանում յիշուած «Սասունցի Դաւիթը» այս գրքի մէջ չմտաւ. նրան կը զետեղենք «Մայրենի լեզուի» երրորդ տարուայ մէջ, որը շուտով մամուլին ենք տալու։

I ՇՐՋԱՆ՝ Թեթեւ նիւթեր նախնական ընթերցանութեան համար։

1. Այբբենարան 5
2. Կարդալ-գրել* 6
3. Ամեն բան իրան տեղը . . . . . »
4. Ցխուր երեխայ. Գ. Քաթիպայ 7
5. Իմ ուսումնարան գնալը 8
6. Արևին* 9
7. Մրջիւնը և Աղաւնին. . . . . »
8. Աքաղաղն ու հաւը. ժողովրդ. 10
9. Ագռաւը աղաւնետանը. 11
10. Կռունկներ* ժողովրդ. 12
11. Օձի գլուխը և պոչը . . . . . »
12. Հանելուկներ* Z. 13
13. Վարդենին ու փուշը . . . . . »
14. Հանելուկ* Z. 14
15. Լաւ ընկերը . . . . . »
16. Մանուշակ* Գ. Քաթիպայ 15
17. Պառաւն ու հաւը 16
18. Մանկական խաղ* Սարդար. . . . . »

II ՇՐՋԱՆ՝ Տանը եւ Ուսումնարանումը

19. Մեր տունը 19
20. Խրճիթ* 20
21. Մեր դասատունը. 22
22. Հրաւէր դէպի ուսումնարան* . . . . . »
23 Մեր ընտանիքը 23
24. Զաւակների մխիթարանքը* 24
25. Պապը. 26
26. Բարի գործ* Ցով. Թումանեան 27
27. Ինչպէս են շինում տները. 28

28. Տան օրհնութիւնը* Եղեկեան. 29
29. Հացն ուտելով... Թ. Ղուկասեան. 30
30. Դարուն* Գ. Քաթ. 31
31. Այժն իրաւունք չէ. 32
32. Հղօր ճար* Գ. Քաթիպայ . . . . . »
33. Առաւօտեան ճառագայթները. 33
34. Օրօրոցի երգ. Գ. Քաթիպայ 34
35. Կաւիճ 35
36. Թռչնակ* 37
37. Սպունգ 38
38. Գարնան կարապետ* Գ. Քաթիպայ 40
39. Մատիտ. 41
40. Լուսին և Արև* Արարատեան 42
41. Ռետին. 43
42. Երկու քոյր* Պատկանեան. 44
43. Կրակ. 47
44. Դարբին* Կ. Զահնազարեան 48
45. Օդ. 49
46. Քամին և Նաւերը* 50
47. Ուրիշին հոր փորես- 51

III ՇՐՋԱՆ՝ Նիւթեր Կենդանական Աշխարհից

48. Ընիկ. 55
49. Կատու. . . . . »
50. Ձունը և կատուն* Յով. Թումանեան. 56
51. Երկու մուկը 58
52. Դաշտեցի մուկը . . . . . »
53. Ձի. 59
54. Տխուր ձի* 60
55. Կով. 61
56. Կորած հորթ* Աղայեան 62
57. Կենդանիների վէճը. 63
58. Կթել և հարել* Արարատեան. . . . . »
59. Ոչխար 64
60. Գառը գայլի մորթով* 65
61. Խոզ. 66
62. Խոզը կաղնու տակ* . . . . . »
63. Սագեր. 67
64. Աղաւնիներ. 68
65. Ծիծեռնակ. 69
66. Պանդխտի երգը* Ռ. Պատկանեան . . . . . »
67. Կաղամբի թիթեռ 70
68. Ձատիկ. 71

69. Թիթեռ և մանուկ* . . . . . »
70. Հրեղէն ձի 72

IV ՇՐՋԱՆ՝ Նիւթեր Բուսական Աշխարհից

71. Այգի. 80
72. Երկրագործը և ծաղիկը* . . . . . »
73. Պարտէզ. 81
74. Ծաղիկների երգը* 82
75. Երաշտ. 83
76. Գարնանային առաւօտ*. 84
77. Բոյսերի կերակուրը . . . . . »
78. Գարնան փոթորիկ* . . . . . »
79. Ծառերի վէճը 85
80. Ուռենին* 86
81. Ուտելիք և խմելիք . . . . . »
82. Հանելուկ* . . . . . »
83. Փորձանք ու պատուհաս 87
84. Ջրաղաց* 88
85. Վուշ և քաթան. . . . . »
86. Ընտնձած արտ* 90
87. Ջրի ճանապարհորդութիւնը 91
88. Զարմանալի մշակ 93
89. Ցոլակը և Վարդուհին. 95

V ՇՐՋԱՆ՝ Տարուայ չորս եղանակներին

90. Չորս եղբայր* Պատկանեան 99
91. Ալևոր պապի չարիքները 100
92. Ի՞նչ արեց ձմեռը* 102
93. Յունվարի մէկին . . . . . »
94. Նոր տարի* 103
95. Յունվարի հնգին 104
96. Ձիւն* 105
97. Յունվարի 6-ին 106
98. Ակնկալութիւն գարնան* 107
99. Պասի առաջին երկուշաբթին . . . . . »
100. Գարուն* 108
101. Ծախկաղարդ կիւրակի. . . . . »
102. Աւագ հինգշաբթի 110
103. Աւագ ուրբաթ. 111
104. Գարնանային ջրեր* 112
105. Սուրբ Յարութիւն. . . . . »
106. Քրիստոս յարեաւ* X. 115
107. Մեռելոցք. 116

108. Զինականներիի երգը* Պատկանեան. 117
109. Ամարային առաւօտ. 118
110. Ամառ* 119
111. Ամառը խորհարքում 120
112. Հունձ* 122
113. Թաժայ հաց. . . . . »
114. Հատիկ* Յովհաննիսեան 123
115. Մանկ. յիշողութիւնից (օգոստոսին). 124
116. Աշուն*. 125

ՑԱԽԵԼՈՒԱԾ

Քերականական վարժութիւններ

Ա. Առարկայ . . . : 126
Բ. Շնչաւոր և անշունչ առարկաներ 127
Գ. Մտաւոր և նիւթական առարկաներ 128
Դ. Առարկայի թիւը 129
Ե. Առարկայի որպիսութիւնը 130
Զ. Որպիսութեան թիւը. 132
Է. Առարկայի գործողութիւնը 133
Ը. Գործողութեան թիւը. 135

Ուղղագրական վարժութիւններ

Թ. Բառ, վանկ և տառ 136
Ժ. Վանկելու էական կանոնները 137

ЧИР
№ 2359